

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԳԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
2001-2006**

**Կազմեցին՝**

**Շ. Մ. Դոյդոյան, բ.գ.թ  
Գ.Ղ. Հայրապետյան**

**Ինֆորմացիայի ազատության կենտրոն  
Երեւան 2006**



«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրատարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից «Տեղեկատվության ազատությունը որդես համայնֆային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության սրամադրած աջակցությամբ (N 111-G-00-05-00029-00 դրամաւանոռի): Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

- © Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2006թ.
- © Շ. Դոյրոյան, 2006թ.
- © Գ. Հայրապետյան, 2006թ.

## ԲՈՎԱՆԲԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվություն ստանալու իրավունքի դատական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանում.....	5
The Problems of Legal Defense of the Right of Access to Information in Armenia.....	10
ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.....	14
1. ԻԱԿ ընդդեմ Արարատի մարզպետարանի.....	15
2. ԻԱԿ ընդդեմ Ապարանի քաղաքապետարանի.....	26
3. ԻԱԿ ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի.....	36
4. ԻԱԿ ընդդեմ Արմավիրի քաղաքապետարանի.....	43
5. ԻԱԿ ընդդեմ Արմավիրի մարզի Լուկաշին գյուղի գյուղապետարանի.....	51
6. ԻԱԿ ընդդեմ Կոտայքի մարզի Նուռնուս գյուղի գյուղապետարանի.....	57
7. Քաղաքացի Մարտիրոս Կարապետյանն ընդդեմ «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն» պոլիկլինիկա» ՓԲԸ-ի եւ ՀՀ Առողջապահության նախարարության.....	63
8. «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոնն ընդդեմ ՀՀ Բնապահպանության նախարարության.....	72
9. «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոնն ընդդեմ ՀՀ Արդարադատության նախարարության.....	80
10. «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոնն ընդդեմ ՀՀ Ոստիկանության.....	87
11. «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոնը ընդդեմ	

---

<b>ՀՀ ՆԳ նախարարության.....</b>	<b>93</b>
<b>12. Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբն ընդդեմ Գյումրիի պետական ԲՈՒՀ-երի ընդունելության քաղաքային քննական հանձնաժողովի եւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության.....</b>	<b>102</b>
<b>13. Հետաքննող լրագրողների ընկերակցությունն ընդդեմ ՀՀ Մաքսային պետական կոմիտեի.....</b>	<b>113</b>
<b>14. Հետաքննող լրագրողների ընկերակցությունն ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության.....</b>	<b>132</b>
<b>15. Հետաքննող լրագրողների ընկերակցությունն ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի.....</b>	<b>140</b>
<b>16. Քաղաքացի Արտակ Խաչատրյանն ընդդեմ Վանաձորի «Խանդակ» համատիրության.....</b>	<b>154</b>
<b>17. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակն ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի.....</b>	<b>166</b>

## Տեղեկատվություն սահմալու իրավունքի դասական դաժժանության հիմնախնդիրները Հայաստանում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ ՏԱ օրենք) գործում է շուրջ երեք տարի՝ 2003թ. նոյեմբերի 15-ից: Այս ընթացքում քաղաքացիները, հասարակական կազմակերպությունները, լրագրողները հնարավորություն են ունեցել օրենքի միջոցով փնտրել եւ ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը:

Առանց այս իրավունքի բավարար դատական պաշտպանության անհնար է խոսել մարդու մյուս իրավունքների իրականացման, ինչպես նաեւ կառավարման համակարգի հրապարակայնության եւ թափանցիկության մասին: Դատական գործերը հարստացնում են նաեւ օրենքի կիրառման պրակտիկան, որն այնքան անհրաժեշտ է ՏԱ օրենքն ամբողջությամբ կյանքի կոչելու համար:

Դատական համակարգը պետք է ստուգող դեր կատարի գործադիր եւ օրենսդիր մարմինների նկատմամբ, որպեսզի վերջիններս կամայականորեն չզրկեն մարդկանց տեղեկատվություն ստանալու ազատությունից եւ հնարավորությունից կամ տեղեկատվության մատչելիությունը կախման մեջ չդնեն որեւէ մեկի սուբյեկտիվ ցանկությունից: Դատարանները պետք է թերահավատորեն վերաբերվեն տեղեկատվության մատչելիությունը սահմանափակելու՝ պետական մարմինների պահանջներին:

Ինչպես սահմանվում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2002թ.-ին ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականի 9-րդ բաժնում՝ դիմողը, ում պաշտոնական փաստաթղթից օգտվելու հայտը մասամբ

կամ ամբողջովին մերժվել է կամ չի ընդունվել կամ չի քննարկվել սահմանված ժամկետում, պետք է հնարավորություն ունենա օգտվել վերանայման կարգից՝ դատարանում կամ օրենքով սահմանված մեկ այլ անկախ եւ անկողմնակալ ատյա-նում: Ի դեպ, վերանայման ընթացակարգը պետք է լինի արագ եւ ոչ թանկ:

Այս պահանջներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ տեղեկատվության ազատության մասին օրենսդրության մեջ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի անօրինական սահմանափակումները կամ ՏԱ այլ խախտումները կարող են դառնալ անկախ քննության առարկա: Առանց այս երաշխիքի, ՏԱ օրենսդրությունը դառնում է անարդյունավետ:

Հասկանալով տեղեկատվության ազատության իրավունքի կարելիությունը պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց գործողությունները վերահսկելու գործում՝ խնդրով մտահոգ հասարակական կազմակերպությունները հաճախ ստիպված են եղել իրենց եւ քաղաքացիների իրավունքը պաշտպանել դատական կարգով:

Տեղեկատվության ազատության պաշտպանության դատական պրակտիկան Հայաստանում սկսել է ձեւավորվել դեռեւս ՏԱ մասին օրենքի ընդունումից առաջ (ՏԱ մասին ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին եւ ուժի մեջ մտել նույն թվականի նոյեմբերի 15-ին): Այդ իսկ պատճառով, սույն ժողովածուում ներկայացված ՏԱ դատական գործերը բաժանել ենք երկու խմբի՝ մինչ օրենքի

ընդունումը եւ օրենքի ընդունումից հետո հարուցված դատական գործեր: Ընդհանուր **տասնյոթ** դատական գործերից 10-ը ավարտվել է դրական, 4-ը՝ բացասական արդյունքով, իսկ 3 գործ բավարարվել է մասնակի: Դատական գործերից 6-ը տեղի են ունեցել մինչ օրենքի ընդունումը՝ 2001-2003թ.թ. ընկած ժամանակահատվածում: Դրանք դիպվածային բնույթ էին կրում, եւ բոլոր դատական գործերի հայցվորները ոլոտում ակտիվ հասարակական կազմակերպություններն էին՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Ավտովարորդների իրավունքների պաշտպանության Աքիլես կազմակերպությունը, Յետաքննող լրագրողների ընկերակցությունը, Յելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը եւ Գյումրու «Ասպարեզ» լրագրողների ակումբը:

Տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության առաջին դատական գործը «Գյումրու «Ասպարեզ» լրագրողների ակումբը եւ «Իրավունք» շաբաթաթերթի թղթակից Գագիկ Նիկողոսյանն ընդդեմ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության» գործն էր՝ հարուցված 2001թ. օգոստոսի 30-ին: Այն, սակայն, ավարտվեց լրագրողների պարտությամբ: Գործի մանրամասները ներկայացված են սույն ժողովածուում:

Մինչ օրենքի ընդունումը որեւէ հայց անհատ լրագրողի կամ քաղաքացու կողմից չի ներկայացվել: ՏԱ օրենքի բացակայության պայմաններում տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության հայցերը հիմնվում էին մասնավորապես Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի, ՀՀ Սահմանադրության խոսքի եւ տեղեկատվության ազատությունն ապահովող 24-րդ հոդվածի վրա, ինչպես նաեւ «Զաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի վրա: Այս փուլում հայցվորների համար բավականին դժվար էր դատարաններում խոսել եվրոպական

կոնվենցիայի դրույթների, բնապահպանական տեղեկատվության մատչելիության Օրինակի կոնվենցիայի պահանջների մասին, երբ գործը քննող դատավորները զարմացած հայացքներով նայում էին հայցվորին եւ երբեմն նրանց խոսքն ընդհատում «Ասվածը քննվող գործին չի առնչվում» արտահայտությամբ: Օրենքի ընդունումից առաջ հարուցված 6 գործերից միայն երկուսում դատարանը որոշում կայացրեց հօգուտ հայցվոր ՀԿ-ի, այն էլ՝ մասսամբ: Լրագրողների առաջին դատական գործի բացասական արդյունքից հետո արդեն պարզ դարձավ, որ դատարանները դեռեւս պատրաստ չեն ընդունել արդար եւ անկողմնակալ որոշումներ, երբ դատարանի դահլիճում հակամարտող կողմերից մեկը պետական մարմինն է կամ պաշտոնյան:

Օրենքի ընդունումն իրավիճակը չփոխեց դեպի լավը նախ այն պատճառով, որ առաջ եկավ ինչպես հասարակության ընդհանրապես, այնպես էլ դատավորների՝ ՏԱ օրենսդրությանն անիրագվել լինելու խնդիրը: Պետք է նշել, սակայն, որ տարեցտարի տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության դրական դատական գործերի թիվն ավելանում է: 2003թ.-ից՝ օրենքի ընդունումից մինչ 2006թ.-ի սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել 11 դատական գործ, որի մեծ մասը՝ ութ գործ հարուցվել է մարզերում: Տասնմեկ դատական գործերից յոթի հեղինակը Ինֆորմացիայի ազատության կենտրոնն է, որը բոլոր դատական գործերը հարուցել է մարզերում իր մարզային իրավաբանների միջոցով:

Կենտրոնն իր առջեւ նպատակ էր դրել ստեղծել տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության ռազմավարական դատական պրակտիկա, որը պետք է կյանքի կոչեր այս իրավունքի պաշտպանության իրավական մեխանիզմները, ինչպես նաեւ առաջնորդող դեր կատարեր իրավունքի պաշտպանության

հետագա զարգացման եւ հարստացման համար: Այդ իսկ պատճառով կազմակերպությունը հատկապես ընտրում էր այնպիսի գործեր, որոնք շոշափում էին հնարավորինս մեծ թվով մարդկանց շահերի՝ դատական որոշումների միջոցով ապահովելով, օրինակ, համայնքային բյուջեների հրապարակայնությանը, քաղաքապետների, ավագանու որոշումների մատչելիությունը եւ այլն:

Պետք է նշել, որ դատական գործերը կատարում են ոչ միայն խախտված իրավունքը վերականգնելու, այլեւ կանխարգելիչ գործառույթ: ԻՎ կենտրոնի հարուցած 7 գործերից 3-ը ավարտվել է մինչ դատական քննության սկիզբը. պատասխանող կողմը ստանալով դատական ծանուցագիրը դատարան ներկայանալու մասին՝ շտապել է օր առաջ տրամադրել մերժված տեղեկությունները՝ իր հեղինակությունը փրկելու եւ պրոբլեմներից խուսափելու համար: Դրական ելք ունեցած դատական գրեթե բոլոր գործերում դատարանը պատասխանող կողմին պարտավորեցրել է տրամադրել մերժված տեղեկությունները, որոշ դեպքերում նաեւ պարտավորեցնելով փոխհատուցել կատարված դատական ծախսերը (ՏԵս, օրինակ, «ԻՎԿ-ն ընդդեմ Արարատի մարզպետարանի», «ԻՎԿ-ն ընդդեմ Ապարանի քաղաքապետարանի», «ՀԼ-ն ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի» դատական գործերը):

Առայսօր տեղեկություն ստանալու իրավունքը խախտած որեւէ պաշտոնյա չի ենթարկվել քրեական կամ վարչական պատասխանատվության, թեեւ թե՛ քրեական, թե՛ վարչական օրենսդրությունը նախատեսում են պատասխանատվություն տեղեկատվության ազատության խախտման համար: Նշենք, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համաձայն՝ պատասխանատվություն է սահմանվում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար: «Օրենքով նախատես-

ված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով: Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

ՀՀ Քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածը նույնպես պատասխանատվություն է սահմանում տեղեկություն ստանալու իրավունքը ոտնահարելու դեպքում՝ օրինազանցին սպառնալով տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

Ուրեմն, ինչո՞ւ են հայցվորները ձեռնպահ մնում օրինազանցներին օրենքի ողջ խստությամբ պատժելու հնարավորությունն օգտագործելուց: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դատական ռազմավարական գործեր ստեղծելիս չի դիմել օրինախախտներին քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով՝ համարելով, որ այս փուլում հասարակական կազմակերպության առաջնային նպատակը ոչ թե պաշտոնյաներին պատժելն է, այլ նրանց ՏԱ մասին օրենսդրությանը ծանոթացնելն ու հրապարակային գործելու մշակույթ ձեւավորելը: Ի՞նչն է, այնուամենայնիվ, խանգարում տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ դատական պաշտպանության համար: Դա պայմանավորված է մի քանի հիմնային պրոբլեմներով.

1. **Դատարանի կախվածություն գործադիր իշխանությունից:** Առաջին կարելու որագույն խնդիրն առնչվում է դատարանի անկախությանն ու անկողմակալությանը: Դատարանի համար դժվար է որոշում կայացնել գործադիր իշխանության ներկայացուցիչների դեմ գործադիր իշխանության թեւից կախվածության հետեւանքով: Արդար դատարանի ամկայությունը մարդու իրավունքների պաշտպանության բացառիկ երաշխիք է:
2. **Դատարանի նկատմամբ վստահության պակաս:** Ֆիզիկական անձանց կողմից հարուցված ընդամենը երկու դատական գործի ամկայությունը վկայում է այն մասին, որ մարդիկ պարզապես չեն վստահում դատարանին, նրանք չեն հավատում, որ դատարանը կարող է լինել իրենց խախտված իրավունքների վերականգնման երաշխիք:
3. **Անկատար օրենսդրական դաշտ:** Պակատում են տեղեկություն ստանալու իրավունքի ապահովման համար անհրաժեշտ երկու ենթաօրենսդրական ակտեր: Օրինակ, դատարանը երբեմն հիմնավորում է հայցի մերժումը նրանով, որ քանի որ կառավարությունը չի ընդունել ՏԱ մասին օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված պետական մարմինների կողմից տեղեկատվություն տրամադրելու կարգը, ուրեմն պետական մարմնի կողմից տեղեկատվության տրամադրման մերժումն օրինական է: Պետք է նշել, որ 2006թ. հուլիսի 26-ին Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Միկոշ Զարաշտին Զայաստանին նվիրված զեկույցում հատուկ անդրադարձել է այս խնդրին՝ նշելով, որ «ենթաօրենսդրական ակտերի հրապարակային քննարկումն ու ընդունումն անհրաժեշտ են օրենքի պատշաճ կիրառումն ապահովելու համար»՝  
<http://www.foi.am/am/rcontent/5/633/>:
4. **Իրազեկման պակաս դատական համակարգում եւ հասարակության մեջ ընդհանրապես:**  
Փորձը ցույց է տալիս, որ առայժմ դատական համակարգում այնքան էլ լավ չեն տիրապետում ՏԱ մասին օրենսդրության հիմնական դրույթներին: Կարծում ենք, որ օրենսդրության չիմացության հետեւանք է այն, որ դատավորը կարող է իր որոշումը հիմնավորել այսպես. 2003թ.-ի դեկտեմբերի 15-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Գ.Կարախանյանը մերժելով «Աքիլլես» կազմակերպության հայցն ընդդեմ ՀՀ Ոստիկանության՝ հիմնավորեց նրանով, որ ՀՀ Ոստիկանությունը հասարակական կազմակերպությանը տեղեկատվություն տալու լիազորությամբ օժտված չէ:
5. **Եւ վերջապես, դատական գործերի հաջողության համար կարելու է նաեւ այս հարցում իրավաբանների, փաստաբանների մասնագիտացած խմբի ստեղծումը:**  
Կարծում ենք, որ դատական պաշտպանության պրակտիկայի զարգացմանը զուգահեռ անհրաժեշտ է զարգացնել եւ ակտիվացնել նաեւ պաշտպանության մյուս ձեւերը, մասնավորապես, այնպիսի արդյունավետ մեխանիզմ, ինչպիսին մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն է: Դատարան դիմելը թանկ հաճույք է, ծախսատար եւ ժամանակատար է, հատկապես այն դեպքում, երբ գործ ունենք տեղեկատվության հետ: Մինչ դատական քննության ավարտը տեղեկատվությունը հնանում է եւ այլեւս պետք չէ: Լրագրողները չեն դիմում դատարան հիմնականում հենց այս պատճառով: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության լավագույն երաշխիքը մարդու իրավունքների պաշտպանն է կամ Տեղեկատվության ազատության հանձնակատարը: Կարծում ենք, Հայաստանում եւս մոտ ապա-



գայում կներդրվի ՏԱ հարցերով հանձնակատարի ինստիտուտը: Նման մարմիններ հատուկ ստեղծվել են ՏԱ բողոքներն ուսումնասիրելու նպատակով (Ավստրալիա, Կանադա, Ֆրանսիա, Շվեդիա, ԱՄՆ եւ այլուր): Նույնիսկ կան երկրներ, որտեղ այս իրավունքի դատական պաշտպանություն չի գործում ընդհանրապես: Նոր Չեխոսլովակիայում, օրինակ, օմբուդմենը հռչակվել է որպես ՏԱ բողոքարկման միակ եւ վերջնական մարմին. «Մենք համարում ենք, որ...կան համոզիչ պատճառներ, որ այս հարցում վերջնական որոշում կայացնելու իրավունքը չլինի դատարանների լիազորությունը: Մեր նախընտրած համակարգում պետք է հաշվի առնվեն բազմաթիվ նկատառումներ, եւ հաշվեկշռվեն հասարակական եւ անհատական մրցակցող շահերը: Եթե դատարաններին ընդհանուր իրավասություն տրվեր վերջնական որոշում կայացնել պաշտոնական տեղեկատվության մատչելիությանը վերաբերող հարցերում, դրանք ստիպված կլինեին քաղաքական հնչեղություն ունեցող խնդիրներ լուծել», - նշում է Ջուդիթ Աթքենը իր «Բաց կառավարությունը Նոր Չեխոսլովակիայում» աշխատության մեջ:

Հայաստանում մարդու իրավունքների նորաստեղծ պաշտպանը քննում է նաեւ ՏԱ բողոքները: Սակայն, պաշտպանն ունի միայն խախտումը թույլ տված մարմնին խախտումը վերացնելու մասին առաջարկությամբ կամ միջնորդությամբ հանդես գալու լիազորություն: Այս առաջարկությունը, սակայն, չունի պարտադիր բնույթ: Մարդու իրավունքների պաշտպանի արդյունավետ գործողության համար պետք է նրան վերապահվի նաեւ մարդու իրավունքների խախտման գործում մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ մեղադրանք առաջադրելու լիազորություն: Ինչպես նաեւ, իր լիազորությունները արդյունավետ կատարելու համար մարդու իրավունքների պաշտպանը պետք է գերծ մնա քաղաքական ու տնտեսական ցանկացած ճնշումներից, ուստի պետք է քաղաքական եւ ֆինանսական իրական անկախություն ունենա:

**Եւ վերջապես, քանի դեռ տեղեկատվության ազատությունը կյանքի կոչելու քաղաքական կամքի ձեւավորումը դանդաղում է, անհրաժեշտ է ակտիվացնել հասարակական կամքը, որին էլ եւ ի վերջո ուղղված են մեր բոլորի ջանքերը:**

**Շուշան Դոյրոյան, բ.գ.թ.**

ԻԱ կենտրոնի նախագահ  
ԵՊՀ Ժուռնալիստիկայի  
ֆակուլտետի դոցենտ

# The Problems of Legal Defense of the Right of Access to Information in Armenia

## Introduction

It should be noted that the RA Law On "Information Freedom" (hereinafter referred to as "the Law") has been in force for about three years now since the 15th of November, 2003. During this time period citizens, public organizations-NGOs, journalists have had an opportunity to look for and have access to any required information under the Law.

Without sufficient legal defense of access to information right it is nearly impossible to conceive the implementation of other human rights, nor the publicity and transparency of the management system. Court cases also enrich the law enforcement practice, which is so vital for the realization of the entire Freedom of Information Law. Judicial system should perform controlling function in relation to executive and legislative bodies, so that the latter cannot willfully deprive people of the freedom and opportunity to get information or put accessibility of information into dependence of anyone's subjective wishes. Courts should treat distrustfully any requirement of the state bodies for limitation of information accessibility.

Section 9 of the Recommendation (2002) of the Committee of Ministers to member states on access to official documents establishes that "An applicant whose request for an official document has been refused, whether in part or in full, or dismissed, or has not been dealt with within the time limit mentioned in Principle VI.3 should have access to a review procedure before a court of law or another independ-

ent and impartial body established by law." Besides, it states that the review procedure should be expeditious and inexpensive. These requirements were reflected in the RA Freedom of Information legislation. According to the RA Law "On Freedom of Information" illegal limitations of the right to get information or other violations of the Freedom of Information Law may become a subject of an independent investigation. Without this guaranty FOI legislation becomes inefficient.

Public organizations (PO)/NGOs, being concerned and realizing the importance of the right to information for controlling the activity of the state governing and local self-governance bodies and their officials, were often forced to defend their and other citizens' right judicially. Court practice in defending freedom of information right in Armenia has started forming even before the adoption of FOI Law (The FOI Law was adopted on the 23rd of September 2003 and entered into force on the 15th of November the same year).

That is why the FOI court cases presented in these collection were divided into two groups: the court cases instituted before and after the adoption of this law. Of the total seventeen cases 10 were resolved positively, 4 - negatively, and 3 cases were satisfied partially. 6 of the court cases took place during the time of adoption of the law: 2001-2003. They were of a specific nature and the plaintiffs in all cases were NGOs (Freedom of Information Centre, "Achilles" Organization for the protection of driv-

ers' rights, Association of Investigative Journalists, Vanadzor Office of Helsinki Civil Assembly and "Asparez" Journalists' Club of Gyumri) active in the given area.

The first legal case for the protection of the right to get information was the case of "'Asparez" Journalists' Club of Gyumri and Gagik Nikoghosyan, a reporter of "Irvunk" Daily versus the RA Ministry of Education and Science" instituted on the 30th of August, 2001. Eventually, the case was lost by the journalists. The details of the case are presented in these collection. No claim from any individual journalist or citizen has been suited before the adoption of the Law. In the conditions of the absence of the FOI Law, the claims for the protection of the right to get information were particularly based on Article 10 of the European Convention, Article 24 of the RA Constitution guarantying freedom of speech and information, as well as on the RA Law " On the Procedure of Examining the Suggestions, Complaints and Applications of Citizens". At this stage it was rather difficult for the plaintiffs to speak about the provisions of the European Convention, the requirements of Aarhus Convention on Access to Information and Access to Justice in Environmental Matters, when the judges who considered the cases, looked astonished at the plaintiffs and sometimes interrupted with "This is irrelevant to the case" phrase.

Of 6 cases instituted before the adoption of the Law only two were judged in favor of plaintiff-NGOs, but only partially. After the negative result in the court case of the journalists it became clear that the courts were not yet ready to take fair and unbiased decisions, especially when one of the counterparts in the court hall was a state body or state official.

The adoption of the Law has not improved the situation just because neither the society in general, nor the judges were aware of the FOI legislation. Although it should be noted that the number of positive court cases for the protection of the right to get information increases from year to year. During the period from 2003, the year of the adoption of the Law, to September 2006, 11 legal cases took place; the majority of which (eight cases) was instituted in the marzes. The initiator of seven court cases of eleven was the Freedom of Information Centre, which instituted all the court cases in the marzes through its regional lawyers. The Centre set itself as an objective to create a strategic court practice in protecting the right of access to information, which should enforce legal mechanisms for the protection of this right and play a leading role for the further development and enrichment of the right protection.

It is therefore that the organization selected particularly the cases, which possibly touch upon the interests of a big number of people ensuring through court decisions, for example, transparency of community budgets, accessibility of mayors', Council of Elders' decisions, etc. It should be noted that legal cases perform not only a rehabilitative function of the infringed right, but also a preventive function. 3 cases out of 7 instituted by the FOI Centre were closed before the court examination started: the respondent receiving a subpoena hastened a day earlier to provide the refused information in order to save its reputation and escape from possible problems.

In almost all court cases having positive output the court obliged respondents to provide the refused information, and in some cases also obliging to compensate the

legal costs (see, for example, the cases "Freedom of Information Centre versus Ararat Marzpetaran" and "Freedom of Information Centre versus Aparan Marzpetaran"). Today none of the officials violated the right to get information has subjected to criminal or administrative responsibility, albeit both criminal and administrative legislations envisage responsibility for any infringe of information freedom.

Let us note that the Code of administrative violations foresees a responsibility for the failure to perform information provision duty. "Illegal failure of state and local self-governing bodies, state agencies, organizations financed from the state budget and officials from organizations of public importance to provide information envisaged by the law entails imposition of fine at the amount ranging from tenfold to fifty fold minimum established salary. The same infringement/violation, committed repeatedly, after imposition of administrative fine during a year period will entail imposition of fine at the amount ranging from fifty fold to hundredfold of the established salary".

Article 148 of the RA Criminal Code also establishes a responsibility for the violation of the right to get information obliging the violator to pay fine at the amount of 200 to 400 minimal salaries.

So, why do plaintiffs abstain from the opportunity to punish the violators stringently under the law? While running strategic court cases the Freedom of Information Centre has never appeared with a claim to punish the violators/infringers under criminal or administrative codes, believing that at this stage the primary goal of any public organization is to acquaint the officials with the FOI legislation

and form a culture to act publicly, rather than to punish them.

What, nevertheless, impedes the proper court defense of freedom of information right? Such impediment is stipulated by a number of key problems:

**1. Court dependence on executive power.**

The first vital problem refers to the court's independence and impartiality. It is difficult for a court to take a decision against the representatives of the executive power due to dependence on executive power. Availability of a just court is the exclusive guarantee for the protection of human rights.

**2. Lack of confidence with the court.**

Availability of only two cases instituted by physical persons proves that people simply do not trust the court; they do not believe that the court can serve as a guarantee for rehabilitation of their infringed/violated rights.

**3. Imperfect legislative environment.**

Two sub-legislative acts on providing the right to get information are missing. For example, the court sometimes substantiates judgment of dismissal by the fact that the Government has not yet adopted the order for the provision of information by state bodies as envisaged by Article 10 of the FOI Law, thus refusal of the state body to provide information is allegedly considered legal. It should be noted that the OSCE Representative on Freedom of the Media Mr. Mikos Haraszty on the State of Media Freedom in Armenia released on July 26, 2006 covered this problem noting that "public discussion and adoption of sub-legislative acts are necessary to ensure the proper implementation of the law".

(<http://www.foi.am/am/rcontent/5/633/>)?

- 4. Lack of awareness in the judicial system and in the society in general.** The experience shows that judicial system is not yet well aware of the key provisions of the FOI legislation. We think that ignorance in the legislation can lead to such substantiation of a judge's decision as follows: Judge G. Karakhanyan of the Court of First Instance of Kentron and Nork Marash Communities substantiated his refusal of the claim of "Achilles" against the RA Police" as of 15 December 2003 by the fact that the RA Police is not authorized to provide information to that public organization.
- 5. Creation of a specialized group of lawyers and advocates/attorneys is important for the success of legal cases.**

We believe that together with the development of legal defense practice it is necessary to develop and stir up other forms of protection, particularly such efficient mechanism as an institution of human rights ombudsman. Applying to court is expensive, costly and time-consuming, especially if dealt with information. Before the end of court's examination the sought information becomes out of date and useless. It is therefore that journalists refrain from applying to the court. The world's experience shows that the best guaranty for the protection of the right to get information is Human Rights Ombudsman or Freedom of Information Commissioner. We are of an opinion that an institution of FOI Commissioner will be created in Armenia in the near future. Such bodies were specially created to study FOI related complaints (e.g. in Australia, Canada, France, Sweden, USA, etc. There are even coun-

tries where there is no legal defense for the protection of this right at all. For instance, in New Zealand the ombudsman was declared to serve as the highest and the only instance to appeal any FOI claim: "We believe that ..... there are convincing reasons not to give the courts ultimate authority in such a matter. The system we favor involves the weighing of broad considerations and the balancing of competing public interests against one another, and against individual interests. If the general power to determine finally whether there should be access to official information was given to the courts, they would have to rule on matters with strong policy and political implications", states Judith Aitken in her work "Open Government in New Zealand".

In Armenia a newly appointed Human Rights Ombudsman examines also FOI related claims. However, the Ombudsman is only authorized to come up before the body in default with recommendation or solicitation to remove the violation-/infringement and such recommendation is not binding. Efficient activity of the Human Rights Ombudsman will require entrusting the latter also with the power to accuse officials who violated/infringed human rights. In addition, for the efficient operation the Human Rights Ombudsman shall be free from any political and economic pressure, which means that he/she should have a real financial independence.

**Finally, since formation of political will to realize freedom of information lingers, it is necessary to stir up the public will, at which all our efforts are directed.**

**Shushan Doydoyan, PhD**  
President of the FOICA ,  
YSU, Journalism Dep.,  
Senior Professor

**Գ Ա Տ Ա Կ Ա Ն   Գ Ո Ր Ծ Ե Ր**

**2001-2006**

---

**ԳՈՐԾ 1.**  
**Ինֆորմացիայի ազատության կենտրոնն**  
*ընդդեմ*  
**Արարատի մարզպետարանի**

## **Պորժի համառոտ նկարագրությունը**

16.09.2005թ. ԻԱԿ Արարատի մարզի մարզային իրավաբանը հարցում էր ուղարկել Արարատի մարզպետ Ա. Սարգսյանին՝ խնդրելով տրամադրել 2005թ. 1-2-րդ եռամսյակների ընթացքում մարզպետի ընդունած որոշումների պատճենները:

03.10.2005թ. թվագրված պատասխանով Արարատի մարզպետը հրաժարվեց տրամադրել պահանջվող տեղեկատվությունը՝ նշելով, որ հարցումը պարունակում է հաշվետվության կամ վերահսկողության պահանջի տարր, եւ տեղեկատվությունը կտրամադրվի, եթե ներկայացվի իրավական ակտի կոնկրետ նշում: 28.10.2005թ. ԻԱԿ մարզային իրավաբանը կրկնակի հարցում ուղարկեց Արարատի մարզպետին՝ նշելով նրա պատասխանի անհիմն լինելը եւ կրկին պահանջելով նույն տեղեկատվությունը: Արարատի մարզպետից ստացվեց երկրորդ գրությունը. «Ձեր՝ 28.10.2005թ. թիվ 03 հարցմանն ի պատասխան հայտնվում է, որ նույնաբովանդակ Ձեր նախորդ հարցմանը մեր կողմից 03.10.2005թ. տրված պատասխանում հստակ է մերժման պարզաբանումը»:

2005թ. դեկտեմբերի 22-ին ԻԱԿ կողմից հայց ներկայացվեց Արարատի մարզի առաջին ատյանի դատարան՝ պաշտոնատար անձի անգործությունը վիճարկելու եւ սպառիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին:

Առաջին նիստը՝ 20.01.2006թ.-ին, հետաձգվեց մարզպետարանի ներկայացուցչի խնդրանքով, ով ժամանակ խնդրեց իրենց պատասխանը հիմնավորող օրենքի փոփոխություններ եւ փաստաթղթեր ներկայացնելու համար:

Սակայն, մինչ դատական երկրորդ նիստը, 2006թ. փետրվարի 7-ին Արարատի մարզպետարանը Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրեց 79 էջից բաղկացած բոլոր որոշումների պատճենները՝ բացառությամբ երկու որոշման, որոնք պարունակում էին պետական գաղտնիք: Այս հանգամանքը նշվել էր մարզպետարանի կողմից տրված գրության մեջ:

2006թ. փետրվարի 28-ին դատական երրորդ եւ վերջին նիստի ժամանակ ԻԱԿ մարզային իրավաբան Անահիտ Ավագյանը հրաժարվեց հայցից՝ հիմք ընդունելով պատասխանողի կողմից հայցային պահանջի կատարումը: Դատարանը որոշում կայացրեց դատական գործը կարճելու մասին՝ միաժամանակ պատասխանող կողմին պարտավորեցնելով հատուցել ԻԱԿ-ի կրած վնասները, այն է՝ վճարել օրենքով սահմանված պետական տուրքի գումարը:



## Փորձի նյութերը

16.09.2005թ.

Արարատի մարզպետ  
պարոն Ա. Սարգսյանին

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմ տրամադրել 2005թ. 1-2-րդ եռամսյակների ընթացքում Ձեր ընդունած որոշումների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն խնդրում եմք մեր հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
մարզային իրավաբան՝

Ա. Ավագյան

N 30/1455

03.10.2005թ.

**Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
իրավաբան Ա. Ավագյանին**

Ձեր՝ 16.09.2005թ. թիվ 03 հարցմանն ի պատասխան հայտնվում է, որ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ Ձեր հարցումը չի բխում Ձեր իսկ մատնանշած օրենքի պահանջներից: Այն պարունակում է հաշվետվության պահանջի կամ վերահսկողության տարր:

Ձեր խնդրանքը կարող է բավարարվել, եթե այն ներկայացվի անհրաժեշտ իրավական ակտի կոնկրետ համարանշումով:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**28.10.2005թ.****Արարատի մարզպետ  
պարոն Ա. Սարգսյանին****ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ**

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան 16.09.2005թ. թիվ 0-3 իմ հարցմանը՝ Ձեր կողմից 03.10.2005թ. տրվել է պատասխան, որ այն պարունակում է հաշվետվության կամ վերահսկողության տարր, եւ խնդրանքս կբավարարվի միայն, եթե ներկայացվի իրավական ակտի կոնկրետ համարանշումով:

Տեղեկատվության տրամադրման մերժումը կատարվել է օրենքի խախտմամբ, քանի որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

Իմ խնդրանքը մերժելով խախտվել են ՏԱ մասին ՀՀ օրենքի 2-րդ կետի պահանջները. չեն նշվել հարցումը մերժելու իրավական հիմքերը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2002թ.-ին ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականում նշվում է, որ «Պետական իշխանությունը, որը մերժում է տրամադրել պաշտոնական որեւէ փաստաթուղթ, պետք է պարզաբանի իր մերժումը»:

Կրկին դիմելով Ձեզ՝ խնդրում եմ ինձ տրամադրել 2005թ. 1-2-րդ եռամսյակների ընթացքում Ձեր կողմից ընդունված որոշումների պատճենները:

Քանի որ ըստ ՏԱ մասին օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի՝ մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս գանձում չի կատարվում, ուստի տեղեկատվությունը սահմանվածից ավելի լինելու դեպքում պատրաստ եմ կատարել համապատասխան վճարումները:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
մարզային իրավաբան՝

Ա. Ավագյան

N 30/788

23.11.2005թ.

**Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
իրավաբան Ա. Ավագյանին**

Ձեր՝ 28.10.2005թ. թիվ 03 հարցմանն ի պատասխան հայտնվում է, որ նույնաբովանդակ Ձեր նախորդ հարցմանը մեր կողմից 03.10.2005թ. տրված պատասխանում հստակ է մերժման պարզաբանումը:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի  
Նախագահ պարոն Գ. Սարգսյանին**

**Չայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ**  
ք. Երեւան, Պուշկինի 3ա, հեռ. 578356

**Պատասխանող՝ Արարատի մարզի մարզպետարան**  
ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող., շ. 60

**ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ**

**Պաշտոնատար անձի գործողությունները (անգործությունը)  
վիճարկելու եւ սպառնիչ տեղեկատվություն տրամադրել  
պարտադրելու պահանջի մասին**

2005թ 1-2-րդ եռամսյակների ընթացքում ընդունած որոշումների պատճենների տրամադրման խնդրանքով 16.09.2005թ. Արարատի մարզպետարան հարցում է ուղարկվել՝ պահանջը հիմնավորելով ՀՀ Սահմանադրության 24 (27) հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով:

Տեղեկատվության տրամադրումը մերժվել է պատճառաբանությամբ, որ իբր մեր հարցումը պարունակում է հաշվետվության կամ վերահսկողության տարր, եւ հնարավոր կլինի տրամադրել մեզ հետաքրքրող փաստաթղթերը, եթե մեր կողմից ներկայացվի իրավական ակտի կոնկրետ նշում:

28.10.2005թ-ին մենք երկրորդ անգամ ենք դիմել Արարատի մարզպետարան՝ մատնանշելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետը, ըստ որի՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը, եւ 2-րդ հոդվածը, որոնց պահանջները խախտվել են՝ մերժելով դիմումը: Երկրորդ անգամ է խնդրվել տրամադրել տեղեկատվություն: Այս հարցումը նույնպես մերժվել է:

Տեղեկատվության տրամադրման մերժումը կատարվել է օրենքի խախտմամբ, քանի որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել տեղեկություն ստանալու հարցումը:

Հարցումը մերժելով՝ խախտվել են ՏԱ մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջները. չեն նշվել հարցումը մերժելու իրավական հիմքերը: Մերժելով փաստաթղթերի տրամադրումը՝ մարզպետարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 24 (27) հոդվածի պահանջը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունք: «Մարդու իրա-

վունքների եւ ազատությունների համընդհանուր հռչակագրի» 19-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի» 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք:

Ելնելով վերոնշվածներից եւ համաձայն ՀՀ Սահմանադրության 24 (27 եւ 27.1) հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159 հոդվածի՝

### ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել Արարատի մարզպետարանին սպառիչ տեղեկատվություն տրամադրել, այն Է՝ 2005թ. 1-2-րդ եռամսյակների ընթացքում մարզպետարանի կողմից ընդունված որոշումների պատճենները:

Հայցի բավարարման դեպքում մուծված պետական տուրքի գումարը բռնագանձել պատասխանողից:

Կից ներկայացվում է՝

1. Պետական տուրքի անդորրագիր,
2. Մարզպետին հասցեագրված 16.09.2005թ. եւ 27.10.2005թ. հարցումների պատճենները,
3. Մարզպետից ստացված գրությունների պատճենները,
4. Լիազորագիր՝ տրված ԻԱ Կենտրոնի նախագահի կողմից:

Հայցվորի լիազոր ներկայացուցիչ՝

Ա. Ավագյան

22.12.2005թ.

**Արարատի մարզի առաջին  
ատյանի դատարանի դատավոր  
պարոն Լյովա Արագյանին**

**«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի  
Նախագահ Շ. Դոյդոյան**  
հասցեն՝ ք. Երեւան, Չարենցի փող. 12. 6բն.

**ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ  
գործի վարույթը կարճելու մասին**

Ձեր վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ հայցի «ԻԱ Կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Արարատի մարզպետարանի՝ պաշտոնատար անձի գործողությունները (անգործությունը) վիճարկելու եւ սպառնիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին:

Գտնում եմ, որ գործի վարույթն անհրաժեշտ է կարճել, քանի որ պատասխանողը կատարել է ներկայացված հայցադիմումի պահանջը. ներկայացրել է բոլոր պահանջվող փաստաթղթերը եւ տեղեկությունները:

Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ մասը՝ դատարանին

**ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ**

քաղաքացիական գործով վարույթն ըստ հայցի «ԻԱ Կենտրոն» ՀԿ ընդդեմ Արարատի մարզպետարանի՝ պաշտոնատար անձի գործողությունները (անգործությունը) վիճարկելու եւ սպառնիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին, կարճել:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
Նախագահ՝

Շ. Դոյդոյան

գործ 2-50

**Վ Ճ Ի Ռ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**գործի վարույթը կարճելու մասին**

**Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով.**

**Նախագահող դատավոր՝  
Քարտուղարությամբ՝**

**Լ. Արազյան  
Օ. Ղարաղաշյանի**

28.02.2006թ.

ք. Արտաշատ

Դռնբաց դատական նիստում քննության առավ քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Արարատի մարզպետարանի՝ պաշտոնատար անձի ապօրինի գործողությունները /անգործությունը/ վիճարկելու եւ սպառիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին:

Քաղաքացիական գործով դատաքննության ընթացքում՝ 28.02.2006թ., հայցվորի լիազոր ներկայացուցիչ Ա. Ավագյանը դատարանին է ներկայացրել դիմում այն մասին, որ հայցվոր կողմը հրաժարվում է ներկայացրած հայցից, պահանջում է պատասխանող կողմից բռնագանձել վճարված 4000 դրամ պետական տուրքը եւ խնդրում է քաղաքացիական գործի վարույթը կարճել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է քաղաքացիական գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից: Նկատի ունենալով, որ հայցվորը հրաժարվել է հայցից՝ պաշտոնատար անձի ապօրինի գործողությունները /անգործությունը/ վիճարկելու եւ սպառիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին, դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կարճել: Կողմին զգուշացված է հայցից հրաժարվելու դեպքում գործի վարույթը կարճելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածով սահմանված դատավարական հետեւանքների մասին: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով, 110 հոդվածով, 130-132 հոդվածներով, դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Արարատի մարզպետարանի՝ պաշտոնատար անձի ապօրինի գործողությունները /անգործությունը/ վիճարկելու եւ սպառիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին, կարճել:



Արարատի մարզպետարանից հոգուտ «Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 4000 դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության Արարատի մարզի բաժնի միջոցով: Սույն վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին՝ հրապարակման պահից 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Լ. ԱՐԱՉՅԱՆ

**ԳՈՐԾ 2.****Ինֆորմացիայի ազատության կենտրոնն***ընդդեմ***Ադարանի ֆալսֆադեֆալսարանի**

## Պորժի համառոտ նկարագրությունը

16.09.2005թ. ԻԱԿ Արագածոտնի մարզային իրավաբանը հարցում է ուղարկել Ապարանի քաղաքապետարան՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. 2005թ.-ի ընթացքում հողահատկացումների (սեփականության եւ վարձակալության հիմքերով) վերաբերյալ կայացրած որոշումները,
2. Այն անձանց ցանկը, ում հատկացվել են հողատարածությունները,
3. Ի՞նչ գնով են դրանք հատկացվել:

Ապարանի քաղաքապետարանը հարցումը թողել է անպատասխան:

Այնուհետեւ, 22.12.2005թ. կրկնակի հարցում է արվել Ապարանի քաղաքապետարան՝ վերոնշյալ տեղեկատվությունը ստանալու համար: Այս հարցմանը եւս պատասխան չի տրվել:

2006թ. հունվարի 10-ին ԻԱԿ-ը դիմեց Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու պահանջով:

Դատարան դիմելուց մի քանի օր անց՝ 18.01.2006թ.-ին, ԻԱԿ-ի նախագահ Շուշան Դոյոյանին զանգահարեց Ապարանի փոխքաղաքապետը՝ հայտնելով, որ պատվիրված նամակով ուղարկված հարցումներից ոչ մեկն իրենք չեն ստացել: Նա նաեւ նշեց, թե փոստից պարզել են, որ ստորագրել եւ փոստով ստացված հարցումները ստացել է քաղաքապետարանի հետ որեւէ կապ չունեցող մեկը: Փոխքաղաքապետը հավաստիացրեց, որ հարցումների պատասխաններն «հենց հիմա ուղարկում է»:

Արդեն հունվարի 19-ին թիվ 39 գրությամբ Ապարանի քաղաքապետը տրամադրեց պահանջած ողջ տեղեկատվությունը՝ մինչեւ դատական քննության ավարտը: Քաղաքապետի գրության մեջ նշված էր.

«Չարգելի Դոյոյան, Չայտնում ենք Ձեզ, որ Ձեր կողմից ուղարկված 16.11.2005թ. եւ 22.12.2005թ. գրությունները Ապարանի քաղաքապետարանը չի ստացել, սակայն ուղարկում ենք դատարանից ստացած հայցադիմումում Ձեր կողմից նշված տեղեկությունները (կցվում է)»:

Դատարանը 06.02.2006թ. կայացրած վճռով պարտավորեցրեց Ապարանի քաղաքապետարանին փոխհատուցել ԻԱԿ-ի դատական ծախսերը:

## Պորժի նյութերը

16.10.2005թ.

Ապարանի քաղաքապետ  
պարոն Գ. Աբրահամյանին

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Աբրահամյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել մեզ հետեւյալը.

1. 2005թ.-ի ընթացքում հողահատկացումների (սեփականության եւ վարձակալության հիմքերով) վերաբերյալ կայացրած որոշումները,
2. Այն անձանց ցանկը, ում հատկացվել են հողատարածությունները,
3. Ի՞նչ գնով են դրանք հատկացվել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ խնդրում եմք մեր հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումս:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
մարզային իրավաբան՝

Յ. Ալեգյան

22.12.2005թ.

Ապարանի քաղաքապետ  
պարոն Գ. Աբրահամյանին**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ**

Հարգելի պարոն Աբրահամյան,  
ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն 16.10.2005թ. պատվիրված նամակով ուղարկված տեղեկությունն ստանալու հարցմանը:

«ՏԱ մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկությունն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկությունն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումս: Նշեմ, որ համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը: Իսկ համաձայն 8-րդ հոդվածի՝ եթե նույնիսկ պահանջվող տեղեկատվության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկատվություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Միեւնույն ժամանակ հիշեցման կարգով հայտնում եմ, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1897 հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով՝ 10.000-50.000, նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:

Պատրաստ եմ վճարել պատճենահանման ծախսերը, եթե այն գերազանցում է 10 էջը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
մարզային իրավաբան՝

Յ. Ալեգյան

**Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանին**

**Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ**  
 ք.Երեւան, փող. Չարենցի1բ, բն. 6, հեռախոս՝ 57-83-56

**Պատասխանող՝ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Քաղաքապետարան**

**ՀԱՅՅԱԴԻՍՈՒՄ****Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու մասին**

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի՝ հայցվոր կազմակերպությունը 16.11.2005թ-ին հարցում է արել Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Քաղաքապետարան եւ խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2005թ.-ի ընթացքում հողահատկացումների (սեփականության եւ վարձակալության հիմքերով) վերաբերյալ կայացրած որոշումները,
2. այն անձանց ցանկը, ում հատկացվել են հողատարածությունները,
3. ի՞նչ գնով են դրանք հատկացվել:

Հայցվոր կազմակերպությունը ոչ մի պատասխան չի ստացել պատասխանող կողմից: Այնուհետեւ 22.12.2005թ.-ին կրկնակի հարցում է արվել Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Քաղաքապետարան, խնդրել ենք մեզ տրամադրել վերոնշված տեղեկատվությունը, սակայն նորից ոչ մի պատասխան չի ստացվել պատասխանող կողմից:

**Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ.**

Ղեկավարվելով «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջով՝ պատասխանող կողմից հայցվոր կազմակերպությանը տրամադրել վերոնշված տեղեկատվությունը եւ պատասխանող կողմից հոգուտ հայցվոր կազմակերպության բռնագանձել հայցվորի կողմից վճարված պետական տուրքի գումարը:

Կից ներկայացնում եմ՝

1. «ԻԱ Կենտրոնի» 16.11.2005թ.-ի հարցման փոստային առաքման ապացույցը,
2. «ԻԱ Կենտրոնի» 22.12.2005թ.-ի կրկնակի հարցման պատճենը փոստային առաքման ապացույցի հետ միասին,
3. Հայցադիմում 2 օրինակից,
4. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
 նախագահ՝

Շ. Դոյրոյան

**N 39**

**19. 01.2006թ.**

**«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»  
ՀԿ-ի նախագահ  
Շ. Դոյդոյանին**

Հարգելի Դոյդոյան,

Հայտնում ենք ձեզ, որ Ձեր կողմից ուղարկված 16.11.2005թ. եւ 22.12.2005թ. գրությունները Ապարանի քաղաքապետարանը չի ստացել, սակայն ուղարկում ենք դատարանից ստացված հայցադմումում Ձեր կողմից նշված տեղեկությունները (կցվում է):

Առդիր 2 թերթ:

Քաղաքապետ՝

Գ. Ս. Աբրահամյան

**Արագածոտնի մարզի առաջին ատյանի  
դատարանի դատավոր տիկին Ռ. Բարսեղյանին**

**«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի  
Նախագահ Շ. Դոյոյան**  
հասցեն՝ ք. Երեւան Չարենցի փող. 12. 6բն.

**ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ**

**գործի վարույթը կարճելու մասին**

Ձեր վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ հայցի «ԻԱ Կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Ապարանի քաղաքապետարանի՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու մասին:

Գտնում եմ, որ գործի վարույթն անհրաժեշտ է կարճել, քանի որ պատասխանողը կատարել է ներկայացված հայցադիմումի պահանջը. ներկայացրել է բոլոր պահանջվող փաստաթղթերը եւ տեղեկությունները:

Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 109-րդ հոդվածի 6-րդ մասը՝ դատարանին

**ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ**

քաղաքացիական գործով վարույթն ըստ հայցի «ԻԱ Կենտրոն» ՀԿ ընդդեմ Ապարանի քաղաքապետարանի՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու մասին կարճել:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
Նախագահ՝

Շ. Դոյոյան



2/2-19

2006թ.

**Վ Ճ Ի Ռ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Արագածոտն մարզի առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով.**

<p><b>Նախագահությամբ դատավոր՝</b>  <b>Քարտուղարությամբ՝</b>  <b>Հայցվորի ներկայացուցիչ՝</b>  <b>Պատասխանողի ներկայացուցիչ՝</b></p>	<p><b>Ռ. Բարսեղյանի</b>  <b>Ս. Մխիթարյանի</b>  <b>Հ. Ալեգյանի</b>  <b>Վ. Սարգսյանի</b></p>
--	--

Դռնբաց դատական նիստում, Ապարանում 2006թ. փետրվարի 6-ին

Քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Ապարանի քաղաքապետարանի՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու պահանջի մասին:

Դիմելով դատարան հայցվոր կազմակերպությունը հայտնել է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի համաձայն՝ հայցվոր կազմակերպությունը 2005թ. նոյեմբերի 16-ին հարցում է արել Արագածոտն մարզի Ապարան քաղաքի քաղաքապետարան եւ խնդրել է տրամադրել տեղեկություններ 2005թ.-ի ընթացքում հողահատկացումների/ սեփականության եւ վարձակալության հիմքերով/ վերաբերյալ կայացրած որոշումների, այն անձանց ցանկի, ում հատկացվել է հողատարածությունները եւ դրանց հատկացման գնի մասին: Պատասխանող կազմակերպությունը ոչ մի տեղեկատվություն չի տրամադրել, եւ հայցվոր կազմակերպությունը ոչ մի պատասխան չի ստացել:

Այնուհետեւ, կազմակերպությունը 2005թ. դեկտեմբերի 22-ին կրկնակի հարցում է արել Արագածոտն մարզի Ապարան քաղաքի քաղաքապետարան եւ խնդրել է տրամադրել վերոնշված տեղեկությունները, սակայն նորից պատասխանող կազմակերպությունից ոչ մի պատասխան չի ստացվել:

Հայցվոր կազմակերպությունը խնդրել է պարտավորեցնել պատասխանող կողմին հայցվոր կազմակերպությանը տրամադրել վերոնշված տեղեկատվությունը եւ պատասխանող կողմից հօգուտ իրենց կազմակերպության բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը: Հայցվոր «ԻԱ կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ Հրաչ Ալեգյանը հայցը պնդեց դատաարանում:

Պատասխանող Ապարանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Վանիկ Սարգսյանը դատարանին հայտնեց, որ հայցվոր «ԻԱ կենտրոն» ՀԿ-ից քաղաքապետարանի հասցեով 16.11.2005թ. եւ 22.12.2005թ. ուղարկված գրու-

թյուններով ծրարները «Հայփոստ ազգային օպերատոր» Ապարանի մասնաճյուղի աշխատակցի կողմից հանձնվել է քաղաքապետարանի ոչ իրավասու աշխատակցի, որի մոտից էլ դրանք կորել են, եւ մինչեւ դատարանի կողմից ուղարկված հայցադիմումի ստանալը՝ քաղաքապետարանը հարցման մասին տեղեկություն չի ունեցել: Հայցապահանջին ծանոթանալուց հետո 19.01.2006թ. հայցվոր կազմակերպություն է ուղարկվել պահանջվող տեղեկատվությունը:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը դատարան ներկայացրեց հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շ. Դոյոյանի միջնորդությունը՝ ներկայացված հայցից հրաժարվելու եւ գործի վարույթը կարճելու մասին՝ պատասխանողի կողմից հայցապահանջն արդեն իսկ կատարված լինելու կապակցությամբ:

Վերլուծելով գործում եղած փաստական հանգամանքները, հայցադիմումի պատասխանը, լսելով կողմերի ներկայացուցիչներին եւ գնահատելով ապացույցները, ինչպես նաեւ քննության առնելով հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շ. Դոյոյանի կողմից ներկայացված միջնորդությունը՝ ներկայացված հայցից հրաժարվելու եւ գործի վարույթը կարճելու մասին եւ հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 հոդվածի համաձայն հայցվորն իրավունք ունի մինչեւ դատարանի կողմից վճիռ կայացնելը հրաժարվել հայցից՝ դատարանը գտավ, որ հայցվորի կողմից հայցից հրաժարվելը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 հոդվածի եւ 109 հոդվածի 6-րդ կետի պահանջներից, եւ միջնորդությունը ենթակա է բավարարման, իսկ այդ հիմքով գործի վարույթը ենթակա է կարճման:

Դատարանը հայցվորի ներկայացուցչին պարզաբանեց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածով սահմանված հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու դատավարական հետեւանքները:

Վերոգրյալներից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110, 130-132 հոդվածներով՝ դատարանը

### Վ Ճ Ո Շ Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Ապարանի քաղաքապետարանի՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու պահանջի մասին քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Բռնագանձել Ապարանի քաղաքապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի 4000 դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան 15-օրվա ընթացքում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ռ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

**ԳՈՐԾ 3.****Ինֆորմացիայի ազատության կենտրոնն***ընդդեմ***Պյունրիի ֆաղափառեսարանի**

## **Գործի համառոտ նկարագրությունը**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2005թ. սեպտեմբերի 14-ին դիմել է Գյումրիի քաղաքապետ Վ. Ղուկասյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. 2005թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Գյումրի քաղաքի ավագանու կողմից կայացրած բոլոր որոշումների պատճենները,
2. 2005թ. բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի համար:

Հարցմանն ի պատասխան՝ Գյումրիի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար պարոն Ա. Մազմանյանը հարցումն ուղարկելով 15 օր անց՝ 30.09.2005թ.-ին, թիվ 1/3-09/2410 գրությամբ պատասխանել է. «Գյումրիի ավագանու կայացրած որոշումներին եւ 2005թ. բյուջեին կարող եք ծանոթանալ Գյումրիի ինտերնետային կայքից, որը պատրաստման ընթացքի մեջ է»:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մարզային իրավաբան Արտուշ Գրիգորյանը 16.11.2005թ. հայցադիմում ներկայացրեց դատարան՝ վիճարկելով Գյումրու քաղաքապետի անգործությունը եւ նրան պարտադրելով տրամադրել տեղեկությունները:

Սակայն հայցը ետ վերցվեց, քանի որ Գյումրիի քաղաքապետարանը թեեւ ուշացումով, բայց դատարանի հայցադիմումը ստանալուն պես 2005թ. նոյեմբերի 21-ին էլեկտրոնային փոստով Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրեց պահանջվող ողջ տեղեկատվությունը, ինչը նա կարող էր անել 1 ամիս առաջ՝ տեղեկություն ստանալու հարցումը ստանալուց անմիջապես հետո: Փաստորեն, մինչ դատական գործի սկիզբն արդեն դատարան դիմելու փաստն ունեցավ իր արագ եւ դրական ազդեցությունը:

## Գործի նյութերը

14 սեպտեմբերի 2005թ.

Գյումրու քաղաքապետ  
պրն. Վ.Ղուկասյանին

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՅԱՐՁՈՒՄ

Հարգելի պարոն Ղուկասյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմ տրամադրել մեզ հետեւյալը.

1. 2005թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Գյումրի քաղաքի ավագանու կողմից կայացրած բոլոր որոշումների պատճենները,
2. 2005թ. բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի /ապրիլ-հունիս ամիսներ/ համար:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին /հոդված 11/:

Ինֆորմացիայի ազատության  
կենտրոնի մարզային իրավաբան՝

Ա.Գրիգորյան

N 1/3-09/2410

«30» 09.2005թ.

**«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»  
Շիրակի մասնաճյուղի իրավաբան  
Ա.Գրիգորյանին**

Ի պատասխան Ձեր 14.09. 2005թ.թիվ Ի-010 գրության՝ տեղեկացնում եմք, որ Գյումրու ավագանու կողմից կայացված որոշումներին եւ 2005թ. բյուջեին կարող եք ծանոթանալ Գյումրիի ինտերնետային կայքից, որը պատրաստման ընթացքի մեջ է:

Գյումրու քաղաքապետարանի  
աշխատակազմի քարտուղար՝

Ա. Մազմանյան

**Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի  
Գյումրու նստավայր**

ք.Գյումրի, Անկախության հրապարակ, 7

**Հայցվոր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն,**

ք.Երեւան, փող. Չարենցի, շենք 1բ, բն. 6,  
հեռ: Երեւանում՝ 57-83-56, Գյումրիում՝ 3-69-18

**Պատասխանող՝ Գյումրու քաղաքապետարան,**

ք.Գյումրի, փող. Շիրակացի, շենք 68

**ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄ**

**Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման համար  
վարչական պատասխանատվության ենթարկելու եւ փնտրվող  
տեղեկությունը տրամադրելու պահանջի մասին**

Ըստ սույն հարուցված հայցի՝ հայցվոր Տեղեկատվության ազատության կենտրոնը, ի դեմս ՀՀ Շիրակի մարզի իր իրավաբանի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 24 հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» 23 սեպտեմբերի 2003թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով, 2005թ. սեպտեմբերի 14-ին տեղեկատվություն ստանալու հարցմամբ, թիվ Ի-010 պատվիրված նամակով դիմելով սույն քաղ. գործով պատասխանող Գյումրու քաղաքապետարանին՝ խնդրեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրել.

1. 2005թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Գյումրի քաղաքի ավագանու կողմից կայացրած բոլոր որոշումների պատճենները,
2. 2005թ. բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի ապրիլ-հունիս ամիսների համար:

Համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ ԻԱ կենտրոնը խնդրել է տեղեկատվությունը օրենքով սահմանված 5-օրյա ժամկետի փոխարեն նյութական կրիչով տրամադրել 30-օրյա ժամկետում՝ տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի գրավոր տեղյակ պահելով մերժման հիմքի մասին: Կենտրոնը նաեւ հայտնել է պատրաստակամություն վճարելու 10 թերթից ավել պատճենների համար:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2005թ. սեպտեմբերի 14-ի տեղեկություն ստանալու հարցմանը 15 օր անց, արդեն իսկ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, 30.09.2005թ-ին թիվ 1/3/09 2410 գրությամբ Գյումրիի քաղաքապետարանը նշել է խնդրվող տեղեկությունների՝ ինտերնետային կայքում գտնվելու մասին, սակայն մինչ օրս ոչ մի տվյալ կամ տեղեկություն ինտերնետային կայքում չկա: Կենտրոնը հերթական՝ թիվ Ի-45 գրու-



թյամբ, 04.11.2005թ.-ին գրավոր հիշեցմամբ պատասխանողից խնդրել է 5 օրվա ընթացքում տրամադրել փնտրվող տեղեկատվությունը: Սակայն, ապարդյուն. Կենտրոնի գրությունը թողնվել է անպատասխան եւ առանց բավարարման: Պատասխանող Գյումրիի քաղաքապետարանը խուսափում է տրամադրել մեր կողմից փնտրվող տեղեկությունը:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ սույն քաղաքացիական գործով հայցվոր Ինֆորմացիայի ազատության կենտրոնը խնդրում է համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82 հոդվածի՝ սույն հայցադիմումը ընդունել Ձեր վարույթը եւ ղեկավարվելով ՀՀ սահմանադրության 24-րդ հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի եւ 12 հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի եւ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 1897 հոդվածի, քննության առնելով այն ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածների՝ կայացնել վճիռ.

1. Համաձայն «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 1897 հոդվածի՝ տեղեկատվությունը տնօրինող սույն քաղաքացիական գործով պատասխանող Գյումրու քաղաքապետարանին պատասխանատվության ենթարկելու,
2. Ինձ՝ հայցվորիս, փնտրվող տեղեկատվությունը
  - 2005թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Գյումրի քաղաքի ավագանու կողմից կայացրած բոլոր որոշումների պատճենները,
  - 2005թ. բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի /ապրիլ-հունիս ամիսներ/ սեղմ ժամկետում տրամադրելու,
3. Դատական ծախսերը պատասխանողից բռնագանձելու մասին:  
Տուգանքի նշանակումը պատասխանողին չի ազատում փնտրվող տեղեկատվությունը տրամադրելու պարտականության կատարումից:

Սույն գործը Ձեր վարույթն ընդունելու եւ գործի ելքով ճիշտ վճիռ կայացնելու համար կից ներկայացնում եմ.

1. ԻԱ կենտրոնի 14.09.2005թ. թիվ Ի-010 գրավոր հարցման պատճենը փոստային առաքման ապացույցի հետ միասին - 3 թերթ,
2. Գյումրիի քաղաքապետարանի 30.09.2005թ. թիվ 1/3-09/2410 պատասխանը - 1 թերթ,
3. Ինտերնետային կայքի ստուգման ապացույցը - 1 թերթ,
4. ԻԱ կենտրոնի 05.10.05թ. թիվ Ի-014 գրության պատճենը փոստային առաքման ապացույցի հետ միասին - 2 թերթ,
5. Գյումրիի քաղաքապետարանի 12.10.05թ. թիվ 1/3-09/2517 պատասխանը - 1 թերթ,
6. ԻԱ կենտրոնի 04.11.05թ. թիվ 45-ի 3 գրության պատճենը - 1 թերթ,
7. Պատասխանողին հասցեագրված հայցադիմումի օրինակը - 2 թերթ,

8. Պետական տուրքի մուծման անդորրագիրը - 1 թերթ:

Առդիր 12 թերթ առաջին հասցեով:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
Նախագահ՝

Շ.Դոյրոյան

«14» սեպտեմբերի 2005թ.

## **ԳՈՐԾ 4.**

### **Ինֆորմացիայի ազատության կենտրոնն**

*ընդդեմ*

### **Արմավիրի ֆաղափառեսարանի**

## Գործի համառոտ նկարագրությունը

14.09.2005թ. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Արմավիրի մարզային իրավաբան Արթուր Մկրտչյանը տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկել Արմավիրի քաղաքապետ Ռուբեն Խլղաթյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. 2005 թ.-ի 2-րդ եռամսյակի ընթացքում Արմավիրի քաղաքի ավագանու կողմից կայացրած բոլոր որոշումների պատճենները,
2. 2005 թ.-ի բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի (ապրիլ-հունիս ամիսների) համար:

Հարցմանն ի պատասխան՝ քաղաքապետ պարոն Խլղաթյանը 20.09.2005թ. թիվ 998 գրությամբ պահանջեց տրամադրել «հասարակական կազմակերպության կանոնադրության պատճենը, գրությունը ձեւակերպել համապատասխան թղթի վրա եւ վճարել մատուցված ծառայության դիմաց՝ համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով»:

Ի՞նչ կենտրոնն ուղարկեց կրկնակի հարցում՝ այս անգամ ձեւաթղթի վրա: Հարցումում կրկին նշվեց, որ ԻԱԿ-ը պատրաստ է վճարել 10 էջից ավել տեղեկատվության պատճենահանման ծախսերը՝ համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի: Հարցումում նշվեց նաեւ, որ կազմակերպության կանոնադրության պատճենը տրամադրելու պահանջը չի բխում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

Արմավիրի քաղաքապետը կրկնակի հարցումը թողեց անպատասխան: Հետագայում նա բանավոր տեղեկացրեց, որ պահանջվող տեղեկատվությունը կտրամադրի միայն ԻԱԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանին անձամբ հանդիպելուց, հարցման նպատակները պարզելուց հետո, այնինչ՝ համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 4 կետի՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

13.02.2006թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմեց Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարան: 2006թ. մարտի 6-ին նշանակված առաջին նիստը հետաձգվեց քաղաքապետարանի ներկայացուցչի խնդրանքով: Դատական երկրորդ նիստը նույնպես հետաձգվեց՝ այս անգամ արդեն քաղաքապետարանի ներկայացուցչի չներկայանալու պատճառով: Քաղաքապետարանի ներկայացուցիչը ներկա չէր նաեւ դատական 3-րդ նիստին՝ 21.03.2006թ., որի ժամանակ էլ դատավորը վճիռ կայացրեց հայցվոր կազմակերպության օգտին՝ ամբողջությամբ բավարարելով հայցը:

## Պորժի նյութերը

15.09.2005թ.

Արմավիր քաղաքի քաղաքապետ  
պրն Ռ. Խլղաթյանին

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՉԱՐՅՈՒՄ

Չարգելի պարոն Խլղաթյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել մեզ հետեւյալը.

1. 2005 թ.-ի 2-րդ եռամսյակի ընթացքում Արմավիրի քաղաքի ավագանու կողմից կայացրած բոլոր որոշումների պատճենները,
2. 2005 թ.-ի բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը՝ 2-րդ եռամսյակի (ապրիլ-հունիս ամիսների) համար:

«ՏԱ մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն խնդրում եմք մեր հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
մարզային իրավաբան՝

Ա. Մկրտչյան

Թիվ 998

20.09.2005թ.

**ԻԱ կենտրոնի իրավաբան  
պարոն Ա. Մկրտչյանին**

Ի պատասխան Ձեր 15.09.2005թ. թիվ 829 գրությանը հայտնում եմք, որ գրության մեջ նշված փաստաթղթերի պատճենները ստանալու համար անհրաժեշտ են Ձեր հասարակական կազմակերպության կանոնադրության պատճենը, գրությունը ձեւակերպել համապատասխան թղթի վրա եւ վճարել մատուցված ծառայության դիմաց՝ համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով:

ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՂԱԶԱՊԵՏ՝

Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ

Կատ.՝

Վ. Խոստիկյան

47-ի5

11.01.2006թ.

Արմավիր քաղաքի քաղաքապետ  
պարոն Ռ. Խլղաթյանին

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Խլղաթյան,

15.09.2005թ.-ին Ձեզ էր դիմել Ինֆորմացիայի Ազատության Կենտրոնի Արմավիրի մարզի իրավաբանը եւ խնդրել էր տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. 2005թ.-ի 2-րդ եռամսյակի ընթացքում Արմավիր քաղաքի ավագանու կողմից կայացրած բոլոր որոշումների պատճենները,
2. 2005թ.-ի բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի (ապրիլ-հունիս ամիսներ) համար:

Ի պատասխան հարցմանը՝ Ձեր 20.09.05թ.-ի գրությամբ հայտնել եք, որ այդ փաստաթղթերի պատճենները ստանալու համար անհրաժեշտ է տրամադրել մեր կազմակերպության կանոնադրությունը, ինչը չի բխում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

Ուստի, կրկին անգամ խնդրում եմ ղեկավարվելով «ՏԱ մասին» օրենքի 6-րդ հոդվածի եւ Սահմանադրության 27.1 հոդվածի դրույթներով՝ տրամադրել վերոնշյալ տեղեկատվությունը:

Պատրաստ եմ վճարել 10 էջից ավել տեղեկատվության պատճենահանման ծախսերը («ՏԱ մասին» ՀՀ օրենքի հոդված 10):

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
նախագահ՝

Շուշան Դոյրոյան

## Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանին

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ  
 ք.Երեւան, փող. Չարենցի, շենք 1բ, բն. 6  
 Պատասխանող՝ Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարան

### ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄ

#### Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվու- թյունը տրամադրելու պահանջի մասին

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդ-  
 վածի 1-ին կետի պահանջի՝ 15.09.2005թ.-ին Արմավիրի քաղաքապետ Ռ. Խլ-  
 դաթյանին է դիմել Ինֆորմացիայի Ազատության Կենտրոնի Արմավիրի մար-  
 զի իրավաբանը եւ խնդրել էր տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. 2005թ.-ի 2-րդ եռամսյակի ընթացքում Արմավիր քաղաքի ավագանու կողմից կայացրած բոլոր որոշումների պատճենները,
2. 2005թ.-ի բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետ-  
 վությունը 2-րդ եռամսյակի (ապրիլ-հունիս ամիսներ) համար:

Ի պատասխան հարցմանը, Արմավիրի քաղաքապետը 20.09.05թ.-ի գրու-  
 թյամբ հայտնել է, որ այդ փաստաթղթերի պատճենները ստանալու համար  
 անհրաժեշտ է տրամադրել մեր կազմակերպության կանոնադրությունը, ին-  
 չը չի բխում «ՏԱ մասին» ՀՀ օրենքի պահանջներից: 11.01.2006թ.-ին կրկնա-  
 կի հարցում է արվել Արմավիրի քաղաքապետարան. խնդրել ենք մեզ տրա-  
 մադրել վերոնշված տեղեկատվությունը, սակայն ոչ մի պատասխան չի  
 ստացվել պատասխանող կողմից:

#### Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ.

Ղեկավարվելով «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահան-  
 ջով՝ պատասխանող կողմից հայցվոր կազմակերպությանը տրամադրել վե-  
 րոնշված տեղեկատվությունը եւ պատասխանող կողմից ի օգուտ հայցվոր  
 կազմակերպության բռնագանձել հայցվորի կողմից վճարված պետական  
 տուրքի գումարը:

Կից ներկայացնում եմ՝

1. 15.09.2005թ.-ի հարցման պատճենը,
2. 15.09.2005թ.-ի հարցման պատասխանի պատճենը,
3. ԻԱ Կենտրոն»-ի 11.01.2006թ.-ի կրկնակի հարցման պատճենը փոստային  
 առաքման ապացույցի հետ միասին,
4. Հայցադիմում 2 օրինակից,
5. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԻԱ կենտրոնի նախագահ՝

Շ. Դոյրոյան  
 «13» փետրվարի 2006թ.



Գործ թիվ 2-609

2005թ.

**Վ Ճ Ի Ռ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը հետեյալ կազմով**

<p><b>Նախագահող դատավոր՝</b> <b>Քարտուղարությամբ՝</b> <b>Մասնակցությամբ՝</b> <b>Հայցվորի ներկայացուցիչ՝</b> <b>Պատասխանողի ներկայացուցիչ՝</b></p>	<p><b>Ա. Հովսեփյան</b> <b>Ս. Բաղրամյանի</b>  <b>Զ. Ենոքյանի</b> <b>Վ. Խոստիկյանի</b></p>
---	--

Դռնբաց դատական նիստում Արմավիր քաղաքում 2006թ. մարտի 21-ին քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Արմավիրի քաղաքապետարանի՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին:

Դիմելով դատարան՝ հայցվորը հայտնել է, որ համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 15.09.2005թ. Արմավիրի քաղաքապետարան է դիմել իրենց ներկայացուցիչը՝ Արմավիրի մարզի իրավաբանը՝ խնդրելով տրամադրել 2005թ.-ի 2-րդ եռամսյակի ընթացքում Արմավիր քաղաքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումների պատճենները եւ 2005թ. բյուջեի պատճենն ու դրա կատարման 2-րդ եռամսյակի հաշվետվությունը: Ի պատասխան այդ հարցմանը՝ Արմավիրի քաղաքապետարանը պատասխան գրությամբ հայտնել է, որ փաստաթղթերի պատճենները ստանալու համար անհրաժեշտ է իրենց տրամադրել կազմակերպության կանոնադրությունը, որը չի բխում օրենքի պահանջներից, իսկ 11.01.2006թ. հարցմանը որեւէ պատասխան չի տվել:

Խնդրել է պարտավորեցնել Արմավիրի քաղաքապետարանին իրենց տրամադրել նշված տեղեկատվությունը եւ վերադարձնել վճարված պետական տուրքի գումարը:

Պատասխանողի ներկայացուցիչը՝ Արմավիրի քաղաքապետի առաջին օգնական Վրթանես Խոստիկյանը /անձնագիր AA 0340077, տրված 16.04.1996թ. 003-ի կողմից/, ըստ էության հայցի դեմ չառարկելով՝ նշեց, որ տեղեկատվությունը չի տրամադրվել հայցվոր կազմակերպությանը, քանի որ կազմակերպության անունից հանդես եկած Ա. Մկրտչյանը գրությունը ձեւակերպել է սովորական թղթի վրա եւ չի վճարել մատուցվող ծառայության դիմաց: Քաղաքապետի պատասխանում նշվել է, որ պահանջվող փաստաթղթերի պատճենները ստանալու համար անհրաժեշտ է գրությունը ձեւակերպել սահմանված ձեւաթղթի վրա եւ վճարել մատուցված ծառայությունների դիմաց համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով, ինչն

այդպես էլ չի բավարարվել ամբողջությամբ: Դրանից հետո էլ հայցվորի ներկայացուցիչը չի ներկայացել քաղաքապետարան՝ ստանալու պահանջած փաստաթղթերի պատճեններն ու վճարելու դրանց համար եւ առանց պաշտոնական որեւէ մերժում ստանալու՝ դիմել է դատարան:

Լսելով կողմերի ներկայացուցիչներին, հետազոտելով գործի փաստաթղթերը՝ դատարանը գտավ՝ հայցն օրինական է եւ ենթակա է բավարարման՝ համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 130-137 հոդվածներով՝ դատարանը

### Վ Ճ Ո Ւ Ց Ց

Հայցը բավարարել:

1. Պարտավորեցնել Արմավիրի քաղաքապետարանին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին սահմանված կարգով տրամադրել 2005թ. 2-րդ եռամսյակում Արմավիր քաղաքի ավագանու կողմից ընդունված որոշումների պատճենները եւ 2005թ. Արմավիր քաղաքի բյուջեի ու 2-րդ եռամսյակի բյուջեի կատարման հաշվետվության պատճենները:
2. Արմավիրի քաղաքապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 4000 /չորս հազար/ դրամ վճարված պետական տուրքի գումարը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով: Վճռի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան 15-օրյա ժամկետում:

Դ Ա Տ Ա Վ Ո Ր՝

Ա. Հ Ո Վ Ս Ե Փ Յ Ա Ն

## **ԳՈՐԾ 5.**

### **Ինֆորմացիայի ազատության կենտրոնն**

*ընդդեմ*

**Արմավիրի մարզի Լուկաշին գյուղի  
գյուղապետարանի**

## Պործի համառոտ նկարագրությունը

2005թ. նոյեմբերի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Արմավիրի մարզային իրավաբան Արթուր Մկրտչյանը դիմել էր Արմավիրի մարզի Լուկաշին գյուղի գյուղապետ պարոն Մկրտումյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. 2005թ.-ի ընթացքում հողահատկացումների (սեփականության եւ վարձակալության հիմքերով) վերաբերյալ կայացրած որոշումները:
2. Այն անձանց ցանկը, ում հատկացվել են հողատարածությունները:
3. Ի՞նչ գնով են դրանք հատկացվել:

Լուկաշինի գյուղապետարանը հարցումը թողեց անպատասխան:

Կենտրոնը 19.12.2005թ. կրկնակի հարցում ուղարկեց Լուկաշինի գյուղապետարան: Այն եւս մնաց անպատասխան:

2006թ. հունվարի 13-ին ԻԱԿ-ը դիմեց Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարան՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու պահանջով:

Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվությունը տրամադրելու մասին հայցն ընդդեմ Լուկաշինի գյուղապետարանի 2006թ. հունվարի 27-ին առաջին իսկ նիստին բավարարվեց:

## Պորժի նյութերը

46-ի7

14.12.05թ.

Արմավիրի մարզի Լուկաշին գյուղի  
գյուղապետ պարոն Մկրտումյանին

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՅՈՒՄ

Հարգելի պարոն Մկրտումյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 22.11.2005թ.-ին կատարել է հարցում եւ խնդրել է ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ մեզ տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. 2005թ.-ի ընթացքում հողահատկացումների (սեփականության եւ վարձակալության հիմքերով) վերաբերյալ կայացրած որոշումները:
2. Այն անձանց ցանկը, ում հատկացվել են հողատարածությունները:
3. Ի՞նչ գևով են դրանք հատկացվել:

Առ այսօր Ձեր կողմից ոչ մի պատասխան չենք ստացել:

Եւս մեկ անգամ խնդրում ենք սահմանված կարգով մեզ տրամադրել վերոնշյալ տեղեկատվությունը: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին («ՏԱ մասին» ՀՀ օրենք, հոդված 11):

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
Նախագահ՝

Շուշան Դոյրոյան

**Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանին**

**Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ**  
 ք.Երեւան, փող. Չարենցի, շենք 1բ, բն. 6  
 հեռ. Երեւանում՝ 57-83-56, Արմավիրում՝ 6-84-51

**Պատասխանող՝**

**Արմավիրի մարզի Լուկաշին  
 գյուղի գյուղապետարան**

**ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄ****Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման եւ տեղեկատվու-  
 թյունը տրամադրելու մասին**

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդ-  
 վածի 1-ին կետի պահանջի՝ հայցվոր կազմակերպությունը 22.11.2005թ-ին  
 հարցում է արել Արմավիրի մարզի Լուկաշին գյուղի գյուղապետարան եւ  
 խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2005թ.-ի ընթացքում հողահատկացումների (սեփականության եւ վար-  
 ձակալության հիմքերով) վերաբերյալ կայացրած որոշումները,
2. Այն անձանց ցանկը, ում հատկացվել են հողատարածությունները,
3. Ի՞նչ գնով են դրանք հատկացվել:

Հայցվոր կազմակերպությունը ոչ մի պատասխան չի ստացել պատասխա-  
 նող կողմից: Այնուհետեւ 19.12.2005թ.-ին կրկնակի հարցում է արվել Արմա-  
 վիրի մարզի Լուկաշին գյուղի գյուղապետարան. խնդրել ենք մեզ տրամադ-  
 րել վերոնշված տեղեկատվությունը, սակայն նորից ոչ մի պատասխան չի  
 ստացվել պատասխանող կողմից:

**Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ.**

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ  
 հոդվածի 1-ին կետի պահանջով՝ պատասխանող կողմից հայցվոր կազմա-  
 կերպությանը տրամադրել վերոնշված տեղեկատվությունը եւ պատասխա-  
 նող կողմից ի օգուտ հայցվոր կազմակերպության բնագանձել հայցվորի  
 կողմից վճարված պետական տուրքի գումարը:

Կից ներկայացնում եմ՝

1. «ԻԱ Կենտրոն»-ի 22.11.2005թ.-ի հարցման պատճենը փոստային առաք-  
 ման ապացույցի հետ միասին,
2. «ԻԱ Կենտրոն»-ի 14.12.2005թ.-ի կրկնակի հարցման պատճենը փոստա-  
 յին առաքման ապացույցի հետ միասին,
3. Հայցադիմում 2 օրինակից,
4. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԻԱ կենտրոնի նախագահ՝

Շ. Դոյրոյան  
 «13» հունվարի 2006թ.

**Վ Ճ Ի Ռ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով**

**Նախագահող դատավոր՝  
Քարտուղարությամբ՝  
Մասնակցությամբ՝  
Հայցվորի ներկայացուցիչ՝**

**Ա. Աղամյան  
Յ. Սիմոնյանի  
  
Ա. Մկրտչյանի**

2006թ. հունվարի 27-ին Արմավիր քաղաքում դռնբաց դատական նիստում քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Արմավիրի մարզի Լուկաշինի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջի պասին:

Հայցվորի ներկայացուցիչ Արթուր Մակրտչյանը հայցը պնդեց եւ դատարանին հայտնեց, որ համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի հայցվոր կազմակերպությունը 22.11.2005թ. պատասխանող Արմավիրի մարզի Լուկաշինի գյուղապետարանին խնդրել է տրամադրել 2005թ. ընթացքում հողհատկացումների վերաբերյալ կայացրած որոշումները, այն անձանց ցանկը, ում հատկացվել են հաշվետվություններ, ինչպես նաեւ հատկացման գնի վերաբերյալ տեղեկություններ, սակայն պատասխանողի կողմից ոչ մի պատասխան չի տրվել: Այնուհետեւ 19.12.2005թ. կրկին անգամ հայցվոր կազմակերպությունը պատասխանողից խնդրել է տրամադրել վերը նշված տեղեկատվությունը, սակայն նորից ոչ մի պատասխան չի ստացել: Հայցվորի ներկայացուցիչ Ա. Մկրտչյանը դատարանից խնդրեց Արմավիրի մարզի Լուկաշինի գյուղապետարանին պարտավորեցնել տրամադրել վերը նշված տեղեկությունները եւ վերջինիցս հոգուտ հայցվոր կազմակերպության բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Պատասխանող Արմավիրի մարզի Լուկաշինի գյուղապետարանը պատշաճ կարգով ծանուցված լինելով դատական նիստի վայրի եւ ժամանակի մասին չի ներկայացել դատական նիստին, ուստի դատարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118 հոդվածի 2-րդ մասով քաղաքացիական գործը քննեց նրա բացակայությամբ:

Լսելով հայցվորի ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով եւ գնահատելով քաղաքացիական գործի ապացույցները՝ դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է, այն բխում է «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 6-րդ եւ 14-րդ հոդվածների 1-ին կետերի պահանջնորից, ուստի ենթակա է բավարարման:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 եւ 137 հոդվածներով՝ դատարանը

**Վ Ճ Ո Շ Ց**

Չայցը բավարարել:

1. Պարտավորեցնել Արմավիրի մարզի Լուկաշինի գյուղապետարանին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին տրամադրել 2005թ. ընթացքում հողհատկացումների / սեփականության եւ վարձակալության իրավունքով/ վերաբերյալ կայացված որոշումների պատճենները, այն անձանց ցանկը, ում հատկացվել են հողատարածությունները, ինչպես նաեւ դրանց հատկացման գնի վերաբերյալ տեղեկությունները:

2. Արմավիրի մարզի Լուկաշինի գյուղապետարանից հոգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 4.000/չորս հազար/ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան 15-օրյա ժամկետում:

Դ Ա Տ Ա Վ Ո Ր՝

Ա. Ա Դ Ա Մ Յ Ա Ն



## **ԳՈՐԾ 6.**

### **Ինֆորմացիայի ազատության կենտրոնն**

*ընդդեմ*

**Կոսայի մարզի Նուռնուս գյուղի  
գյուղապետարանի**

## Գործի համառոտ նկարագրությունը

16.01.2006թ. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Կոտայքի մարզային իրավաբան Ռոբերտ Ղազարյանը տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկել Նուռնուս գյուղի գյուղապետ Գ. Մկրտչյանին՝ խնդրելով տրամադրել այն քաղաքացիների տվյալները, որոնք ամառանոցներ կառուցելու նպատակով հողամասեր են ստացել Նուռնուս համայնքի տարածքում:

Նուռնուսի գյուղապետն անպատասխան էր թողել հարցումը: Անհրաժեշտ տեղեկությունները ստանալու համար Ռ. Ղազարյանը 23.02.2006թ. պաշտոնատար անձի անգործությունը վիճարկելու մասին հայց ներկայացրեց Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան:

14.03.2006թ. դատական առաջին նիստին Նուռնուսի գյուղապետ Գ. Մկրտչյանը դիմում ներկայացրեց՝ խնդրելով գործը քննել իր բացակայությամբ եւ հայտնելով, որ հայցադիմումում նշված փաստերը համապատասխանում են իրականությանը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործը քննության առնվեց գյուղապետի բացակայությամբ: Նախագահող դատավոր Գ. Հեբոյանը հենց առաջին նիստի ժամանակ էլ բավարարեց հայցը: 21.03.2006թ. Նուռնուսի գյուղապետ Գ. Մկրտչյանը տրամադրեց պահանջվող ողջ տեղեկատվությունը:

## Փորձի նյութերը

No 01-02

16.01.06թվ.

**Կոտայքի մարզի Նուռնուսի  
գյուղապետ պարոն Գ. Մկրտչյանին**

Դեռևս 70-80-ական թվականներին Նուռնուս համայնքի տերիտորիայից քաղաքացիներին են հատկացվել հողամասեր՝ ամառանոցներ կառուցելու հողերը նպատակային օգտագործելու համար, սակայն որոշ քաղաքացիներ, ստանալով հողամասերը, դառնալով այգեգործական ընկերության անդամներ, չեն մշակել եւ չեն օգտագործում նշված հողամասերը:

Անհրաժեշտություն առաջանալու կապակցությամբ եւ ղեկավարվելով 23.09.03թ. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով՝ խնդրում եմ նշված օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի եւ 9-րդ հոդվածի համաձայն 5-օրյա ժամկետում գրավոր ներկայացնել այն հողամասերի համարները եւ այն քաղաքացիների տվյալները, ովքեր չեն օգտագործում իրենց հատկացված հողամասերը (ամառանոցներ):

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
մարզային իրավաբան՝

Ռ. Ղազարյան

**Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանին**

**Դիմող՝** Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
իրավաբան Ռոբերտ Նիկոլայի Ղազարյան  
ք. Երեւան, Մոսկովյան նրբանցք, տուն 50

**ընդդեմ՝** Կոտայքի մարզի Նուռնուսի գյուղապետ  
**Գ. Սկրտչյանի**

**Դ Ի Մ ՈՒ Մ****պաշտոնատար անձի անգործությունը վիճարկելու մասին**

2006թ.-ի հունվարի 16-ին իմ կողմից գրավոր հարցում է արվել Նուռնուսի գյուղապետ Գ. Սկրտչյանին՝ խնդրելով գրավոր հայտնել այն քաղաքացիների տվյալները, որոնք ստացել են հողամասեր ամառանոցների համար Նուռնուսի համայնքի տերիտորիայում, եւ դրանք տարիներ շարունակ չեն օգտագործում: Պատասխանը պետք է ներկայացվեր 5 օրյա ժամկետում, սակայն ինչպես այդ գրության, այնպես էլ հիշեցման կարգով ուղարկված գրությանը մինչեւ օրս պատասխան չի ստացվել:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» 23.09.2003թ.-ի օրենքի 7-րդ հոդվածի՝ գյուղապետը պարտավոր է իմ հարցմանը պատասխանել սահմանված ժամկետում, որը չի կատարել, իսկ համաձայն նույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի՝ տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել դատարան:

Վերոգրյալի հիման վրա խնդրում եմ դատարանին պարտավորեցնել Կոտայքի մարզի Նուռնուսի գյուղապետին գրավոր տեղեկություններ տալ Նուռնուսի համայնքի տերիտորիայում քաղաքացիներին հատկացված եւ նրանց կողմից չօգտագործված ամառանոցային հողամասերի վերաբերյալ՝ նշելով այդ քաղաքացիների տվյալները:

Կից ներկայացնում եմ՝

1. Հարցման պատճենը
2. Կապի անդորրագիրը՝ թիվ 192
3. Հարցման մասին հիշեցում
4. Պետական տուրքի անդորրագիր
5. Դիմումի պատճենը
6. Իմ անձնագրի պատճենը
7. Սոց. քարտի պատճենը

Դիմող՝

Ռոբերտ Ղազարյան  
«23» փետրվարի 2006թ

գործ 2-199

23.02.2006

**Վ Ճ Ի Ռ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Կոտայքի մարզի առաջին աստանի դատարանը հետեւյալ կազմով**

**Նախագահող դատավոր՝**  
**Քարտուղար՝**  
**Մասնակցությամբ՝**  
**Դիմող՝**

**Գ. Հեբոյան**  
**Թ. Քարամյան**  
**Ռ. Ղազարյան**

Դռնբաց դատական նիստում ք. Աբովյանում 2006թ. մարտի 14-ին

Քննեց քաղաքացիական գործն ըստ դիմումի՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի իրավաբան Ռոբերտ Նիկոլայի Ղազարյանի /անձնագիր AA 0405615, տրված 04.06.1996թ.-ին 019-ի կողմից, սոցիալական քարտ 3510400305, տրված 26.01.2005թ.-ին/ ընդդեմ Կոտայքի մարզի Նուռնուսի գյուղապետի՝ պաշտոնատար անձի գործողությունները գանգատարկելու մասին եւ

**Պ Ա Ր Չ Ե Ց**

Դիմող ԻԱ կենտրոնի իրավաբան Ռոբերտ Նիկոլայի Ղազարյանը, դիմելով դատարանին, հայտնեց, որ 2006թ.-ի հունվարի 16-ին իր կողմից գրավոր հարցում է արվել Նուռնուսի գյուղապետ Գ. Մկրտչյանին խնդրելով գրավոր հայտնել այն քաղաքացիների տվյալները, որոնք Նուռնուս համայնքի տերիտորիայիում ստացել են հողամասեր ամառանոցների համար եւ այն տարիներ շարունակ չեն օգտագործում: Պատասխանը պետք է ներկայացվեր 5 օրյա ժամկետում, սակայն ինչպես այդ գրության, այնպես էլ հիշեցման կարգով ուղարկված գրությանը մինչեւ օրս չի պատասխանվել: Համաձայն «ՏԱ մասին» 23.09.2003թ.-ի օրենքի 7-րդ հոդվածի՝ գյուղապետը պարտավոր է իր հարցմանը պատասխանել սահմանված ժամկետում, որը չի կատարել, իսկ համաձայն նույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի՝ տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել դատարան:

Դիմողը պահանջը պնդեց եւ խնդրեց պարտավորոցնել Կոտայքի մարզի Նուռնուսի գյուղապետին գրավոր տեղեկություններ տալ Նուռնուսի համայնքի տերիտորիայում քաղաքացիներին հատկացված եւ նրանց կողմից չօգտագործված ամառանոցային հողամասերի վերաբերյալ, նշելով այդ քաղաքացիների տվյալները:

Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ղեկավար Գ. Մկրտչյանը խնդրել է գործը քննել իր բացակայությամբ, հայտնելով, որ դիմումում նշված փաստերը

համապատասխանում են իրականությանը, եւ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին կետի՝ գործը քննության առնվեց գյուղապետի բացակայությամբ:

Դատարանը, լսելով դիմողին, քննության առնելով գործում առկա փաստական տվյալները, գտավ, որ դիմումը հիմնավոր է եւ ենթակա է բավարարման: Համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի գյուղապետը պարտավոր էր հարցմանը պատասխանել 5 օրյա ժամկետում, իսկ նրա անգործությունը նույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի կարգով կարող է բողոքարկվել դատարան:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-163 հոդվածների՝ պետք է պարտավորեցնել Նուռնուս համայնքի ղեկավարին տեղեկություններ տալ Նուռնուսի համայնքի տերիտորիայում քաղաքացիներին հատկացված եւ նրանց կողմից չօգտագործված ամառանոցային հողամասերի վերաբերյալ՝ նշելով այդ քաղաքացիների տվյալները:

Նկատի ունենալով, որ պետական տուրքը վճարվել է դիմողի կողմից, դատարանը հանգում է այն հետեւության, որ պետական տուրքի վճարման հարցը պետք է համարել լուծված:

Վերը շարադրվածի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 138 հոդվածներով՝ դատարանը

### Վ Ճ Ո Շ Ց

Դիմումը բավարարել:

Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ղեկավարին պարտավորեցնել տեղեկություններ տալ Նուռնուսի համայնքի տերիտորիայում քաղաքացիներին հատկացված եւ նրանց կողմից չօգտագործված ամառանոցային հողամասերի վերաբերյալ՝ նշելով այդ քաղաքացիների տվյալները:

Պետական տուրքի վճարման հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում վճիռը կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին 15-օրյա ժամկետում:

Դ Ա Տ Ա Վ Ո Ր՝

Գ. ՀԵԲՈՅԱՆ

## **ԳՈՐԾ 7.**

### **Մարտիրոս Սիմոնի Կարապետյանի**

*ընդդեմ*

**«Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն»  
դուլիկլինիկա» ՓԲԸ-ի եւ ՀՀ Առողջա-  
դահության նախարարության**

## Գործի համառոտ նկարագրությունը

Գյումրի քաղաքի բնակիչ Մարտիրոս Կարապետյանը 2005թ. հունիսի 25-ին տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել էր Գյումրիի «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն պոլիկլինիկա ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Ալթունյանին եւ ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրելով տրամադրել:

1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2001-2005թթ. պոլիկլինիկային հատկացված կինեզոլոգի հաստիքի առկայության մասին տեղեկատվություն,
2. աշխատանքային պայմանագրի օրինակը,
3. հաստիքների կրճատման պատճառով իրեն աշխատանքից ազատելու հրամանի քաղվածքը,
4. աշխատավարձի չափի մասին տվյալները:

Չստանալով հարցումների պատասխանը՝ քաղաքացին դիմեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Շիրակի մարզային իրավաբան Արտուշ Գրիգորյանին: 18.08.2005թ. Կենտրոնը հայց ներկայացրեց Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան քաղաքացու ոտնահարված իրավունքը վերականգնելու համար:

Սակայն, մինչ դատական նիստի նշանակումը ընկերությունը ամբողջությամբ տրամադրեց պահանջվող տեղեկատվությունը:

Հետեւաբար, 19.10.2005թ. Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանը հայցի պահանջը մերժեց այն պատճառաբանությամբ, որ 30 օրվա ընթացքում փնտրվող տեղեկությունը նյութական կրիչով ընկերությունը տրամադրել է քաղաքացուն:



## Փորձի նյութերը

**«Բեռլին» մոր եւ մանկան կենտրոնի  
գործադիր տնօրեն Գ. Ալթունյանին**

**Դիմող՝ Մարտիրոս Սիմոնի Կարապետյանից**  
բնակ. ք. Գյումրի, փ. Կատովսկի, տուն 30

### **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ**

Հարգելի պարոն Գ. Ալթունյանին,

Քանի որ, համաձայն ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի եւ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ ստանալու դա, ուստի խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ, թե Գյումրու «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոնում 2001-2005թթ. առկա է արդյոք կինեզոլոգի հաստիքը, եւ եթե այո, ապա խնդրում եմ վերը նշված հասցեով ուղարկել կինեզոլոգի հաստիք իջեցնելու հրամանի քաղվածքը՝ նշելով նաեւ աշխատավարձի չափը:

Համաձայն ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30 օրյա ժամկետ): Ուստի, ելնելով վերը նշվածից՝ խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (հոդված 11):

Դիմող՝

Կարապետյան Մ.

21.07.2005թ.

**ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանին**

**Հայցվոր՝ Մարտիրոս Սիմոնի Կարապետյան**  
 ք.Գյումրի, փող. Կատովսկի, 109/079

**Պատասխանող՝ «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն  
 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի  
 գործադիր տնօրեն Գագիկ Ալթունյան**  
 ք.Գյումրի, Հաղթանակի պողոտա, 24

**Պատասխանող՝ ՀՀ Առողջապահության նախարարություն**  
 ք.Երեւան, 375010, Թումանյան, 8

**ՀԱՅՑԱԴԻՍՈՒՄ****տեղեկատվություն չտրամադրելու համար վարչական  
 պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին**

Ես՝ ըստ սույն հարուցված հայցի հայցվոր Մարտիրոս Սիմոնի Կարապետյանս, իմ աշխատանքային իրավունքների պաշտպանության համար համաձայն ՀՀ Սահմանադրության 24 հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» 23 սեպտեմբերի 2003թ. ՀՀ օրենքի 9 հոդվածի 1-ին մասի, որպես տեղեկատվություն փնտրող, պատշաճ ձեւով 2005թ. հուլիսի 25-ի տեղեկատվություն ստանալու հարցմամբ պատվիրված նամակով դիմեցի սույն քաղաքացիական գործով պատասխանողներ տեղեկատվությունը տնօրինող Գյումրու «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն պոլիկլինիկա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Ալթունյանին եւ ՀՀ առողջապահության նախարարությանը.

- ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2001-2005թթ. պոլիկլինիկային հատկացված կինեզոլոգի հաստիքի առկայության մասին,
- աշխատանքային պայմանագրի օրինակը,
- հաստիքների կրճատման պատճառով ինձ աշխատանքից ազատելու հրամանի քաղվածքը,
- աշխատավարձի չափի մասին տվյալները ինձ տրամադրելու համար:

Սակայն, թե՛ հաստիքների կրճատման պատճառով ինձ հետ 01.04.2005թ. աշխատանքային պայմանագիրը դադարեցրած, փնտրվող տեղեկատվությունը տնօրինող Գյումրու «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն պոլիկլինիկա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Ալթունյանը, եւ թե՛ ՀՀ առողջապահության նախարարությունը, խախտելով «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի եւ 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի պահանջները, հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, իսկ ստացել են 27.07.2005թ., չկատարեցին տեղեկատվությունը տալու պարտականությունը:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ համաձայն ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 83 հոդվածի 1-ին մասի՝ սույն հայցադիմումը ընդունել Ձեր վարույթը եւ ղեկավարվելով ՀՀ սահմանադրության 24-րդ հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի եւ 12-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համաձայն «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 1897 հոդվածի, քննության առնելով այն ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-133 հոդվածների՝ կայացնել վճիռ.

1. Տեղեկատվությունը տնօրինող սույն քաղաքացիական գործով պատասխանողներից սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսունապատիկի չափով տուգանքի բռնագանձման մասին,
2. ինձ՝ հայցվորիս, փնտրվող տեղեկատվությունը,
  - ՀՀ առողջապահության նախարարության կողմից պոլիկլինիկայում 2001-2005թթ. կինեզոլոգի հաստիքի հաստատման մասին՝ նշելով եւ համապատասխան փաստաթղթերով հիմնավորելով հաստատման տարին եւ ամսաթիվը,
  - աշխատանքային պայմանագրի իմ օրինակը,
  - աշխատանքից արձակման հրամանի քաղվածքը,
  - ամսական միջին աշխատավարձի չափի մասին
  - փնտրվող տեղեկատվությունը հատկացնելու մասին:

Տուգանքի նշանակումը պատասխանողներին չի ազատում փնտրվող տեղեկատվությունը տրամադրելու պարտականության կատարումից:

Սույն գործը Ձեր վարույթն ընդունելու եւ գործի ելքով ճիշտ վճիռ կայացնելու համար կից ներկայացնում եմ.

1. Տեղեկատվություն ստանալու հարցման եւ դրանք պատասխանող կողմերին ուղարկելու ապացույցների պատճենները - 6 թերթ,
  2. Տեղեկատվության ազատության կենտրոնի Շիրակի մարզի իրավաբանին ուղղված դիմում - բողոքի պատճենը - 2 թերթ,
  3. Հայցադիմումի պատասխանողներին հասցեագրված օրինակները - 2 թերթ,
  4. Անդորրագիրը պետական տուրքը մուծելու մասին - 1 թերթ:
- Առդիր 11 թերթ առաջին հասցեով:

Հայցվոր՝

Մ. Կարապետյան

18.08.2005թ.

**«Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն  
պոլիկլինիկա» ՓԲԸ****ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ**

Ի պատասխան Ձեր՝ 21.07.2005թ. հարցման՝ հայտնում ենք, կինեզոլոգի հատուկ Առողջապահության նախարարությունից իջեցված հաստիք չի եղել. այն ստեղծվել է վճարովի պայմանագրային սկզբունքով, տնօրենի կողմից, ուստի, պայմանագրային սկզբունքները չապահովելու համար նույն տնօրենի հրամանով կրճատվել է կինեզոլոգի վճարովի պայմանագրային հաստիքը ս/թ 2004թ. ապրիլի 1-ից:

Կից ներկայացնում ենք 2001թ., 2003թ., 2004թ. աշխատանքային պայմանագրերի պատճենները:

Գործադիր տնօրեն՝

Գ. Ալթունյան

22.08.2005թ.

Գործ 2-3276

ք. Գյումրի 2005թ.

**Վ Ճ Ի Ռ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով.**

<b>Նախագահող դատավոր՝</b>	<b>Յ. Հովհաննիսյան</b>
<b>Քարտուղարությամբ՝</b>	<b>Յ. Աղաքարյան</b>
<b>Հայցվոր՝</b>	<b>Մ. Կարապետյան</b>
<b>Հայցվորի ներկ.՝</b>	<b>Ա. Գրիգորյան</b>
<b>Պատասխանողի ներկ.՝</b>	<b>Թ. Յայլոյան</b>

2005թ. հոկտեմբերի 19-ին Գյումրիում դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ հայցի Մարտիրոս Սիմոնի Կարապետյանի ընդդեմ «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն պոլիկլինիկա ՓԲԸ-ի, ՀՀ առողջապահության նախարարության՝ տեղեկատվություն չտրամադրելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին:

Դատաքննությամբ եւ գործով ձեռք բերված ապացույցներով դատարանը պարզեց հետեւյալը.

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնել է, որ իր աշխատանքային իրավունքների պաշտպանության համար համաձայն ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի եւ «ՏԱ մասին» 23 սեպտեմբերի 2003թ. ՀՀ օրենքի 1-ին մասի՝ որպես տեղեկատվություն փնտրող պատշաճ ձեւով 2005թ. հուլիսի 25-ի տեղեկատվություն ստանալու հարցմամբ պատվիրված նամակով դիմել է պատասխանողներ տեղեկատվությունը տնօրինող Գյումրու «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն պոլիկլինիկայի գործադիր տնօրեն Գագիկ Ալթունյանին եւ Առողջապահության նախարարությանը՝ նախարարության կողմից 2001-2005թթ. պոլիկլինիկային հատկացված կինեզոլոգի հաստիքի առկայության մասին տվյալներ, աշխատանքային պայմանագրի օրինակը, հաստիքների կրճատման պատճառով իրեն աշխատանքից ազատելու հրամանի քաղվածքը, աշխատավարձի չափի մասին տվյալները իրեն տրամադրելու համար:

Հաստիքների կրճատման պատճառով հայցվորի հետ 01.04.2005թ. աշխատանքային պայմանագիրը դադարեցրած, փնտրվող տեղեկատվությունը տնօրինող Գյումրու «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն պոլիկլինիկա ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Ալթունյանը եւ ՀՀ առողջապահության նախարարությունը, խախտելով «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 7-րդ եւ 9-րդ հոդվածների 7-րդ մասի 2-րդ կետի պահանջները, հարցումը ստանալուց հետո 5 օրյա ժամկետում չեն կատարել տեղեկատվությունը տալու պարտականությունը:

Հայցվորը դատարանից խնդրել է, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության

24-րդ հոդվածով, «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի եւ 12-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189-րդ հոդվածի՝ կայացնել վճիռ՝ պատասխանողներից սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսունապատիկի չափով տուգանքի բռնագանձման մասին եւ հայցվորին տրամադրել փնտրվող տեղեկատվությունը:

Դատաքննության ընթացքում հայցվորը պնդել է հայցը, ավելացնելով, որ չնայած «Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿՇՄ մասնաճյուղի նախագահի կողմից ուղարկած հարցմանը՝ 06.05.2005թ. «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն ՓԲԸ-ն պատասխանել է եւ 21.07.2005թ. իր երկրորդ հարցմանը նույնպես պատասխանել է, սակայն, ինքը այդ պատասխանները բավարար չի համարում եւ պնդում է, որ իրեն լիարժեք տեղեկատվություն չի տրամադրվել, որի համար չի հրաժարվում պահանջից:

Պատասխանողի ներկայացուցիչ Թ. Յայլոյանը հայցը չի ընդունել՝ պատճառաբանելով, որ հայցվորի աշխատավարձի չափի վերաբերյալ ՓԲԸ-ին 22.04.2005թ. հարցում է ուղղել «Երիտասարդ իրավաբանների սոցիալական» ՀԿՇՄ մասնաճյուղի նախագահ Օ. Գեւորգյանը եւ հարցումը ստանալուց անմիջապես հետո փոստով 06.05.2005թ. հարցման պատասխանը ուղարկվել է: 21.07.2005թ. կրկին հարցում են ստացել, որում գրեթե նույն տեղեկատվությունն էր պահանջվել: Քանի որ նույն պահանջն է եղել հարցման մեջ, ուստի, որոշել են տրվող տեղեկատվությունը ստուգել, հետո նոր տրամադրել, բացի այդ, անհրաժեշտ է եղել հանել պայմանագրի պատճենները: 22.08.2005թ. պատվիրված նամակով ուղարկել են պատասխանը: Փաստորեն, տեղեկատվությունը, որը իրենցից պահանջվել է, ժամանակին տրամադրվել է հայցվորին, որպիսի պատճառաբանությամբ էլ հայցը ենթակա է մերժման:

Այսպիսով, լսելով կողմերին, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները՝ դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է եւ ենթակա մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

Հայցվոր կողմի տեղեկատվություն ստանալու 27.04.2005թ. թվագրությամբ «Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿՇՄ մասնաճյուղի նախագահի կողմից ուղարկված հարցմանը Գյումրու «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն ՓԲԸ-ն պատասխանել է 06.05.2005թ.՝ դրանում նշելով հայցվորին հետաքրքրող տեղեկատվությունը, հայտնելով նրա աշխատավարձի չափի մասին: Չբավարարվելով նշված պատասխանով՝ հայցվորը 21.07.2005թ. դիմել է «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն ՓԲԸ-ին՝ իր աշխատանքային պայմանագրերը նյութական կրիչով ստանալու համար, որի պատճենը ուղարկվել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ տեղեկատվություն ստանալու հարցմամբ: Նշված հարցմանը ամսվա ընթացքում, այսինքն

հայցվոր կողմը իրեն հետաքրքրող տեղեկատվությունները ստացել է վերը նշված երկու պատասխաններով:

Այն, որ հայցվոր կողմը նշել է, թե իբր իր հարցումներին չեն պատասխանել եւ տեղեկատվություն չտրամադրելու համար խնդրել է վարչական պատասխանատվության ենթարկել պատասխանողներին իրականությանը չի համապատասխանում, քանի որ, ինչպես արդեն վերը նշվեց, նրա հարցումներին երկու անգամ լիարժեք պատասխան է տրվել: Ինչ մնում է 2002թ. կողմերի միջեւ կնքված աշխատանքային պայմանագրի բացակայությունը վիճարկելուն, ապա դատաքննությամբ ձեռք բերված տվյալներով հաստատվեց, որ նշված թվականին կողմերի միջեւ պայմանագիր չի կնքվել եւ շարունակել է գործել նրանց միջեւ ընդամենը մեկ ամիս առաջ կնքված 02.12.2001թ. պայմանագիրը՝ համաձայն պայմանագրի 6-րդ կետի:

Ինչ մնում է ՀՀ առողջապահության նախարարությանը տեղեկատվություն չտալու համար որպես պատասխանող վարչական պատասխանատվության ենթարկելուն, ապա դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով դատարանը հաստատված համարեց, որ պատշաճ պատասխանող չէր կարող լինել, քանի որ հայցվոր կողմին հետաքրքրող տեղեկատվությանը նա չի տիրապետել: Եթե հայցվորի գրավոր երկրորդ հարցումը պատասխանողը ստացած լիներ, ապա չէր կարող լիարժեք պատասխան ներկայացնել, քանի որ հարցման մեջ նշված տեղեկատվությունը տիրապետում էր ոչ թե նախարարությունը, այլ Շիրակի մարզի առողջապահության վարչությունը:

Վերը նշված հիմքով դատարանը գտնում է, որ ՀՀ առողջապահության նախարարությունը վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքեր չկան եւ այդ պահանջը նույնպես ենթակա է մերժման:

Դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով՝ դատարանը

### Վ Ճ Ո Շ Ց

Մարտիրոս Սիմոնի Կարապետյանի հայցն ընդդեմ «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն ՓԲ ընկերության գործադիր տնօրենի եւ ՀՀ առողջապահության նախարարությանը վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին մերժել անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Յ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԳՈՐԾ 8.**

**«Աֆիլետ» ավտոարորդների իրավունքների դաժժանության կենտրոն**

*ընդդեմ*

**Քնադատականության նախարարության**



## Փորձի նյութերը

**Երեւան քաղաքի կենտրոն եւ Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարան**

**Դիմող՝ «Աքիլեւս» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպություն**  
ք. Երեւան, Զր. Ներսիսյան 1, քն. 78

**Պատասխանող՝ ԶԶ բնապահպանության նախարարություն**  
ք. Երեւան, Կառավարության տուն 3

### **ԴԻՄՈՒՄ**

**պետական մարմնի եւ դրանց պաշտոնատար անձանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու մասին**

«Աքիլեւս» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպությունը, համաձայն ԶԶ Սահմանադրության 27 հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի, որպես տեղեկատվություն փնտրող, պատշաճ ձեւով 2005թ. դեկտեմբերի 27-ին տեղեկատվություն ստանալու հարցմամբ պատվիրված նամակով՝ 26.12.2005թ. թիվ 88-108, անդորրագիր թիվ 1118, դիմել է սույն քաղաքացիական գործով պատասխանողին՝ տեղեկատվությունը տնօրինող ԶԶ բնապահպանության նախարարությանը՝ ԶԶ Կառավարության «Ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումների լիցենզավորման կարգը եւ լիցենզիայի ձեւը հաստատելու մասին» 15.09.2005թ. թիվ 1600 որոշմամբ 2005թ. դեկտեմբերի 20-23 անցկացված մրցույթին վերաբերող ներքնաշյալ տվյալներ ստանալու համար՝

- լիցենզավորման հանձնաժողովի կազմը,
- մրցույթի հայտատու կազմակերպությունների ցուցակը՝ նշելով մարզերը,
- մրցույթին մասնակցող կազմակերպությունների ցուցակը՝ նշելով լիցենզավորող հանձնաժողովի եզրակացությունները,
- մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների ցուցակը.
- «Լիցենզավորման մասին» ԶԶ օրենքի 42 հոդվածի համաձայն՝ ե՞րբ, որտե՞ղ եւ ո՞ր կազմակերպություններն են մասնակցել լսումների եւ ովքե՞ր են անցկացրել լսումները.
- լեցենզավորող հանձնաժողովը ո՞ր չափանիշներով է ղեկավարվել կազմակերպություններին մրցույթում հաղթող ճանաչելու համար.
- տրամադրել լիցենզավորող հանձնաժողովի կանոնադրությունը:

Սակայն, ԶԶ բնապահպանության նախարարությունը, խախտելով «ՏԱ մասին» ԶԶ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, հարցումն ստանա-

լուց հետո («Աքիլլես» կազմակերպության թիվ 88-108 նամակը ՀՀ բնապահպանության նախարարությունը ստացել է 29.12.2005թ., մուտքագրված թիվ 5-2148) 5 օրյա ժամկետում չի տրամադրել վերոնշված տեղեկությունը եւ մինչ օրս չի տվել որեւէ պատասխան:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի, 12-րդ հոդվածի 3-րդ կետի, 14-րդ հոդվածի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի պահանջներով՝ խնդրում եմ պարտավորեցնել տեղեկատվություն տնօրինող ՀՀ բնապահպանության նախարարությանը տրամադրել «Աքիլլես» ԱԻՊԿ հասարակական կազմակերպությանը փնտրվող տեղեկությունը:

Կից ներկայացնում եմ՝

1. Դիմում երկու օրինակից,
2. «Աքիլլես» կազմակերպության 26.12.2005թ. թիվ 88-108 նամակի պատճենը - 1 թերթ
3. 27.12.2005թ. թիվ 1118 պատվիրված նամակի անդորրագիր - 1 հատ
4. Անդորրագիր պետական տուրքը վճարելու մասին - 1 հատ

Հայցվոր՝  
«Աքիլլես» ԱԻՊԿ ՀԿ նախագահ՝

Է. Հովհաննիսյան

**Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ  
համայնքների առաջին ատյանի դատարանի  
դատավոր՝ Ռ. Ներսիսյանին**

**Պատասխանող՝ ԶԶ բնապահպանության նախարարություն**  
ք. Երեւան-10, Զանրապետության հրապարակ  
Կառավարական 3 շէնք

**ՊԱՏԱՍԽԱՆ**

**«Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն  
հասարակական կազմակերպության դիմումի**

Համաձայն ԶԶ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի՝ դատարան է ներկայացվում «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության կողմից ընդդեմ ԶԶ բնապահպանության նախարարության դատարան ներկայացված դիմումի պատասխան եւ հայտնվում հետեւյալը.

Դիմումատուի դիմումը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ՝ դիմումատուն հանդիսանում է հասարակական կազմակերպություն, որի հիմնադիր փաստաթուղթը նրա կանոնադրությունն է, որը պետք է բովանդակի կազմակերպության գործունեության առարկան եւ նպատակները: Դիմումատուի կողմից ԶԶ բնապահպանության նախարարություն հասցեագրված դիմումում կազմակերպության գործունեության առարկայի կամ նպատակների մասին որեւէ նշում չկա:

Համաձայն Սահմանադրության 42.1-րդ հոդվածի՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները տարածվում են նաեւ իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությունը կիրառելի են դրանց նկատմամբ:

Համաձայն ԶԶ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 5-րդ կետի՝ բացառապես ԶԶ օրենքներով է սահմանվում իրավաբանական անձանց՝ առեւտրային գատնիք չհամարվող տեղեկությունների ցանկը: Համաձայն ԶԶ Սահմանադրության 23-րդ հոդվածի երկրորդ մասի՝ առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահանջել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով:

Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով: ԶԶ բնապահպանության նախարարությունը իրազեկված չէ դիմումատուի կողմից տեղեկությունների հավաքման նպատակների մասին: ԶԶ Սահմանադրության 23-րդ հոդվածի երկրորդ մա-

սի պահանջի հիմքով դիմումատու «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության կողմից դատարան ներկայացված դիմումն անհիմն է եւ ենթակա է մերժման:

ՀՀ բնապահպանության  
նախարարության ներկայացուցիչ՝

Ա. Բազրատունի

Գործ թիվ 2-1462

2006 թ.

**Վ Ճ Ի Ռ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով**

<b>Նախագահությամբ, դատավոր՝</b>	<b>Ռ. Ներսիսյանի</b>
<b>Քարտուղարությամբ՝</b>	<b>Ս. Կիրակոսյանի</b>
<b>Մասնակցությամբ</b>	
<b>Դիմողի ներկայացուցիչներ՝</b>	<b>Էդ. Հովհաննիսյանի</b>
	<b>Ա. Պետրոսյանի</b>
<b>Պատասխանողի ներկայացուցիչ՝</b>	<b>Ա. Բագրատունու</b>

2006թ. մայիսի 24-ին դռնբաց դատական նիստում դատարանը քննության առավ քաղաքացիական գործն ըստ դիմումի «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության՝ պետական մարմնի եւ դրանց պաշտոնատար անձանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու մասին.

Դատաքննությամբ դատարանը պարզեց հետեւյալը. դիմողի ներկայացուցիչները, պնդելով պահանջը, դատարանին հայտնեցին, որ «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ, համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, որպես տեղեկատվություն փնտրող, պատշաճ ձեւով 2005թ. դեկտեմբերի 27-ին տեղեկատվություն ստանալու հարցմամբ պատվիրված նամակով դիմել է պատասխանողին՝ տեղեկատվությունը տնօրինող Բնապահպանության նախարարությանը՝ ՀՀ Կառավարության «Ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումների լիցենզավորման կարգը եւ լիցենզիայի ձեւը հաստատելու մասին» 15.09.2005թ. թիվ 1600 որոշմամբ 2005թ. դեկտեմբերի 20-23 անցկացված մրցույթին վերաբերող ներքոնշյալ տվյալներ ստանալու համար.

- լիցենզավորման հանձնաժողովի կազմը,
- մրցույթի հայտատու կազմակերպությունների ցուցակը՝ նշելով մարզերը.
- մրցույթին մասնակցող կազմակերպությունների ցուցակը՝ նշելով լիցենզավորող հանձնաժողովի եզրակացությունները,
- մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների ցուցակը,
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 42 հոդվածի համաձայն՝ ե՞րբ, որտե՞ր եւ ո՞ր կազմակերպություններն են մասնակցել լսումների եւ ովքե՞ր են անցկացրել լսումները,
- լիցենզավորող հանձնաժողովը ո՞ր չափանիշներով է ղեկավարվել կազմակերպություններին մրցույթում հաղթող ճանաչելու համար.

- տրամադրել լիցենզավորող հանձնաժողովի կանոնադրությունը:

Սակայն, ՀՀ բնապահպանության նախարարությունը, խախտելով «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, հարցումն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում չի տրամադրել վերոնշյալ տեղեկությունը եւ մինչ օրս չի տվել որեւէ պատասխան:

Խնդրեցին պարտավորեցնել տեղեկատվություն տնօրինող ՀՀ Բնապահպանության նախարարությանը տրամադրել «Աքիլլես» ԱԻՊԿ հասարակական կազմակերպությանը փնտրվող տեղեկությունը:

Պատասխանողի ներկայացուցիչը, չընդունելով պահանջը, դատարանին հայտնեց, որ դիմումատուն ՀԿ է, որի հիմնադիր փաստաթուղթը նրա կանոնադրությունն է, որը պետք է բովանդակի կազմակերպության գործունեության առարկան եւ նպատակները: Դիմումատուի կողմից ՀՀ բնապահպանության նախարարություն հասցեագրված դիմումում կազմակերպության գործունեության առարկայի կամ նպատակների մասին որեւէ նշում չկա: Համաձայն ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները տարածվում են նաեւ իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանմբ կիրառելի են դրանց նկատմամբ: Համաձայն ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 5-րդ կետի՝ բացառապես ՀՀ օրենքներով եւ սահմանվում իրավաբանական անձանց առեւտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի երկրորդ մասի՝ առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահանջել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով: ՀՀ Բնապահպանության նախարարությունը իրազեկված չէ դիմումատուի կողմից տեղեկությունների հավաքման նպատակների մասին: ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջի հիմքով դիմումատու «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ կողմից դատարան ներկայացված դիմումն անհիմն է եւ ենթակա է մերժման:

Լսելով կողմերին, գնահատելով ձեռք բերված ապացույցները՝ դատարանը գտնում է, որ դիմումը պետք է բավարարել հետեւյալ պատճառաբանությամբ:

Դիմողը, «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով նշված բոլոր տվյալները նշելով, 27.12.2005 թվ. գրավոր դիմել է պատասխանողին՝ որոշակի տեղեկատվություն ստանալու խնդրանքով, սակայն մերժում կամ որեւէ պատասխան չի ստացել:

Չամաձայն ՅՅ կողմից ստորագրված եւ 14.05.2001թ. վավերացված 1998թ. ընդունված «Տեղեկատվության մատչելիության, շրջակա միջավայրի առնչությամբ որոշում կայացնելու գործառույթին հասարակության մասնակցության եւ արդարադատության մատչելիության հարցերով կոնվենցիայի (Օրհուսի կոնվենցիա)» 4-րդ հոդվածի՝ պետական մարմինները պետք է տրամադրեն հասարակությանը նման տեղեկատվություն, ներառյալ փաստական տվյալների պատճենների, ընդ որում, տեղեկատվություն պահանջողը չպետք է հիմնավորի հարցման նպատակը:

Ղեկավարվելով ՅՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 138 եւ 163 հոդվածներով դատարանը

### ՎՃՌԵՑ

Դիմումը բավարարել: Պարտավորեցնել ՅՅ Բնապահպանության նախարարությանը տրամադրել «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն ՅԿ փնտրվող տեղեկությունը ՅՅ Կառավարության «Ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումների լիցենզավորման կարգը եւ լիցենզիայի ձեւը հաստատելու մասին» 15.09.2005թ. թիվ 1600 որոշմամբ 2005 թվ. դեկտեմբերի 20-23 անցկացված մրցույթին վերաբերող տվյալները.

- լիցենզավորման հանձնաժողովի կազմը,
- մրցույթի հայտատու կազմակերպությունների ցուցակը՝ նշելով մարզերը,
- մրցույթին մասնակցող կազմակերպությունների ցուցակը՝ նշելով լիցենզավորող հանձնաժողովի եզրակացությունները,
- մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների ցուցակը,
- «Լիցենզավորման մասին» ՅՅ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ ե՞րբ, որտե՞ղ եւ ո՞ր կազմակերպություններն են մասնակցել լսումների եւ ու՞րքե՞ր են անցկացրել լսումները,
- լեցենզավորող հանձնաժողովը ո՞ր չափանիշներով է ղեկավարվել կազմակերպություններին մրցույթում հաղթող ճանաչելու համար.
- տրամադրել լիցենզավորող հանձնաժողովի կանոնադրությունը.

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել ՅՅ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին 15 օրում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ռ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

**ԳՈՐԾ 9.**

**«Աֆիլես» ավտոարորդների իրավունքների դաժժանության կենտրոն**

*ընդդեմ*

**Արդարադատության նախարարության**



## **Պործի համառոտ նկարագրությունը**

2003թ. օգոստոսի 8-ին «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ն, հայտնաբերելով, որ ՀՀ կառավարության 2002թ-ի մայիսի 23-ի ՀՀ վարչապետի կողմից հաստատված եւ ՀՀ նախագահի կողմից վավերացված «ՀՀ ճանապարհային երթեւեկության կանոնները հաստատելու մասին» որոշումը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետին, գրությամբ դիմել էր ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանին՝ պահանջելով միջոցներ ձեռնարկել նշված որոշումը վերացնելու համար:

Օրենքով սահմանված ժամկետում ՀԿ-ն պատասխան չի ստացել եւ գտնում է, որ պատասխանողը խախտել է «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 6-րդ հոդվածները: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասով նույն օրենքում նախատեսված իրավական ակտերի ընդունման, հրապարակման կամ կիրառման կարգի պահանջների խախտում հայտնաբերած յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմել իրավական ակտն ընդունող, հրապարակող կամ հրատարակող մարմին կամ դրա վերադաս մարմին կամ ՀՀ արդարադատության նախարարին կամ դատարան՝ պահանջելով օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել խախտումները վերացնելու համար եւ այդ մասին տալ համապատասխան տեղեկատվություն: 2003թ. նոյեմբերի 11-ին «Աքիլես» ՀԿ-ն դիմեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ԱՆ պատասխանել կազմակերպության վերոհիշյալ գրությանը, միաժամանակ պատասխանողից հօգուտ «Աքիլես» ՀԿ-ի բռնագանձել 3000դրամի չափով վճարված պետական տուրքի գումարը:

Պատասխանող Արդարադատության նախարարության ներկայացուցիչ Ա. Թունյանը առարկել է դիմումին եւ դատարանին հայտնել, որ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ այդ օրենքը չի տարածվում քաղաքացիների այն դիմումների քննարկման կարգի վրա, որի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է հատուկ կարգ: Պատասխանողի ներկայացուցիչը հայտնեց, որ ՀՀ արդարադատության նախարարը պարտավոր չէ պատասխանել դիմողին ձեռնարկված միջոցառումների մասին, իսկ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով պետական մարմինները պարտավոր են պատասխանել քաղաքացիների դիմումներին միայն իրենց լիազորությունների սահմաններում, մինչդեռ ԱՆ նման լիազորությամբ օժտված չէ:

2003թ. դեկտեմբերի 3-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը (դատավոր Գ.Կարախանյան) մերժեց «Աքիլես» ՀԿ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արդարադատության նախարարության:

## Գործի նյութերը

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների  
առաջին ատյանի դատարանին**

**Դիմող՝ «Աքիլլես» ԱԻՊԿ ՅԿ**  
հասցե՝ ք. Երեւան-14, Ներսիսյան 1, քն 78

**Պատասխանող՝ ՀՀ Արդարադատության նախարարություն**  
հասցե՝ ք. Երեւան-10, Վ. Սարգսյանի 3

### **ԴԻՄՈՒՄ**

#### **Պաշտոնատար անձի անօրինաչափ անգործությունը վիճարկելու մասին**

Սույն թվականի օգոստոսի 8-ին «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ը, հայտնաբերելով, որ ՀՀ Կառավարության 23 մայիսի 2002թ-ի ՀՀ Վարչապետի կողմից հաստատված եւ ՀՀ Նախագահի կողմից վավերացված N 924 «ՀՀ ճանապարհային երթեւեկության կանոնները հաստատելու մասին» որոշումը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի, թիվ 55-78 գրությամբ դիմել էր ՀՀ Արդարադատության նախարար Դ. Հարությունյանին պահանջելով միջոցներ ձեռնարկել նշված որոշումը վերացնելու համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջում է, որ «Միմիայն օրենքով պետք է սահմանվեն ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված հարցերը, այդ թվում՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները»: Օրենքով սահմանված ժամկետում «Աքիլլես» կազմակերպությունը առ այսօր պատասխան չի ստացել:

Գտնում եմ, որ պատասխանողը խախտել է «Զաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 6-րդ հոդվածների պահանջները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Զաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ եւ 11-րդ հոդվածների եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածով՝ խնդրում եմ պարտավորեցնել ՀՀ Արդարադատության նախարարությանը պատասխանել «Աքիլլես» կազմակերպության թիվ 55-78 գրությանը:

Միաժամանակ խնդրում եմ պատասխանողից հօգուտ «Աքիլլես» կազմակերպությանը բռնագանձել 3000 (երեք հազար) դրամի չափով վճարված

պետտուրքի գումարը

Առդիր.

«Աքիլլես» կազմակերպության 08.08.2003թ-ի թիվ 55-78 գրություն  
պետական տուրքի վճարման անդորրագիր

«Աքիլլես» ԱԻՊԿ ՋԿ նախագահ՝

Է. Յովհաննիսյան

## ՎՃԻՌ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**Երեւանի կոնտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով.**

<b>Նախագահությամբ՝</b>	<b>դատավոր</b>	<b>Գ. Կարախանյան</b>
<b>Քարտուղարությամբ՝</b>		<b>Ա. Սայադյան</b>
<b>Դիմողի ներկայացուցիչ՝</b>		<b>Էդ. Հովհաննիսյան</b>
<b>Դիմողի լիազորված անձ՝</b>		<b>Ա. Անդրեասյան</b>
<b>Պատասխանողի ներկայացուցիչ՝</b>		<b>Ա. Թունյան</b>

2003թ, դեկտեմբերի 3-ին

Դռնբաց դատական նիստում դատարանում քննեց քաղաքացիական գործն ըստ դիմումի «Աքիլլես» ԱԻՊԿ ՀԿ ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ պաշտոնատար անձի անօրինաչափ անգործությունը վիճարկելու մասին:

Դատաքննությամբ եւ գործում եղած նյութերով պարզվեց հետեւյալը.

Դիմողի ներկայացուցիչը, դիմելով դատարան, հայտնել է, որ 08.08.2003թ «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ը, հայտնաբերելով, որ ՀՀ Կառավարության 23 մայիսի 2002թ-ի ՀՀ Վարչապետի կողմից հաստատված եւ ՀՀ Նախագահի կողմից վավերացված թիվ 924 «ՀՀ ճանապարհային երթեւեկության կանոնները հաստատելու մասին» որոշումը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետին, թիվ 55-78 գրությամբ դիմել էր ՀՀ Արդարադատության նախարար Դ. Հարությունյանին՝ պահանջելով միջոցներ ձեռնարկել նշված որոշումը վերացնելու համար: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հ-ի 4-րդ կետը պահանջում է, որ միմիայն օրենքով պետք է սահմանվեն ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված հարցերը, այդ թվում՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ սահմանափակումները, նրանց պարտականությունները:

Օրենքով սահմանված ժամկետում «Աքիլլես» կազմակերպությունը առ այսօր պատասխան չի ստացել: Գտնում են, որ պատասխանողը խախտել է «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 6-րդ հոդվածների պահանջները:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ սույն օրենքով նախատեսված իրավական ակտերի ընդունման, հրապարակման կամ կիրառման կարգի պահանջների խախտում հայտնաբերած յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմել իրավական ակտն

ընդունող, հրապարակող կամ հրատարակող մարմին կամ դրա վերադաս մարմին /եթե դա ունի վերադաս մարմին/ կամ ՀՀ Արդարադատության նախարարին կամ դատարան՝ պահանջելով օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել խախտումները վերացնելու համար եւ այդ մասին տալ համապատասխան տեղեկատվություն, սակայն մինչեւ օրս Արդարադատության նախարարությունից ոչ մի տեղեկատվություն չեն ստացել, ՀՀ արդարադատության նախարարը չի կատարել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ եւ 5-րդ մասերով սահմանված պահանջները: Հայտնեց նաեւ, որ «Ճանապարհային երթեւեկության կանոնները» համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 94-րդ հ-ի 3-րդ մասով ուժը կորցրած են համարվում 2003թ հուլիսի 1-ից:

Խնդրեց պարտավորեցնել Արդարադատության նախարարությանը պատասխանել «Աքիլես» կազմակերպության թիվ 55-78 գրությանը:

Դիմողի լիազորված անձը պնդեց նույնը:

Պատասխանող Արդարադատության ներկայացուցիչը առարկել է դիմումի դեմ եւ ինչպես գրավոր, այնպես էլ դատաքննությամբ դատարանին հայտնել, որ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ այդ օրենքը չի տարածվում քաղաքացիների այն դիմումների քննարկման կարգի վրա, որի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է հատուկ կարգ: ՀՀ Արդարադատության նախարարը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 91-րդ հ-ի 3-ին մասի համաձայն՝ հսկողություն իրականացնելիս պարտավոր է միջոցառումներ ձեռնարկել միայն օրենքի պահանջի խախտմամբ հրապարակված, հրատարակված կամ կիրառվող իրավական ակտերն անվավեր ճանաչելու համար: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 5-րդ մասը հստակ սահմանում է, թե օրենքի պահանջների խախտմամբ ընդունված, հրապարակված, հրատարակված կամ կիրառվող իրավական ակտերի հայտնաբերման դեպքում ՀՀ արդարադատության նախարարը 15 օրվա ընթացքում ինչ միջոցառումներ պետք է իրականացնի, որից հետեւում է այն, որ ՀՀ արդարադատության նախարարը պարտավոր չէ պատասխանել դիմողին ձեռնարկված միջոցառումների մասին:

Բացի այդ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն եւս պետական մարմինները պարտավոր են պատասխանել քաղաքացիների դիմումներին միայն իրենց լիազորությունների սահմաններում, մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարությունը նման լիազորությամբ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով օժտված չէ:

Դատարանը, ուսումնասիրելով գործի նյութերը եւ յուրաքանչյուր ապացույց, լսելով կողմերին, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ բազ-

մակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության հիման վրա՝ գտնում է, որ դիմումը պետք է մերժել հետեւյալ պատճառաբանությամբ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է արդարադատության նախարարի կողմից իրականացվող միջոցառումները, երբ հայտնաբերվում են օրենքի պահանջների խախտմամբ ընդունված, հրապարակված, հրատարակված կամ կիրառվող իրավական ակտերը, որտեղից ակնհայտ երեւում է, որ ՀՀ արդարադատության նախարարը պարտավոր չէ պատասխանել դիմողին ձեռնարկված միջոցառումների մասին, նույնիսկ այն դեպքում, եթե վիճարկվող որոշումը ընդունված, հրապարակված, հրատարակված կամ կիրառված լինել օրենքի պահանջների խախտմամբ: Հետեւաբար անհիմն է նաեւ դիմողի այն պատճառաբանությունը, որ ՀՀ արդարադատության նախարարը խախտել է «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 6-րդ հոդվածների պահանջները, քանի որ պետական մարմինները պարտավոր են պատասխանել քաղաքացիների դիմումների միայն իրենց լիազորությունների սահմաններում, իսկ ՀՀ արդարադատության նախարարությունը նման լիազորություններ չունի:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 եւ 163 հոդվածներով՝ դատարանը

### ՎՃՌԵՑ

«Աքիլլես» ԱԻՊԿ ՀԿ դիմումն ընդդեմ ՀՀ Արդարադատության նախարարության՝ պաշտոնատար անձի անօրինաչափ անգործությունը վիճարկելու մասին՝ գտնել անհիմն եւ մերժել:

Վճռի դեմ կարող է բողոք բերվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Գ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

## **ԳՈՐԾ 10.**

**«Աֆիլետս» ավտոարորդների իրավունքների դաժժանության կենտրոն**

*ընդդեմ*

**ՀՀ ոստիկանության**

## **Պործի համառոտ նկարագրությունը**

2003թ. մայիսի 13-ին «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ն դիմել էր ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանին՝ խնդրելով հայտնել, թե ՀՀ կառավարության ո՞ր որոշմամբ կամ նորմատիվ ակտով է նախատեսված տրանսպորտային միջոցների վերագրանցման ժամանակ պետհամարանիշների փոխարինումը: Պատասխան չստանալով՝ կազմակերպությունը 2003թ. հուլիսի 7-ին կրկին դիմում է ՀՀ վարչապետին՝ խնդրելով համապատասխան ցուցում տալ գրավոր պատասխանելու համար: Նույն թվականի օգոստոսի 26-ին կազմակերպությունը ստանում է ՀՀ ոստիկանության պետավտոտեսչության պետ Ի. Իշխանյանի պատասխանը, որտեղ ասվում է, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: Իսկ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաեւ ՀՀ օրենսդրական այլ ակտերով Ոստիկանությունը կազմակերպության պահանջով լիազորված չէ տեղեկատվություն տրամադրել:

2003թ. հոկտեմբերի 20-ին «Աքիլլես» ՀԿ-ն դիմում է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պատասխանողին՝ ՀՀ ոստիկանությանը, պարտավորեցնել գրավոր հայտնել կազմակերպության պահանջած տեղեկատվությունը, ինչպես նաեւ պատասխանողից հոգուտ «Աքիլլես» ՀԿ-ի բռնագանձել 3000 դրամի չափով վճարված պետական տուրքի գումարը:

2003թ. նոյեմբերի 28-ին Ոստիկանության պետավտոտեսչության վարչության պետը դատարանին է ներկայացնում իր առարկությունները: «Աքիլլես» ՀԿ-ի պահանջները համարելով անհիմն՝ վարչության պետ Ի. Իշխանյանը մասնավորապես պատճառաբանում է, թե «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունների տրամադրման ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի բացակայության պատճառով Ոստիկանությունը չի կարող տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

2003թ. դեկտեմբերի 15-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը (դատավոր Գ.Կարախանյան) մերժեց «Աքիլլես» կազմակերպության հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ հիմնավորելով նրանով, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ ՀՀ ոստիկանությունը հասարակական կազմակերպությանը տեղեկատվություն տալու լիազորությամբ օժտված չէ:



## Գործի նյութերը

### ՎՃԻՌ

### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**Երեւանի կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքերի առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով.**

<b>Նախագահությամբ՝</b>	<b>Գ. Կարախանյան</b>
<b>Քարտուղարությամբ՝</b>	<b>Ա. Սայադյան</b>
<b>Դիմողի ներկայացուցիչ՝</b>	<b>Էդ. Յովհաննիսյան</b>
<b>Դիմողի լիազորված անձ՝</b>	<b>Ա. Թորոսյան</b>
<b>Պատասխանողի ներկայացուցիչներ՝</b>	<b>Ս.Յովսեփյան, Գ.Բադաջյան</b>

2003թ. դեկտեմբերի 15-ին

Դռնբաց դատական նիստում դատարանում քննեց քաղաքացիական գործն ըստ դիմումի «Աքիլլես» ԱԻՊԿ ՀԿ ընդդեմ ՀՀ Ոստիկանության՝ պաշտոնատար անձի անօրինաչափ անգործությունը վիճարկելու մասին:

Դատաքննությամբ եւ գործում եղած նյութերով պարզվեց հետեւյալը.

Դիմողի ներկայացուցիչը, դիմելով դատարան, հայտնել է, որ «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ը կարիքն առաջանալու կապակցությամբ 13.05.2003թ. թիվ 55-35 գրությամբ դիմել էր ՀՀ Վարչապետին՝ խնդրելով հայտնել, թե ՀՀ Կառավարության ո՞ր որոշմամբ կամ նորմատիվ ակտով է նախատեսված տրանսպորտային միջոցների վերազրանցման ժամանակ պետհամարանիշների փոխարինումը: Պատասխանը չստանալով՝ «Աքիլլես» կազմակերպությունը 12.07.2003թ. թիվ 55-35 գրությամբ կրկին դիմել է ՀՀ Վարչապետին՝ խնդրելով համապատասխան ցուցում տալ իրենց թիվ 55-35 գրությանը պատասխանելու համար:

26.08.2003թ.-ին թիվ 17/2-1825 գրությամբ կազմակերպությունը ստացել է Ոստիկանության պետավտոտեսչության պետ Ի.Իշխանյանի պատասխանը, որում հայտնվում է, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ, իսկ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաեւ ՀՀ օրենսդրական այլ ակտերով ՀՀ ոստիկանությունը հասարակական կազմակերպության պահանջով լիազորված չէ տրամադրել տեղեկատվություն:

«Աքիլլես» կազմակերպության կողմից հարցվող իրավական ակտերը /եթե այդպիսիք կան/ ոչ պետական, ոչ ծառայողական գաղտնիք չեն: Համաձայն ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազա-

տության իրավունք, նեառյալ տեղեկատվություններ ստանալու ազատություն: Այսինքն, իրենք, ելնելով սահմանադրական իրավունքից, ինչպես նաև իրենց կանոնադրությունից, խնդրել են հայտնել իրենց այն իրավական ակտը, որը նախատեսում է տրանսպորտային միջոցների պետհամարանիշների փոխարինումը:

Գտնում են, որ ՊԱՏ վարչության պետ Ի. Իշխանյանի իրենց գրությունների մերժումը հիմնավորված չէ, ավելին՝ վերջինիս կողմից խախտվել է նաև «Զաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը:

Բացի այդ, ինչպես ՊԱՏ աշխատակիցները, այնպես էլ մյուս բոլոր պետական պաշտոնական անձինք պարտավոր են տալ տեղեկատվություն, քանի որ դա սահմանված է բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Զաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագրով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական Կոնվենցիայով:

Խնդրեց պատասխանողին պարտավորեցնել գրավոր հայտնել «Աքիլլես» կազմակերպությանն իրենց գրությունում նշված տեղեկությունը:

Դիմողի լիազորված անձը պնդեց նույնը:

Պատասխանող ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները առարկել են դիմումի դեմ և ինչպես գրավոր, այնպես էլ դատաքննությամբ դատարանին հայտնել, որ ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է ոչ թե տեղեկատվություններ, այլ տեղեկություններ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը: Դիմող կողմը նենգափոխել է սահմանադրական նորմի բովանդակությունը սեփական պահանջների սահմանադրականությունն ընդգծելու նկատառումով: ՀՀ Սահմանադրական նորմը ամրագրում է տեղեկություններ ստանալու ազատությունը և ոչ թե յուրաքանչյուրի՝ տեղեկություններ ստանալու սուբյեկտիվ իրավաբանական իրավունքը, այսինքն, ոստիկանության գործունեությունը կարգավորող որեւէ իրավական ակտ հասարակական կազմակերպություններին տեղեկություններ տրամադրելու՝ դիմողի սուբյեկտիվ իրավաբանական իրավունքն ապահովող պարտականություն ՀՀ Ոստիկանության վրա չի դրել: Դիմողի հետ ՀՀ Ոստիկանությունը որեւէ իրավահարաբերությունների մեջ չէր կարող մտնել, քանի որ այսպիսիք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի տրամադրումն իրականացվում է ՀՀ Կառավարության սահմանված կարգով, որը ՀՀ Ոստիկանության համար կարգ չի սահմանել: «Իրավական ակտերի

մասին» ՀՀ օրենքի ուժով «Աքիլլես» կազմակերպությանը Ոստիկանությունը օրենքով թույլատրված տեղեկատվությունը կարող է տրամադրել «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակված իրավական ակտն ընդունելուց եւ ուժի մեջ մտնելուց հետո՝ դրանով սահմանված ընթացակարգով:

Պատասխանողի ներկայացուցիչ Գ. Բաղաշյանը պնդեց նաեւ, որ ՀՀ Կառավարության 1996թ որոշմամբ սահմանվել է ավտոմեքենաների նոր նմուշի համարանիշներ տալու կարգը, որտեղից պարզ երեւում է, որ նոր համարանիշ տալու ժամանակ պետք է մեքենայի տերը պետական տուրք մուծի, որի մասին նշում է նաեւ ՀՀ Ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարարի տեղակալը իրենց նախարարությանը 1998թ ուղղած գրության մեջ: Խնդրեցին «Աքիլլես» ԱԻՊԿ ՀԿ-ի պահանջները մերժել:

Ղատարանը, ուսումնասիրելով գործի նյութերը եւ յուրաքանչյուր ապացույց, լսելով կողմերին, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության հիման վրա՝ գտնում է, որ դիմումը պետք է մերժել հետեւյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ, իսկ ՀՀ ոստիկանությունը հասարակական կազմակերպությանը տեղեկատվություն տալու լիազորությամբ օժտված չէ:

Բացի այդ հարցը, որը հուզում է հայցվոր կողմին՝ ավտոմեքենայի համարանիշներ տալու համար պետական տուրքի գանձման անհրաժեշտության մասին, կարգավորվում է ՀՀ Կառավարության 20.05.1996թ. թիվ 155 «ՀՀ Նախարարների խորհրդի 01.10.1991թ.թիվ 584 որոշման մեջ փոփոխություն կատարելու եւ տրանսպորտային միջոցների նոր նմուշի համարանիշներ տալու կարգի մասին» որոշմամբ, իսկ ՀՀ Ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարարի տեղակալը ՀՀ ՆԳ եւ ԱԱ նախարարությանը ուղարկած գրությամբ պարզաբանել է, որ համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 17-րդ կետի՝ ավտոմեքենայի պետական համարանիշ տալու համար սահմանված է պետական տուրք՝ բազային տուրքի 12-ապատիկի չափով: Հաշվի առնելով, որ պետական տուրքը գանձվում է համապատասխան ծառայությունների կամ գործողությունների համար՝ անկախ պետական համարանիշը ոչնչացման ենթակա լինելու հանգամանքից, ավտոմեքենային հերթական պետական համարանիշ տալու համար գանձվում է օրենքով սահմանված պետական տուրքը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 եւ 163 հոդվածներով՝ ղատարանը

**ՎճՈՒՑ**

«Աքիլլես» ԱԻՊԿ ՅԿ դիմումն ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ պաշտոնատար անձի անօրինաչափ անգործությունը վիճարկելու մասին՝ գտնել անհիմն եւ մերժել:

Վճռի դեմ կարող է բողոք բերվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Գ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

## **ԳՈՐԾ 11.**

**«Աֆիլետս» ավտոպարորդների իրավունքների դաժժամության կենտրոն**

*ընդդեմ*

**ՀՀ ՆԳ նախարարության**

## **Գործի համառոտ նկարագրությունը**

2001թ. մարտի 14-ին ավտովարորդների իրավունքների պաշտպանության «Աքիլլես» ՀԿ-ն դիմել էր ՆԳ նախարարությանը՝ խնդրելով տրամադրել 1999-2001թթ. ընթացքում ավտովարորդների կատարած վարչական իրավախախտումների եւ նրանց նկատմամբ ընտրված վարչական տույժերի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն, մասնավորապես՝

1. 1999-2000թթ. ընթացքում Երեւանում ՃԵԿ-ի խախտման համար քանի՞ վարչական արձանագրություն է կազմվել, այդ թվում՝ հարբած վիճակում տրանսպորտային միջոցներ վարելու համար,
2. որքա՞ն է վարչական պատասխանատվության ենթարկված վարորդների ընդհանուր քանակը,
3. ինչքա՞ն է վարչական տույժերից գոյացած ընդհանուր գումարը,
4. քանի՞ ՊԱՏ աշխատակից է ենթարկվել պատասխանատվության՝ ծառայողական պարտականությունները չկատարելու կամ չարաշահելու համար, այդ թվում՝ ՆԳ-ից հեռացվածների քանակը:

ՆԳ նախարարի տեղակալ Արարատ Մահտեսյանը մերժեց տրամադրել պահանջվող տեղեկությունները՝ 2001թ. մայիսի 10-ին գրավոր պատասխանելով. «ՆԳ նախարարությունը Ձեզ վիճակագրական տվյալներ տրամադրելը նպատակահարմար չի գտնում»:

2001թ. սեպտեմբերի 12-ին «Աքիլլես» ՀԿ-ն հայց ներկայացրեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ ՆԳ նախարարության: Հայցադիմումում կազմակերպությունը դատարանից խնդրեց պարտավորեցնել պատասխանողին տրամադրել նշված տեղեկատվությունը եւ տալ պատճառաբանված եւ հիմնավոր պատասխան: Դատական քննության ընթացքում պատասխանող կողմը՝ հակառակ իր գրավոր պատասխանի, տեղեկացրեց, որ 2000թ. ապրիլին ընդունված «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ցանկացած պաշտոնական վիճակագրական տեղեկություն քաղաքացիները կարող են եւ պետք է ստանան Ազգային վիճակագրական ծառայությունից: ՆԳ-ն ամեն ամիս տվյալներ է ներկայացնում այդ ծառայությանը: ՆԳ-ն, ըստ պատասխանողի, նման տեղեկություններ տալու իրավունք չունի:

2001թ. հոկտեմբերի 10-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը (դատավոր Ս. Արամյան) մասնակի բավարարեց տեղեկատվություն ստանալու մասին «Աքիլլես» ՀԿ-ի հայցն ընդդեմ ՆԳ նախարարության: Վճռեց, որ դիմումը պահանջվող տեղեկատվություն տրամադրելու մասով ենթակա է կարճման, քանի որ հայցվորը համաձայնել է պատասխանողի պատճառաբանության հետ, որ տեղեկատվությունը պետք է տրամադրվի այլ պետական մարմնի կողմից: Իսկ համաձայն «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի

մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «պետական, տեղական ինքնակառավարման մարմինները եւ պաշտոնատար անձիք, որոնց տնօրինությանը չի վերապահվում ... առաջարկված հարցերի լուծումը, դրանք ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում ուղարկում են ըստ պատկանելության կամ այդ մասին ծանուցում են դիմողներին, իսկ անձնական ընդունելության ժամանակ պարզաբանում են, թե նրանք ում պետք է դիմեն», պարտավորեցնել պատասխանող կողմին ուղարկված գրությանը տալ **պատճառաբանված ու հիմնավոր պատասխան**:

## Գործի նյութերը

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանին**

**Հայցվոր՝ «Աքիլլես» ԱԻՊՍ ՀԿ**  
հասցեն՝ ք. Երեւան, Մ.Բաղդամյան պող., 33ա 2., բն. 2,

**Պատասխանող՝ ՀՀ ՆԳ Նախարարություն**  
հասցեն՝ ք. Երեւան, Նալբանդյան 130

### **ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ**

#### **Պաշտոնատար անձի գործողությունները վիճարկելու մասին**

«Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության միություն հասարակական կազմակերպությունը կարիքն առաջանալու կապակցությամբ 14.03.2001թ. N 33-21 գրությամբ դիմել էր ՀՀ ՆԳ նախարարությանը՝ խնդրելով տրամադրել 1999, 2000, 2001թթ. ընթացքում ավտովարորդների կողմից կատարված վարչական իրավախախտումների եւ նրանց նկատմամբ ընդունված վարչական տույժերի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն: Մասնավորապես՝ կազմակերպությունը խնդրել էր պատասխանել, թե՛

1. 1999-2000թթ. ընթացքում Երեւանում ՃԵԿ-ի խախտման համար քանի՞ վարչական արձանագրություն է կազմվել, այդ թվում՝ հարբած վիճակում տրանսպորտային միջոցներ վարելու համար,
2. որքա՞ն է վարչական պատասխանատվության ենթարկված վարորդների ընդհանուր քանակը,
3. ինչքա՞ն է վարչական տույժերից գոյացված ընդհանուր գումարը,
4. ՃԵԿ-ի խախտման համար կազմված արձանագրություններից քանի՞սն են անվավեր ճանաչվել,
5. քանի՞ ՊԱՏ աշխատակից է ենթարկվել պատասխանատվության՝ ծառայողական պարտականությունները չկատարելու կամ չարաշահելու համար, այդ թվում՝ ՆԳ նախարարությունից հեռացվածների քանակը:

ՆԳ նախարարությունը, միայն մեր բազմաթիվ զանգերից հետո՝ երկու ամիս անց, ՀՀ ՆԳ նախարարի տեղակալ պարոն Մահտեսյանի ստորագրությամբ ուղարկված 10.05.2001 N 351625 գրությամբ պատասխանեց, որ «Ներքին գործերի նախարարությունը ձեզ վիճակագրական տվյալներ տրամադրելը նպատակահարմար չի գտնում»: Հիշատակված տեղեկությունները պետական կամ ծառայողական գաղտնիք չեն եւ տարբեր առիթներով տպագրվել են մամուլում:



Համաձայն ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի երկրորդ մասի՝ «յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ ստանալու ազատությունը»: Այսինքն, մենք, Ելնելով մեր սահմանադրական իրավունքից, ինչպես նաև մեր կանոնադրությունից, խնդրել ենք տրամադրել մեզ այդ տեղեկատվությունն, ինչը միանգամայն օրինական է: Սակայն, նախարարությունը, առանց նշելու մերժման հիմքերը, մերժելով մեր օրինական խնդրանքը, խախտել է մեր սահմանադրական իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ պատասխանողին պարտավորեցնել տրամադրել մեր նամակում նշված տեղեկատվությունը, վերացնել թույլ տված խախտումը՝ ուղարկված գրությանը պատճառաբանված եւ հիմնավոր պատասխան տալով:

Առդիր՝

- հայցադիմում- Չօրինակից,
- «Աքիլլես» ԱԻՊՍ ՀԿ 14.03.2001թ. N 33-21 գրություն- 1թերթից,
- ՆԳՆ 10.05.2001թ. N 35/625 գրություն- 1թերթից

«Աքիլլես» ԱԻՊՍ ՀԿ նախագահ՝

Է. Հովհաննիսյան

12.09.2001թ

Գործ հ.2-2462-01թ.

30/10-2001թ.

**ՎՃԻՌ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը**

**Նախագահությամբ՝ դատավոր  
Քարտուղարությամբ՝  
Մասնակցությամբ՝  
Հայցվոր՝  
Պատասխանողի ներկայացուցիչ՝**

**Ս.Արամյանի  
Հ. Մադաթյանի  
Է. Հովհաննիսյանի  
Լ. Տիգրանյանի**

Դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ հայցի «Աքիլլես» ԱԻՊՍ ՀԿ ընդդեմ ՀՀ ՆԳ նախարարության՝ պաշտոնատար անձի գործողությունները վիճարկելու պահանջի մասին:

Դիմողը դատարանին հայտնեց, որ «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության միություն ՀԿ, անհրաժեշտությունից ելնելով, 14.03.2001թ. 33-21 գրությամբ դիմել էր ՀՀ ՆԳՆ՝ խնդրելով տրամադրել 1999, 2000, 2001թթ. ընթացքում ավտովարորդների կողմից կատարված վարչական իրավախախտումների եւ նրանց նկատմամբ ընտրված վարչական տույժերի վերաբերյալ տեղեկատվություն:

Մասնավորապես՝ իրենք խնդրել են հետեւյալը՝

- 1999-2000թթ. ընթացքում Երեւանում ՃԵԿ-ի խախտման համար քանի՞ վարչական արձանագրություն է կազմվել, այդ թվում՝ հարբած վիճակում տրանսպորտային միջոցներ վարելու համար,
- որքա՞ն է վարչական պատասխանատվության ենթարկված վարորդների ընդհանուր քանակը,
- ինչքա՞ն է վարչական տույժերից գոյացված ընդհանուր գումարը, ՃԵԿ-ի խախտման համար կազմված արձանագրություններից քանի՞սն են անվավեր ճանաչվել,
- քանի՞ ՊԱՏ աշխատակից է ենթարկվել պատասխանատվության՝ ծառայողական պարտականությունները չկատարելու կամ չարաշահելու համար, այդ թվում՝ ՆԳ նախարարությունից հեռացվածների քանակը:

ՀՀ ՆԳ նախարարությունը միայն իրենց բազմաթիվ զանգերից հետո՝ երկու ամիս անց, ՀՀ ՆԳ նախարարի տեղակալի ստորագրությամբ 10.05.01թ. 351625 գրությամբ ուղարկվել է պատասխան, որ. «Ներքին գործերի նախարարությունը ձեզ վիճակագրական տվյալներ տրամադրելը նպատակահարմար չի գտնում»:

Հիշատակված տեղեկությունները պետական կամ ծառայողական գաղտնիք չեն, տարբեր առիթներով տպագրվել են մամուլում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի երկրորդ մասի՝ «յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ ստանալու ազատությունը»: Իրենք, ելնելով իրենց սահմանադրական իրավունքից, ինչպես նաև իրենց կանոնադրությունից, խնդրել են տրամադրել այդ տեղեկատվությունն, ինչը միանգամայն օրինական է: Սակայն, նախարարությունը, առանց նշելու մերժման հիմքերը, մերժելով իրենց օրինական խնդրանքը, խախտել է մեր սահմանադրական իրավունքը:

Խնդրեց պարտավորեցնել պատասխանողին տրամադրել իրենց նամակում նշված տեղեկատվությունը, վերացնել թույլ տված խախտումը՝ ուղարկված գրությանը պատճառաբանված եւ հիմնավոր պատասխան տալով:

Հայտնեց նաև, որ դատաքննության ընթացքում ինքը համաձայնվել է պատասխանողի ներկայացուցչի պատճառաբանության հետ, որ տեղեկատվությունը պետք է տրամադրվի այլ մարմնի կողմից եւ պահանջի այդ մասով ինքը հրաժարվում է:

Գրեթե նույնաբովանդակ իրենց 21.08.00թ 11-015 գրության կապակցությամբ ՀՀ ՆԳՆ հասարակության հետ կապի եւ լրատվության վարչությունը իրենց է տրամադրել համապատասխան տեղեկատվություն: Պատասխանողի ներկայացուցիչը հայցի դեմ առարկեց եւ դատարանին հայտնեց, որ հայցվորի 21.08.00թ 11-015 գրության համաձայն, եթե ՆԳՆ լրատվության վարչությունը հարցմանը պատասխանել է, ապա դա ոչ թե տեղեկատվություն է այլ՝ տվյալներ: Հայցվորն իրեն հետաքրքրող տեղեկատվության համար պետք է դիմի վիճակագրության վարչությանը, որտեղից եւ ստանա սպառիչ պատասխան: ՆԳ նախարարությունը ճիշտ է վարվել, որ տեղեկատվություն չի տրամադրել, քանի որ իրենք յուրաքանչյուր ամիս տվյալները ներկայացնում են վիճակագրական ծառայությանը եւ վերջինիս կողմից դրանք մշակվելուց հետո միայն դառնում են տեղեկատվություն: Եթե ժամանակին «Աքիլլես» կազմակերպությանը բացատրվեր, ապա դատական վեճ չէր առաջանա: Չնայած դրան՝ հայցվորին 10.05.01թ տրվել է գրավոր պատասխան եւ նրա գրությունը անհետեւանք չի թողնվել:

Խնդրեց հայցապահանջը մերժել:

Լսելով կողմերի բացատրությունները, վերլուծելով գործի հանգամանքները՝ դատարանը գտավ, որ դիմումը պահանջվող տեղեկատվություն տրամադրելու մասով ենթակա է կարճման, իսկ պատասխանողին պարտավորեցնելու «Աքիլլես» ՀԿ-ի գրությանը պատճառաբանված եւ հիմնավոր պատասխան տալու մասով՝ բավարարման հետեւյալ պատճառաբանությամբ:

«Աքիլես» հասարակական կազմակերպությունը իրականացնում է ՀՀ ավտովարորդների իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեություն, որն ամրագրված է կազմակերպության կանոնադրության երկրորդ կետում: Կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներն իրականացնելու նպատակով 21.08.2000թ 11-015 գրությամբ դիմել է ՀՀ ՆԳ նախարարությանը՝ խնդրելով տրամադրել Երեւան քաղաքի ՊԱՏ\_ի աշխատակիցներին վերաբերվող թվով 3 բնույթի տվյալներ: ՀՀ ՆԳ նախարարության հասարակության հետ կապի եւ լրատվության վարչությունը կազմակերպությանը տրամադրել է գրությունում նշված տվյալները:

Համաձայն ՀՀ Կառավարության 13.03.1998թ հ.173 «ՀՀ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» որոշման՝ վերը նշված տեղեկությունները պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների շարքին չեն դասվում: Համաձայն ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի՝ հայցվորն իրավունք ունի ստանալ տեղեկատվություն: Այդ հանգամանքներից ելնելով՝ «Աքիլես» ՀԿ-ն 14.03.2001թ. 33-21 գրությամբ դիմել է պատասխանողի՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, որը չի տրամադրվել:

Հայցվորը դատարանում պատասխանողի բացակայությունից հետո հրաժարվեց հայցապահանջի այդ մասից, հետեւաբար, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետի՝ գործի վարույթը ենթակա է կարճման:

Համաձայն «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված 1-ին մասի՝ քաղաքացիները, իրավաբանական անձինք իրենց առաջարկությունները, դիմումները եւ բողոքները ժամանակին եւ օրենքով քննարկելու նպատակով տալիս են այն պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմիններին, դրանց պաշտոնատար անձանց, կազմակերպություններին, որոնց անմիջական տնօրինությանն է վերապահված տվյալ հարցի լուծումը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 1-ին մասում նշված մարմինները եւ դրանց պաշտոնատար անձինք, որոնց տնօրինությանը չի վերապահվում առաջարկություններում, դիմումներում եւ բողոքներում առաջարկված հարցերի լուծումը, դրանք ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում ուղարկում են ըստ պատկանելիության կամ այդ մասին ծանուցում են դիմողներին, իսկ անձնական ընդունելության ժամանակ պարզաբանում են, թե նրանք ում պետք է դիմեն:

Ըստ նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացիների, իրավաբանական անձանց առաջարկությունները քննարկվում են մեկ ամսվա ընթացքում: Պատասխանողը խախտել է հիշյալ օրենքի 3-րդ եւ 6-րդ հոդվածների հիշատակված մասերը, դրանով իսկ խախտելով հայցվորի պատշաճ ձեռով պատասխան ստալու իրավունքը:

Պատասխանողը պատճառաբանեց, որ վիճակագրական տեղեկատվություն տրամադրել իրենց պարտականության կամ իրավասության մեջ չի մտնում, հայցը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ հայցվորին սահմանված կարգով պատասխանելու մասով:

Հայցվորը պատասխանողին դիմել է 2001թ. մարտի 14-ին, սակայն, պատասխանողը, խախտելով օրենքով սահմանված ժամկետները, պատասխանել է 2001թ. մայիսի 10-ին՝ նշելով, որ «Ներքին գործերի նախարարությունը ձեզ վիճակագրական տվյալներ տրամադրելը նպատակահարմար չի գտնում»: Դրանից հետևում է, որ պատասխանողը իրավասու է տրամադրել վիճակագրական տվյալներ, սակայն գործել է ոչ թե օրենքով սահմանված կարգով, այլ նպատակահարմարությունից ելնելով՝ պատասխան գրությունում չհիմնավորելով աննպատակահարության պատճառները:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետով, 130-132, 137-138 հոդվածներով՝ դատարանը

### ՎճՌԵՑ

«Աքիլեոս» ԱԻՊՍ ՀԿ-ի հայցադիմումն ընդդեմ ՀՀ ՆԳ նախարարության պաշտոնատար անձի գործողությունները վիճարկելու պահանջի մասին բավարարել մասնակի:

Հայցադիմումը տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասով գործի վարույթը կարճել դիմողի՝ այդ մասից հրաժարվելու պատճառով:

Պահանջը պատասխանողին պարտավորեցնելու ուղարկված գրությանը պատճառաբանված եւ հիմնավոր պատասխան տալու մասով բավարարել:

Պարտավորեցնել պատասխանողին «Աքիլեոս» ԱԻՊՍ ՀԿ-ի ՀՀ ՆԳ նախարարությանն ուղարկված 14.03.2001թ. հ.33-21 գրությանը սահմանված կարգով տալ պատճառաբանված եւ հիմնավոր պատասխան:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին հրապարակման պահից 15-օրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ս. ԱՐԱՄՅԱՆ

**ԳՈՐԾ 12.****Ժուռնալիստների «Աստարեզ» ակումբն***ընդդեմ***Գյումրիի ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀ-ԵՐԻ ընդունելության  
ֆաղափային ֆննական հանձնաժողովի**

## **Գործի համառոտ նկարագրությունը**

2001թ. օգոստոսի 7-ին՝ մաթեմատիկա գրավոր քննության օրը, Գյումրիի թիվ 10 միջնակարգ դպրոցում Գյումրիի պետական ԲՈՒՅ-երի ընդունելության քաղաքային քննական հանձնաժողովը մերժել էր «Շանթ» հեռուստա-ընկերության ժուռնալիստ Արտակ Յովհաննիսյանի՝ քննական օրերին գրավոր քննությունները ամբողջությամբ լուսաբանելու խնդրանքը: Հանձնաժողովի որոշումներից մեկի բանավոր մեկնաբանությամբ՝ ժուռնալիստներին չի թույլատրվում գրավոր քննությունների վերջին մեկ ժամվա ընթացքում գտնվել քննասենյակում, նկարահանել կամ ձայնագրել:

Օգոստոսի 8-ին «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանի բանավոր խնդրանքը՝ անվավեր ճանաչել վերոհիշյալ որոշումը եւ տրամադրել դրա ու հանձնաժողովի մյուս բոլոր նիստերի արձանագրությունների պատճենները, եթե դրանցում չկան պետական կամ ծառայողական գաղտնիք, բանավոր մերժվել է: Հաջորդ օրը՝ օգոստոսի 9-ին, հանձնաժողովին ներկայացվել է գրավոր դիմում՝ հանձնաժողովի բոլոր նիստերի արձանագրությունների պատճենները «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ»-ին տրամադրելու մասին: Դիմումին հանձնաժողովի նախագահը տվել էր խուսափողական պատասխան:

2001թ. օգոստոսի 30-ին համահայցվորներ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը եւ «Իրավունք» շաբաթաթերթի թղթակից Գագիկ Նիկողոսյանը դիմեցին Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել Գյումրու պետական ԲՈՒՅ-երի ընդունելության քաղաքային հանձնաժողովի՝ օրենքին հակասող որոշումը եւ պարտադրել նույն հանձնաժողովին նիստերի պետական կամ ծառայողական գաղտնիք չպարունակող արձանագրությունների պատճենները տրամադրել լրագրողներին:

Դատաքննության ընթացքում պատասխանող կողմը քննասենյակում նկարահանելու սահմանափակումները պատճառաբանեց քննությունների նորմալ ընթացքը չխանգարելու հանգամանքով:

Պատասխանող կողմի՝ ՀՀ ԿԳ նախարարության Երեւանում գտնվելու հանգամանքով պայմանավորված հիշյալ գործի վարույթը տեղափոխվեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Դատարանը (դատավոր Վ. Լալայան) պատասխանողի պատճառաբանությունները սահմանափակումների մասին գտավ անհիմն: «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ նախկին օրենքի 4 եւ 6 հոդվածներով, եթե տեսաձայնագրումը խանգարում էր դիմորդներին, ապա այն կարող էր խանգարել ինչպես առաջին ժամին, այնպես էլ վերջին ժամին, ուստի որեւէ հիմք չկար արգելելու տեսաձայնագրումը հատկապես վերջին 1 ժամվա ընթացքում: Իսկ ինչ վերաբերում է հայցվորի արձանագ-

րություններին ծանոթանալու պահանջին, ապա դատաքննությամբ պարզվեց, որ դրանց համար արգելքներ չկան, եւ հայցվորների տեղեկություն ստանալու իրավունքը այդ առումով խախտված չէ:

2001թ. դեկտեմբերի 28-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը վճռեց մերժել «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի» հայցն ամբողջովին:

«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբին» 2001թ. օգոստոսի 30-ից դեկտեմբերի 28-ը տեւած դատավարության ընթացքում հաջողվեց ստանալ իրենց հետաքրքրող արձանագրությունների մի մասի պատճենները եւ իրենց իրավունքները ոտնահարող որոշման մեղմացված տարբերակը:



## **Գործի նյութերը**

**Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանին**

**Համահայցվորներ՝** **Լեւոն Բարսեղյան ժուռնալիստ,**  
«Ժուռնալիստների «Ասպարեզ»  
ակումբ» ՀԿ խորհրդի նախագահ,  
**Գագիկ Նիկողոսյան ժուռնալիստ,**  
«Իրավունք» շաբաթաթերթի  
թղթակից

**Պատասխանող՝** **Գյումրու պետական բուհերի ընդունելության**  
**քաղաքային քննական հանձնաժողովը՝**  
**ի դեմս նախագահ պարոն Հայկ Սարգսյանի,**  
Զ. Գյումրի, Պարույր Սեւակի 4 եւ Զ. Գյումրի, թիվ 10 դպրոց

### **Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ**

**Գյումրի քաղաքի պետական բուհերի ընդունելության քննությունները լիարժեք եւ օբյեկտիվ լուսաբանելու՝ լրագրողների իրավունքներն արգելափակող՝ Գյումրիի պետական բուհերի ընդունելության քաղաքային քննական հանձնաժողովի՝ օրենքին հակասող որոշումն անվավեր ճանաչելու եւ նրա գործողությունները վիճարկելու պահանջի մասին**

Գյումրիում 2001թ. պետական բուհերի ընդունելության քննությունները մամուլի եւ զանգվածային լրատվության միջոցների կողմից լիարժեք եւ օբյեկտիվ լուսաբանելու՝ օրենքով սահմանված իրենց իրավունքներն իրականացնելիս 2001թ. օգոստոսի 7-ին, Գյումրու թիվ 10 միջնակարգ դպրոցում մաթեմատիկա առարկայից գրավոր քննության օրը տեղի է ունեցել միջադեպ. սույն գործով պատասխանող Գյումրու պետական բուհերի ընդունելության քաղաքային քննական հանձնաժողովը մերժել է «Շանթ» ՀՈՒԸ ժուռնալիստ Արտակ Հովհաննիսյանի խնդրանքը՝ հաջորդ քննական օրերին գրավոր քննություններին ներկա գտնվել ամբողջությամբ, ունենալ ամբողջ քննական ընթացքից պատկերացում եւ լուսաբանել քննություններն ըստ այդմ: Այդ մերժումն արտահայտվել է սահմանափակմամբ, որը դրսեւորվել է հանձնաժողովի որոշումներից մեկում տեղ գտած այն դրույթով, թե ժուռնալիստները գրավոր քննությունների վերջին մեկ ժամը չեն կարող գտնվել քննասենյակում /մեջքերումը բանավորից է/, ինչը նույն հանձնաժողովի մեկնաբանությամբ բացառում է նաեւ քննասենյակում ձայն եւ պատկեր գրանցող սարքերի առկայությունը եւ դրանցից դուրս եկող ազդանշանների հնարավորությունը:

Առանց նման հնարավորության սույն գործով հայցվոր կամ որեւէ այլ ժուռնալիստ չէր կարող օգտվել ՀՀ Սահմանադրությամբ եւ այլ օրենքներով իրեն վերապահված իրավունքներից եւ պարտականություններից՝ ընդունելության քննությունների լիարժեք եւ օբյեկտիվ լուսաբանման հնարավորությու-

նից: Պատասխանողն այդ որոշմամբ կանխավ արգելել է ժուռնալիստներին քննական օրերին ներկա գտնվել /կամ նկարահանել առանց ներկայության/ գրավոր քննության վերջին մեկ ժամը, ունենալ անհրաժեշտ տեղեկատվություն, ըստ այդմ վերլուծել եւ տեղեկացնել հասարակությանը:

2001թ. օգոստոսի 8-ի երեկոյան մոտ երկու ժամ տեւողությամբ բանավեճը գործով համահայցվոր Լեւոն Բարսեղյանի եւ 11 անդամներից բաղկացած հանձնաժողովի (հանձնաժողովի անդամ պարոն Վարդան Գրիգորյանի բացակայությամբ) միջեւ անցել է ապարդյուն: Համահայցվորը խնդրել է անվավեր ճանաչել հանձնաժողովի ընդունած վերոհիշյալ որոշումը, ինչը մերժվել է: Ապա համահայցվորը խնդրել է իրեն տրամադրել վերոհիշյալ որոշման եւ հանձնաժողովի բոլոր նիստերի արձանագրությունների պատճենները, բացառությամբ պետական, ծառայողական գաղտնիքները, եթե այդպիսիք կան դրանցում: Մերժվել է բանավոր:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 9-ին, հանձնաժողովին ներկայացվել է դիմում՝ հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ»-ին տրամադրելու համար: Պատասխանող կողմի նախագահը դիմումի վրա շարադրել է խուսափողական, իր խոսքի մեջ զգույշ պատասխան: Արձանագրությունների պատճենները ակումբը փոխանցելու էր Գյումրիում աշխատող եւ այցելու ժուռնալիստներին, դրանցով հետաքրքրվող հանրությանը, օգտագործելու էր ուսումնասիրության եւ անհրաժեշտության դեպքում՝ հրապարակման համար՝ ստանձնելով պատճենահանման հետ կապված աշխատանքային եւ ֆինանսական ծախսերը: Պատասխանողը զարմանալի համառությամբ մինչ օրս փակ է պահում իր նիստերի արձանագրությունները, ինչով արգելափակում է այդ տեղեկատվության հոսքը լրագրողներին, իսկ նրանցով՝ հասարակությանը եւ մտածել է տալիս, թե հանձնաժողովի գործունեությունը փակ է հանրության համար: Գործով պատասխանող հանձնաժողովը, կարելի է կարծել, հասավ իր նպատակին՝ «ընդունելության քննություններ փակ դռների հետեւում» կարգախոսով ավարտեց Գյումրի քաղաքի պետական բուհերի ընդունելության քննությունների անցկացման իր առաքելությունը՝ արգելափակելով ժուռնալիստների՝ տեղեկություններ հավաքելու, դրանց հիման վրա տեղեկացնելու եւ, մյուս կողմից, հասարակության՝ օրինական ճանապարհով տեղեկություններ ստանալու իրավունքները:

Պատասխանողի կողմից ժուռնալիստների իրավունքների սահմանափակումների դեմ Գյումրիում աշխատող ժուռնալիստներն իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին 2001թ. օգոստոսի 14-ի հայտարարությամբ՝ ուղղված հասարակությանը, դիմորդներին եւ ծնողներին, մարզային եւ քաղաքային իշխանություններին, հասարակական կազմակերպություններին, հայաստանյան՝ թվով 50 լրատվամիջոցների, միջազգային իրավապաշտպան եւ լրագրողական կազմակերպություններին եւ այլոց:

2001թ. օգոստոսի 15-ին Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության Շիրակի տարածաշրջանային կենտրոնը մեր դիմումի համաձայն դիմել է պատասխանողին՝ վերջինիս խնդրելով իրեն տրամադրել նշված արձանագրությունների պատճենները, սակայն այդ գրությունը նույնպես մնացել է անպատասխան:

Փաստորեն, պատասխանողը, արգելափակելով Գյումրիում աշխատող ժուռնալիստների իրավունքները, խախտել է ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի եւ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» 1991թ. ՀՀ օրենքի 2, 4, 27, 28 հոդվածների պահանջները:

Ելնելով վերոգրյալից, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի՝ խնդրում ենք հատուկ հայցային վարույթի կարգով սույն հայցադիմումը ընդունել Ձեր վարույթը եւ, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 24 հոդվածով, «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» 1991թ. ՀՀ օրենքի 2, 4, 27, 28 հոդվածներով, ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի՝ կայացնել վճիռ:

«Սույն գործով պատասխանող Գյումրի քաղաքի պետական բուհերի 2001թ. ընդունելության՝ քաղաքային քննական հանձնաժողովի «... մամուլի եւ հեռուստատեսության աշխատակիցների մուտքը քննասենյակներ դադարեցնել քննությունների ավարտից մեկ ժամ առաջ» որոշումն անվավեր ճանաչելու

Սույն գործով պատասխանող Գյումրի քաղաքի պետական բուհերի 2001թ. ընդունելության՝ քաղաքային քննական հանձնաժողովին՝ իր նիստերի պետական կամ ծառայողական գաղտնիքներ չպարունակող արձանագրությունների թափանցիկությունը ժուռնալիստների համար ապահովելը պարտադրելու»

մասին:

Գործն ըստ էության քննելու համար խնդրում ենք պատասխանողից պահանջել իր նիստերի բոլոր արձանագրությունների պատճենները՝ որպես գրավոր ապացույցների շարք:

Կից ներկայացնում ենք

- ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբից հանձնաժողովին հղված դիմումի պատճենը իր պատասխանով հանդերձ - 1 թերթից,
- Գյումրիում աշխատող ժուռնալիստների հայտարարության պատճենը ստորագրություններով հանդերձ - 1 թերթից /2 էջ/,
- ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի դիմումի պատճենը՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանության Շիրակի տարածաշրջանային կենտրոն - 1 թերթից,
- մարդու իրավունքների պաշտպանության Շիրակի տարածաշրջանային

կենտրոնի խնդրագրի պատճենը՝ ուղղված պատասխանողին - 1 թերթից,  
- պատճեններ օրենքի համապատասխան հոդվածների հրապարակումներից - 2 թերթից /4 էջ/,  
- հայցադիմումի՝ պատասխանողին հասցեագրված օրինակը - 3 թերթ  
- պետական տուրքի մուծման անդորրագիրը:

Առդիր ընդամենը 9 թերթից առաջին հասցեով:

30 օգոստոսի, 2001թ.

Համահայցվորներ՝

Լևոն Բարսեղյան, Ժուռնալիստ, «Ժուռնալիստների  
«Ասպարեզ» ակումբ» ՀԿ խորհրդի նախագահ,

Գագիկ Նիկողոսյան, Ժուռնալիստ, «Իրավունք» շաբաթաթերթի թղթակից

Գործ համար 2 2870

2001թ.

**Վ Ճ Ի Ռ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով՝**

**Նախագահությամբ՝ դատավոր՝  
Քարտուղարությամբ՝  
Մասնակցությամբ՝  
Հայցվորի ներկայացուցիչներ՝**

**Վ. Լալայանի  
Ս. Բալաբեկյան**

**Լ. Բարսեղյանի,  
Ա. Գրիգորյանի,  
Գ. Նիկողոսյանի  
Ս. Մխիթարյանի**

**Հայցվոր՝  
Պատասխանողի ներկայացուցիչ՝**

2001թ. դեկտեմբերի 28-ին դատարանում դռնբաց դատական նիստում քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության եւ Գագիկ Նիկողոսյանի ընդդեմ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության՝ Գյումրի քաղաքի պետական բուհերի ընդունելության քննությունները լիարժեք եւ օբյեկտիվ լուսաբանելու՝ լրագրողների իրավունքներն արգելափակող՝ Գյումրու պետական բուհերի ընդունելության քաղաքային քննական հանձնաժողովի՝ օրենքին հակասող որոշումն անվավեր ճանաչելու եւ նրա գործողությունները վիճարկելու պահանջի մասին:

Դատաքննությամբ դատարանը պարզեց հետեւյալը.

Դիմելով դատարան՝ հայցվորները հայտնել են, որ պետական բուհերի քննությունների ժամանակ Գյումրու թիվ 10 դպրոցում 07.08.2001թ.՝ մաթեմատիկա առարկայից գրավոր քննության օրը քննական հանձնաժողովը մերժել է «Շանթ» ՀՈՒ Լրագրող Արտակ Յովհաննիսյանի խնդրանքը՝ հաջորդ քննական օրերին գրավոր քննություններին ներկա գտնվել ամբողջությամբ, ունենալ ողջ քննական ընթացքից պատկերացում եւ լուսաբանել քննությունները: Այդ սահմանափակումը դրսեւորվել է հանձնաժողովի որոշումներից մեկում տեղ գտած այն դրույթով, որ լրագրողները գրավոր քննությունների վերջին մեկ ժամը չեն կարող գտնվել քննասենյակում ինչը նույն հանձնաժողովի մեկնաբանմամբ բացառում է քննասենյակում ձայն եւ պատկեր գրանցող սարքերի առկայությունը: «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը հանձնաժողովին խնդրել է անվավեր ճանաչել վերոհիշյալ որոշումը, սակայն նրա խնդրանքը մերժվել է: Մերժվել է նաեւ Լ. Բարսեղյանի խնդրանքը՝ որոշումը եւ հանձնաժողովի բոլոր նիստերի արձանագրությունների պատճենները իրեն տրամադրելու վերաբերյալ: Նույն խնդրանքով գրավոր դիմել են հանձնաժողովին նաեւ

09.08.2001թ., սակայն, պատասխանողը մինչ օրս փակ է պահում հանձնաժողովի նիստերի արձանագրությունները: Հայցվորները գտնում են, որ քննական հանձնաժողովը խախտել է ՀՀ Սահմանադրության 24-րդ եւ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 2, 4, 27, 28 հոդվածների պահանջները: Խնդրել են անվավեր ճանաչել բուհերի 2001թ. ընդունելության Գյումրի քաղաքի պետական քննական հանձնաժողովի որոշումը, որով գրավոր քննությունների ավարտից մեկ ժամ առաջ դադարեցվել է մամուլի եւ հեռուստատեսության աշխատակիցների մուտքը քննասենյակներ, ինչպես նաեւ խնդրել են պարտադրել պատասխանողին ապահովել իր նիստերի արձանագրությունների թափանցիկությունը լրագրողների համար:

Հայցվոր Գագիկ Նիկողոսյանը դատարանում հայցը պնդեց՝ միաժամանակ նշելով, որ պատասխանողի գործողություններով խախտվել է տեղեկատվություն ստանալու եւ տարածելու իր իրավունքը:

Հայցվոր Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ Լ. Բարսեղյանը եւ Ա. Գրիգորյանը դատարանում հայցը պնդեցին: Լ. Բարսեղյանը հայտնեց նաեւ, որ քննական հանձնաժողովի գործողություններով խախտվել է տեղեկատվություն ստանալու եւ տարածելու լրագրողների իրավունքը, եւ հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելը լրագրողների իրավունքների պաշտպանության լուրջ նախադեպ կլինի:

Պատասխանողի ներկայացուցիչ Ս. Մխիթարյանը հայցի դեմ առարկեց՝ բերելով հետեւյալ պատճառաբանությունները.

1. Հայցվորները պատշաճ հայցվորներ չեն եւ իրավասու չեն լրագրողների իրավունքները պաշտպանելու համար հայց հարուցել դատարանում:
2. Կազմակերպությունը հայտ չէր ներկայացրել քննություններին ներկա գտնվելու եւ լուսաբանելու համար:
3. Հայցվորները պահանջում են անվավեր ճանաչել մի որոշում, որը գոյություն չունի:
4. Սահմանափակումները բխել են դիմորդների շահերից, եւ դրանք նպատակ են ունեցել բացառելու քննությունների նորմալ ընթացքը խանգարող հանգամանքները: «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ ներկայացուցիչների հետ բանավեճից հետո լրագրող Արտակ Հովհաննիսյանին թույլատրվել է մինչեւ վերջ նկարահանումներ կատարել:
5. Ներկայումս չի գործում ոչ քննական հանձնաժողովը, եւ ոչ էլ նրա որոշումները:

Ինչ վերաբերում է քննական հանձնաժողովի արձանագրություններին, ապա դրանք գտնվում են արխիվում եւ դրանք կարելի է ազատորեն ստանալ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարությունից: Պատասխանողի ներկայա-

ցուցիչը խնդրեց հայցը մերժել:

Լսելով կողմերին, հետազոտելով գործում եղած գրավոր ապացույցները՝ դատարանը գտավ, որ հայցը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

Դատարանը գտնում է, որ, իրոք, բուհերի 2001թ. ընդունելության Գյումրի քաղաքի պետական քննական հանձնաժողովի գործողություններով սահմանափակվել են «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4 եւ 27 հոդվածներով նախատեսված մամուլի, զանգվածային լրատվության միջոցների եւ լրագրողների իրավունքները՝ հավաքելու եւ հրատարակելու տեղեկություններ: Այդ մասին է վկայում հանձնաժողովի 30.07.2001թ. թիվ 8 արձանագրության 2.2 կետը, որում ասված է.

«Դիմորդների պատասխաններում հնարավոր վրիպումները /ուշադրության շեղման պատճառով/ նվազագույնի հասցնելու նպատակով առանց հիմնավոր անհրաժեշտության հեռուստատեսության նկարահանումները քննասենյակներում գրավոր քննությունների ավարտից 1 /մեկ/ ժամ առաջ համարել ոչ նպատակահարմար»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 162 հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը քննելիս նշված ակտն ընդունելու համար հիմք ծառայած հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է ակտն ընդունած մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վրա:

Պատասխանողի ներկայացուցչի պատճառաբանություններն այն մասին, որ սահմանափակումների /քննությունների ավարտից 1 ժամ առաջ հեռուստատեսության նկարահանումների դադարեցումը/ նպատակն է եղել բացառել քննությունների սորմալ ընթացքը խանգարող հանգամանքները, անհիմն են եւ չեն բխում «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 6-րդ հոդվածներից: Եթե տեսաձայնագրումը խանգարում է դիմորդներին, ապա այն կարող է խանգարել ինչպես առաջին ժամերին, երբ դիմորդները խնդիրներ են լուծում, այնպես էլ վերջին ժամերին, երբ դիմորդները, ինչպես նշում է պատասխանողը, մաքրագրում են իրենց աշխատանքները, ուստի որեւէ հիմք չկար արգելելու տեսաձայնագրումը հատկապես վերջին 1 ժամվա ընթացքում:

Պատասխանողի պատճառաբանությունն այն մասին, որ հայցվորները պատշաճ չեն, նույնպես անհիմն է: Հանձնաժողովի թիվ 8 արձանագրության 2.2 կետը վերաբերում է բոլոր լրագրողներին, հետեւաբար յուրաքանչյուր լրագրող կարող է դատական կարգով բողոքարկել այն. «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ-ն իր կանոնադրությանը համաձայն նույնպես իրա-

վասու Է պաշտպանելու լրագրողների իրավունքները:

Սակայն, վերը շարադրվածի հետ մեկտեղ նշված որոշումը չի գործել. կողմերի բացատրություններից բխում է, որ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ»-ի ներկայացուցիչների միջամտությունից հետո քննական հանձնաժողովը թույլատրել է լրագրող Արտակ Յովհաննիսյանին անարգել նկարահանումներ կատարել: Այսպիսով, հանձնաժողովի որոշման վերաբերյալ կողմերի վեճը քննությունների փուլում արդեն իսկ լուծվել է արտադատական կարգով, իսկ ներկայումս այդ որոշումը, ինչպես եւ քննական հանձնաժողովը դադարել են գործել: Յետեւապես, վիճարկվող որոշմամբ ինչպես նախկինում, այնպես էլ այժմ լրագրողների իրավունքները չեն խախտվել, եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 161 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համապատասխան՝ հայցվորների պահանջը ենթակա չէ բավարարման:

Ինչ վերաբերում է արձանագրությունները ծանոթացման համար տրամադրելու վերաբերյալ հայցվորների պահանջին, ապա դատաքննությամբ պարզվեց, որ ներկայումս դրանց ծանոթանալու համար արգելքներ չկան, հետեւապես եւ հայցվորների իրավունքները այդ առումով նույնպես խախտված չեն:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 163, 130-132 հոդվածներով՝ դատարանը

#### **Վ Ճ Ո Շ Ց**

Հայցվորներ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության եւ Գագիկ Նիկողոսյանի հայցը մերժել ամբողջովին:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին հրապարակման օրվանից 15 օրվա ընթացքում:

Դ Ա Տ Ա Վ Ո Ր՝

Վ. Լ Ա Լ Ա Յ Ա Ն



### **ԳՈՐԾ 13.**

**Հեռախոսային լրագրողների ընկերակցությունն**

*ընդդեմ*

**ՀՀ Մաքսային դեսպան կոմիտեի**

## **Գործի համառոտ նկարագրությունը**

2001թ. հոկտեմբերի 9-ին «Յետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն գրավոր դիմել էր ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի պետ Ա. Ավետիսյանին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել հետևյալ հարցերի մասին.

1. Ոչ մետաղական հանքավայրերը շահագործող ո՞ր կազմակերպություններ են արտահանում իրենց արտադրանքը:
2. 1997թ.-ից առ այսօր այդ կազմակերպությունները որքա՞ն արտադրանք (քար) են արտահանել:
3. 1997թ.-ից առ այսօր արտադրանքի այդ տեսակներն արտահանելուց ինչքա՞ն տուրք է վճարվել:

2001թ հոկտեմբերի 10-ին ստացվեց կոմիտեի պետի տեղակալ Ս. Թադևոսյանի գրությունը, որով հիմք ընդունելով ՀՀ մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածը՝ «Մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից չի կարող օգտագործվել այլ նպատակով», գրավոր հրաժարվել է պատասխանել առաջադրված հարցերին:

«Յետաքննող լրագրողների ընկերակցությունը» 2001թ. նոյեմբերի 6-ին դիմեց Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան խնդրանքով, որ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի պետ Ա. Ավետիսյանին պարտադրվի՝

- դադարեցնել պահանջվող տեղեկատվության տրամադրման մերժմանն ուղղված գործողությունները (անգործությունը),
- հնարավորինս սեղմ (տասնօրյա) ժամկետում սպառիչ տեղեկատվություն տրամադրել վերոհիշյալ հարցերի վերաբերյալ:

2001թ. դեկտեմբերի 18-ին տեղի ունեցած դատական քննության ընթացքում պատասխանող կողմը հիմք ընդունելով ՀՀ մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածը եւ ՀՀ քաղաքացիակաի օրենսգրքի 141-րդ հոդվածը՝ «տեղեկատվությունը առետրային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առետրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար, իսկ նույն հոդվածի 2-րդ կետով տեղեկությունները, որոնք չեն կարող առետրային գաղտնիք լինել սահմանվում են օրենքով», եւ նկատի ունենալով, որ դեռեւս չի ընդունվել առետրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների մասին ՀՀ օրենքը, դիմողի կողմից պահանջվող տեղեկությունները դիտել է որպես առետրային գաղտնիք եւ նրա պահանջը գրավոր մերժել: Պատասխանողի ներկայացուցիչը դատաքննության ժամանակ հայտարարեց նաեւ, որ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմի-

տեն չի տիրապետում դիմողի կողմից պահանջվող տեղեկություններին: Դատարանը վճռեց մերժել «Յետաքննող լրագրողների ընկերակցություն» ՅԿ-ի հայցը:

«Յետաքննող լրագրողների ընկերակցությունը» ՅԿ-ը վճիռը բողոքարկեց ՅՅ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան:

2002թ. փետրվարի 1-ին վերաքննիչ դատարանը վճռեց մասնակի բավարարել լրագրողների դիմումը՝ ՅՅ կառավարությանն առընթեր մաքսային կոմիտեին պարտավորեցնելով սպառիչ տեղեկություններ տրամադրել կազմակերպության դիմումի 3-րդ հարցի վերաբերյալ:

## **Գործի նյութերը**

**Կենտրոն եւ Նորք-մարաշ համայնքների  
առաջին ատյանի դատարանին**

**Դիմող՝ «Յետաքննող լրագրողների ընկերակցություն»  
ՅԿ Նախագահ՝ Էդիկ Բաղդասարյան**  
Երեւան, Դեղատան 4, բն. 1ա, հեռ. 524105

**Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան**

**Ընդդեմ՝ ՅՅ կառավարությանն առընթեր մաքսային  
պետական կոմիտեի պետ Արմեն Ավետիսյանի**  
Երեւան, Մ. Խորենացու 3, հեռ. 53-62-22

### **ԴԻՄՈՒՄ**

**Պաշտոնատար անձի գործողությունները (անգործությունը)  
վիճարկելու եւ սպառիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու  
պահանջի մասին**

09.10.01թ. «Յետաքննող լրագրողների ընկերակցություն» ՅԿ Նախագահ Է. Բաղդասարյանը գրավոր դիմել է ՅՅ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի պետ Ա. Ավետիսյանին, խնդրելով տեղեկություններ տրամադրել հետեւյալ հարցերի մասին.

1. Ոչմետաղական հանքավայրերը շահագործող ո՞ր կազմակերպություններն են արտահանում իրենց արտադրանքը
2. 1997թ.-ից առ այսօր այդ կազմակերպությունները որքան արտադրանք (քար) են արտահանել:
3. 1997թ.-ից առ այսօր արտադրանքի այդ տեսակներն արտահանելուց ինչքա՞ն տուրք է վճարվել:

24.10.01թ. ստացվել է նույն կոմիտեի պետի տեղակալ Ս. Թադեւոսյանի

գրությունը, որով, հղում կատարելով ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 16-ին, հրաժարվել է պատասխանել առաջադրված հարցերին:

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու իրավունք: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկատվություն փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք: «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու իրավունք: «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ցանկացած տեսակի տեղեկատվություն փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք:

Եվ, վերջապես, «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից... դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրությանը եւ սույն օրենքի 6 հոդվածի պահանջներին» իսկ 27-րդ հոդվածի համաձայն «Լրագրողն իրավունք ունի. 1. հավաքել եւ հրապարակել լուրեր եւ տեղեկություններ», «Արգելվում է խանգարել լրագրողին՝ իր մասնագիտական պարտականությունները կատարելիս»:

Յուրաքանչյուրի եւ հատկապես լրագրողի, տվյալ դեպքում՝ Է. Բաղդասարյանի տեղեկություններ ստանալու իրավունքը խարսխված է այլոց, այդ թվում եւ առաջին հերթին պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց՝ տեղեկություններ տրամադրելու պարտավորության վրա (մանրամասն տես՝ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի համաձայնագիրը: Այս եւ վերը նշված մյուս միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են): Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ այն պետական կամ այլ գաղտնիք է պարունակում:

Ա. Ավետիսյանը (Ս.Թադեոսյան), մերժելով տեղեկատվության տրամադրումը, հղում է կատարում ՀՀ մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածին, որի համաձայն «Մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից չի կարող օգտագործվել այլ նպատակով»:

Պահանջվող տեղեկատվությունը չի վերաբերում ոչ պետական, եւ ոչ էլ այլ

գաղտնիքի: Ուստի, դրա վերաբերյալ կիրառելի չէ ՀՀ մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածի պահանջը: Ավելին, լրագրողին օրենքով չարգելված ինֆորմացիա տրամադրելը չի կարող դիտվել իբրև «մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվության այլ նպատակով օգտագործում»:

Ա. Ավետիսյանը (Ս. Թադևոսյան), մերժելով պահանջված տեղեկատվության տրամադրումը, խախտել է ՀՀ Սահմանադրության, վերը նշված միջազգային պայմանագրերի եւ ներպետական օրենսդրության՝ ինֆորմացիայի ազատությանը վերաբերող հիմնարար դրույթները:

Վերոգրյալի հիման վրա եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի պահանջներին համապատասխան

### ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի պետ Ա. Ավետիսյանին պարտադրել՝

1. Դադարեցնել պահանջվող տեղեկատվության տրամադրման մերժմանն ուղղված գործողությունները (անգործությունը):
2. Հնարավորինս սեղմ (տասնօրյա) ժամկետում սպառիչ տեղեկատվություն տրամադրել 09.10.01թ. թիվ 08-ի 5 գրությամբ մատնանշված հարցերի վերաբերյալ:

Կից ներկայացնում եմ՝

1. 09.10.01թ. թիվ 08-ի 5 գրությունը
2. 24.10.01թ. պատասխանը
3. պետ տուրքի անդորրագիր
4. Լիազորագիր

ԴԻՄՈՂ՝

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝

Կ. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

06.11.01թ.

## ՎՃԻՌ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների  
առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով՝**

**Նախագահությամբ՝ դատավոր  
Քարտուղարությամբ՝  
Մասնակցությամբ՝  
Դիմողի ներկայացուցիչներ՝**

**Վ. Լալայանի  
Ս. Բալաբեկյանի**

**Է. Բաղդասարյանի  
Կ. Մեծլումյանի  
Գ. Ներսիսյանի**

**Պատասխանողի ներկայացուցիչ՝**

2001թ. դեկտեմբերի 18-ին դատարանում դռնբաց դատական նիստում քննեց քաղաքացիական գործն ըստ դիմումի «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Արմեն Ավետիսյանի՝ պաշտոնատար անձի գործողությունները /անգործությունը/ վիճարկելու եւ սպառնիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին.

Դատաքննությամբ դատարանը պարզեց հետեւյալը.

Դիմումատուն, դիմելով դատարան, հայտնել է, որ 09.10.01թ. «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀՀ նախագահ Է. Բաղդասարյանը գրավոր դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Ա. Ավետիսյանին, խնդրելով տեղեկություններ տրամադրել հետեւյալ հարցերի մասին.

1. Ոչ մետաղական հանքավայրերը շահագործող ո՞ր կազմակերպություններն են արտահանում իրենց արտադրանքը:
2. 1997թ.-ից առ այսօր այդ կազմակերպությունները որքան արտադրանք /քար/ են արտահանել:
3. 1997թ.-ից առ այսօր արտադրանքի այդ տեսակներն արտահանելուց ինչքան տուրք է վճարվել:

24.10.01թ. ստացվել է նույն կոմիտեի նախագահի տեղակալ Ս. Թադեոսյանի գրությունը, որով հղում կատարելով ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 16-ին հրաժարվել է պատասխանել առաջադրված հարցերին: ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու իրավունք: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի տեղեկություն փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք:

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչ-

յուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու իրավունք: «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ցանկացած տեսակի տեղեկություն փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք:

Եվ վերջապես, «Մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից... դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրությանը եւ սույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին», իսկ 27-րդ հոդվածի համաձայն՝ «Լրագրողն իրավունք ունի հավաքել եւ հրապարակել լուրեր եւ տեղեկություններ», «Արգելվում է խանգարել լրագրողներին մասնագիտական պարտականությունները կատարելիս»:

Յուրաքանչյուրի եւ հատկապես լրագրողի, տվյալ դեպքում Է. Բաղդասարյանի տեղեկություններ ստանալու իրավունքը խախտված է այլոց, այդ թվում եւ առաջին հերթին պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց տեղեկություններ տրամադրելու պարտավորությա վրա: Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, եթե այն պետական կամ այլ գաղտնիք է պարունակում:

Ա. Ավետիսյան /Ս. Թադևոսյան/, մերժելով տեղեկատվության տրամադրումը, հղում է կատարում ՀՀ մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածին, որի համաձայն «Մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից չի կարող օգտագործվել այլ նպատակով»: Պահանջվող տեղեկատվությունը չի վերաբերում ոչ պետական եւ ոչ էլ այլ գաղտնիքի: Ուստի դրա վերաբերյալ կիրառելի չէ ՀՀ մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածի պահանջը: Ավելին, լրագրողին օրենքով չարգելված ինֆորմացիա տրամադելը չի կարող դիտվել իբրեւ «մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվության այլ նպատակով օգտագործում»:

Ա. Ավետիսյանը /Ս. Թադևոսյան/, մերժելով պահանջված տեղեկատվության տրամադրումը, խախտել է ՀՀ Սահմանադրության, վերը նշված միջազգային պայմանագրերի եւ ներպետական օրենսդրության ինֆորմացիայի ազատությանը վերաբերող հիմարար դրույթները:

Դիմումատուն դատարանին խնդրել էր ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Ա. Ավետիսյանին պարտադրել դադարեցնել պահանջվող տեղեկատվության տրամադրման մերժմանն ուղղված գործողությունները /անգործությունը/ հնարավորինս սեղմ /տասնօրյա/ ժամկետում սպառիչ տեղեկատվություն տրամադրել 09.10.01թ. թիվ 08-հ5 գրությամբ մատնանշված հարցերի վերաբերյալ:

Դիմումատուի ներկայացուցիչները պնդեցին դիմումը եւ հայտնեցին, որ «Յետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության անդամներ Է. Բաղդասարյանը եւ Գ. Մուքոյանը լրագրողական հետաքննություն են կատարում ընդերքի ոչ մետաղական հանքավայրերի շահագործման վերաբերյալ: Այն վերաբերում է շրջակա միջավայրի եւ բնապահպանության ոլորտին՝ իր ածանցյալներով: 08.12.01թ. «Ազգ» օրաթերթում տպագրվել է թեմային վերաբերող առաջին հոդվածը Գ. Մուքոյանի հեղինակությամբ, վերնագրված «Էկոլոգիական մաֆիա: Յորինվածք, թե՞ իրականություն»: Այն շարունակելի է: Այդ թեմայի վերաբերող հարցերով դիմումատուն դիմել է պատասխանողին տալ դիմումում շարադրված տեղեկությունները, սակայն պատասխանողի կողմից գրավոր մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, թե իբր այդ տեղեկությունները իրավաբանական անձանց առետրային գաղտնիք են պարունակում: Նշեցին, որ իրենք գտնում են, որ պահանջվող տեղեկությունները առետրային գաղտնիք չեն պարունակում եւ խնդրեցին դատարանին դիմումը բավարարել:

Պատասխանողի ներկայացուցիչը դիմումատուի դիմումը չընդունեց եւ հայտնեց, որ դիմող կողմը իր պահանջների հիմքում դրել է միջազգային կոնվենցիայի եւ դաշնագրերի համապատասխան հոդվածների միայն իրեն հետաքրքրող մասերը, չներկայացնելով եւ չհիմնվելով այդ հոդվածների այն պարբերություններին, որոնք արգելում են այս կամ այն տեղեկատվության տրամադրումը: Մասնավորապես՝ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների եւ պատասխանատվության: Ուստի այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է սահմանվեն միայն օրենքով եւ լինեն անհրաժեշտ այլ անձանց իրավունքները եւ հեղինակությունը հարգելու եւ պետական անվտանգության կամ հասարակական կարգի կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

Նույնաբովանդակ նորմ է պարունակվում նաեւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը: Դիմումատուի կողմից պահանջվող տեղեկությունները պարունակում են առետրային գաղտնիք, որի հասկացությունը սահմանված է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 141 հոդվածում, իսկ առանց տնտեսվարող սուբյեկտների համաձայնության նրանց տնտեսական գործունեությանը վերաբերող առետրային գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրելը կարող է առաջ բերել նշված օրենսգրքի 141 հոդվածի 4-րդ մասով նախատեսված սանկցիաների կիրառում:

«Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից, դրանց ղեկավարներ-



րից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրության եւ այդ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին»:

Նա նշեց, որ միջազգային կոնվենցիայի եւ դաշնագրի, եւ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» վերը նշված հոդվածների հիման վրա ՀՀ Մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանել է, որ առեւտրական գատնիք կազմող տեղեկությունները մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից չեն կարող հրապարակվել, օգտագործվել անձնական նպատակների համար եւ տրամադրվել երրորդ անձանց: Նկատի ունենալով վերը շարադրվածը եւ հաշվի առնելով, որ դեռեւս ՀՀ-ում չի ընդունվել օրենք Առեւտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների մասին, ապա պատասխանողը գրավոր մերժել է դիմողի պահանջները: Պատասխանողի ներկայացուցիչը հայտնեց նաեւ ՀՀ Մաքսային օրենսգրքի համաձայն ՀՀ-ից հանքային քար արտահանող անձինք ազատված են մաքսատուրքից: Նա հայտարարեց նաեւ, որ Մաքսային պետական կոմիտեն դիմողի պահանջած տեղեկություններին իրականում չի տիրապետում, քանի որ դրանց վերաբերյալ հաշվառում, ամփոփում եւ համակարգում չի իրականացվել:

Խնդրեց դիմումը մերժել:

Լսելով կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով գործում եղած նյութերը եւ գնահատելով դրանք, դատարանը գտավ, որ դիմողի դիմումը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 24-րդ, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19-րդ, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ եւ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 19-րդ հոդվածների համաձայն յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք, որն ընդգրկում է տեղեկատվություն եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը: Սակայն Կոնվենցիայի եւ Դաշնագրի նշված հոդվածներում միաժամանակ նախատեսվել են, որ պետության ազգային օրենքներով կարող են որոշակի սահմանափակումներ սահմանել որոշակի տեղեկատվություն ստանալու եւ տարածելու իրավունքների իրականացման մեջ: «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից... դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրության եւ նույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին:

Ելնելով կոնվենցիայի եւ դաշնագրի, ինչպես նաեւ «ՉԼԱ» մասին օրենքի նշ-

ված հոդվածներից՝ ՀՀ-ում ընդունված Մաքսային նոր օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանել է, որ սույն օրենսգրքի եւ այլ իրավական ակտերի համաձայն մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից չի կարող օգտագործվել այլ նպատակներով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, եւ որ առեւտրական գաղտնիք կազմող տեղեկությունները մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից չեն կարող հրապարակվել, օգտագործվել անձնական նպատակների համար եւ տրամադրվել երրորդ անձանց, այդ թվում՝ պետական մարմինների, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ մաքսային մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք վերադաս մաքսային մարմնի թույլտվությամբ օրենքով սահմանված իրավասություն ունեցող երրորդ անձանց են տրամադրում համապատասխան տեղեկատվություն եւ փաստաթղթերի բնօրինակներ կամ պատճեններ:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 141 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվությունը առեւտրային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առեւտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն տեղեկությունները, որոնք չեն կարող առեւտրային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով:

Պատասխանողը, հիմք ընդունելով ՀՀ Մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածը եւ Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածը եւ նկատի ունենալով, որ դեռեւս չի ընդունվել Առեւտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների մասին ՀՀ օրենքը, դիմողի կողմից պահանջվող տեղեկությունները դիտել է որպես առեւտրային գաղտնիք, եւ նրա պահանջը գրավոր մերժվել է:

Նկատի ունենալով, որ պատասխանողի ներկայացուցիչը դատաքննության ժամանակ հայտարարեց, որ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն չի տիրապետում դիմողի կողմից պահանջվող տեղեկություններին, եւ հաշվի առնելով, որ դիմող կողմը որեւէ ապացույց չներկայացրեց դատարանին մաքսային պետական կոմիտեի կողմից այդ տեղեկություններին տիրապետման մասին՝ դատարանը հանգեց այն հետեւության, որ դիմողի դիմումը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով՝ դատարանը

**ՎՃՌԵՑ**

«Յետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության դիմումը մերժել:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին հրապարակման օրվանից 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Վ. ԼԱԼԱՅԱՆ

**ՀՀ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին****Թիվ 2-2908 քաղ. գործով դիմող՝****«Հետաքննող լրագրողների ընկերակցություն», ՀԿ  
Նախագահ Էդիկ Բաղդասարյան,****Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան**  
Երեւան, Դեղատան փ. 4, բն 1ա, հեռ. 52-41-05**Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ի Չ Բ Ո Ղ Ո Ք**

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը 18.12.01թվին քննեց քաղաքացիական գործն ըստ դիմումի «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ Նախագահ Է. Բաղդասարյանի եւ ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Ա. Ավետիսյանի՝ պաշտոնատար անձի գործողությունները (անգործությունը) վիճարկելու եւ սպառնիչ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին:

Դատարանը դիմումը մերժել է: Դատարանի վճիռը կայացվել է նյութական եւ դատավարական իրավունքի խախտումներով:

Դիմումը մերժելու դատարանի պատճառաբանությունը չի բխում ՀՀ գործող ներպետական օրենսդրության ու միջազգային պայմանագրերի պահանջներից եւ դրանց սխալ մեկնաբանման ու խեղաթյուրված ներկայացման արդյունք է:

Այսպես: Դատարանը դիմումը մերժել է հետեւյալ պատճառաբանությամբ. «Նկատի ունենալով, որ պատասխանողի ներկայացուցիչը դատաքննության ժամանակ հայտարարեց, որ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն չի տիրապետում դիմողի կողմից պահանջվող տեղեկություններին, եւ հաշվի առնելով, որ դիմող կողմը որեւէ ապացույց չներկայացրեց դատարանին մաքսային պետական կոմիտեի կողմից այդ տեղեկություններին տիրապետման մասին, դատարանը հանգեց այն հետեւության, որ դիմողի դիմումը պետք է մերժել»:

Պատասխանողի ներկայացուցչի հայտարարությունը հիմք ընդունելով՝ դատարանը դիմումը մերժելու հիմքում է դրել պատճառաբանությունն առ այն, որ պատասխանողը չի տիրապետում պահանջվող տեղեկություններին: Նման պատճառաբանությունն անհիմն է, քանի որ դիմողը խնդրել էր տրամադրել տեղեկատվություն հետեւյալի մասին.

«1. Ոչմետաղական հանքավայրերը շահագործող ո՞ր կազմակերպություններն են արտահանում իրենց արտադրանքը:

2. 1997թ.-ից առ այսօր այդ կազմակերպությունները որքա՞ն արտադրանք (քար) են արտահանել (ընդհանուր քանակը, առանց կոնկրետացնելու):
3. 1997թ.-ից առ այսօր արտադրանքի այդ տեսակներն արտահանելուց ինչ-քա՞ն տուրք է վճարվել (պետքյուշե որքան գումար է մուտքագրվել):

ՀՀ մաքսային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային գործը, որն իրականացնում են մաքսային մարմինները, ընդգրկում է ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման կարգը եւ պայմանները, մաքսային վճարների գանձումը, մաքսային ձեւակերպումները, մաքսային հսկողությունը եւ այլ միջոցներ: Նույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն ապրանք է նաեւ քարը: Օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները ենթակա են հայտարարագրման, իսկ 138-րդ հոդվածի համաձայն մաքսային հսկողության են ենթակա ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր ապրանքները: Օրենսգրքի 109-110-րդ հոդվածներով սահմանված է մաքսավճարի (տուրքի) հասկացությունը եւ սակագինը, որպիսիք գանձում են մաքսային մարմինները: Եվ վերջապես ՀՀ մաքսային օրենսգրքի 179-րդ հոդվածով սահմանված է, որ՝ «մաքսային մարմիններն իրականացնում են ՀՀ մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների մասին տվյալների հավաքում ու մշակում, ինչպես նաեւ հրապարակում են մաքսային վիճակագրության տվյալները»:

Այսպիսով, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն եւ դրա նախագահ Ա. Ավետիսյանը ի պաշտոնե տիրապետում են (պետք է տիրապետեն) պահանջվող տեղեկատվությանը:

Ինչ վերաբերում է դատարանի պատճառաբանությանը, թե «դիմող կողմը որեւէ ապացույց չներկայացրեց դատարանին մաքսային պետական կոմիտեի կողմից այդ տեղեկություններին տիրապետման մասին», ապա նշենք, որ օրենքով (ՀՀ մաքսային օրենսգրքի վերը նշված եւ այլ հոդվածներով) է սահմանված, որ պատասխանողը տիրապետում է պահանջվող տեղեկատվությանը, դա պատասխանողի, օրենքով սահմանված, գործառույթն (ֆունկցիան) է: Այն, ինչ սահմանված է օրենքով, ապացուցման ենթակա չէ: Այսպիսով՝ դատարանը ապացույցները գնահատելիս խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջը՝ պահանջվող տեղեկատվությանը պատասխանողի չտիրապետելու մասին սնանկ հայտարարությունը ղնելով վճռի հիմքում:

Դատարանը վճռի պատճառաբանական մասում հղում է կատարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածին՝ մեջբերելով դրա 1-ին եւ 2-րդ մասերը, սակայն «խորամանկություն» անելով, ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի պահանջների, հետեւություն չի անում, թե պատասխանողից պահանջվող տեղեկատվությունը առեւտրային գաղտնիք է իրենից ներկայացնում, թե՛ ոչ, այլ նշում է. «Պատասխանողը դիմողի կողմից պահանջվող տեղեկությունները դիտել է որ-

պես առեւտրային գաղտնիք եւ նրա պահանջը գրավոր մերժել է»: Եթե դատարանը դիմումի մերժման հիմքում դրել է նաեւ պահանջվող տեղեկատվության առեւտրային գաղտնիք լինել-չլինելու հանգամանքը, ապա վճռի պատճառաբանական մասում պետք է շարադրեր դրա վերաբերյալ իր հետեւությունները եւ ոչ թե պատասխանողի դիտարկումները (դիտել է):

Այսպիսով, դատարանի վճիռը կայացվել է ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի, ՀՀ քաղ. օր-ի 141-րդ հոդվածի, «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 27-րդ հոդվածների, ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 16-րդ, 109-րդ, 110-րդ, 128-րդ, 138-րդ, 179-րդ եւ այլ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 48-րդ, 132-րդ եւ այլ հոդվածների խախտումով, ուստի

### **ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ՝**

Վերաքննության կարգով քննել սույն քաղ. գործը եւ բավարարել դիմումը:  
Կից ներկայացնում ենք՝

1. Վճռի պատճեն
2. Պետտուրքի անդորրագիր
3. Բողոքի օրինակը կողմին ուղարկելու փոստային անդորրագիր
4. Լիազորագիր

Է. Բաղդասարյան  
Կ. Մեժլումյան

03.01.2002թ.

**Վ Ճ Ի Ռ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը հետեւյալ կազմով՝**

<b>Նախագահող դատավոր՝</b>	<b>Ա. Աստուխյան</b>
<b>Դատվորներ՝</b>	<b>Մ. Դրմեյան, Ա. Հունանյան</b>
<b>Քարտուղարությամբ՝</b>	<b>Գ. Գեւորգյանի</b>
<b>Մասնակցությամբ՝</b>	
<b>Դիմողի ներկայացուցիչներ</b>	<b>Է. Բաղդասարյան, Կ. Մեծլումյան</b>
<b>Պատասխանողի ներկայացուցիչ՝</b>	<b>Գ. Ներսիսյան</b>

2002թ փետրվարի 01-ին դռնբաց դատական նիստում Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի /դատավոր՝ Վ. Լալայան/ 2001թ դեկտեմբերի 18-ին կայացրած վճռի դեմ սույն քաղաքացիական գործով դիմողի կողմից ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննական կարգով քննության առավ քաղաքացիական գործն ըստ դիմումի՝ «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Արմեն Ավետիսյանի՝ պաշտոնատար անձի գործողությունները /անգործությունը/ վիճարկելու եւ սպառնիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին:

Դատաքննությամբ եւ գործի փաստական հանգամանքներով վերաքննիչ դատարանը պարզեց հետեւյալը.

Դիմողի ներկայացուցիչ Կ. Մեծլումյանը վերաքննիչ դատարանում պնդեց տված բացատրությունները եւ հայտնեց, որ «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության անդամներ Է. Բաղդասարյանը եւ Գ. Մուքոյանը լրագրողական հետաքննություն են կատարում ընդերքի ոչ մետաղական հանքավայրերի շահագործման վերաբերյալ: Այն վերաբերվում է շրջակա միջավայրի եւ բանապահպանության ոլորտին, որի ածանցյալներով «Ազգ» օրաթերթում տպագրվել է թեմային վերաբերվող առաջին հոդվածը Գ. Մուքոյանի հեղինակությամբ՝ վերնագրված «Էկոլոգիական մաֆիա: Հորինվածք, թե իրականություն»: Այն շարունակելի է: Այդ թեմային վերաբերող հարցերով 09.10.01թ-ին «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ նախագահ Է. Բաղդասարյանը գրավոր դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Արմեն Ավետիսյանին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել հետեւյալ հարցերի վերաբերյալ.

1. Ոչ մետաղական հանքավայրերը շահագործող ո՞ր կազմակերպություններ են արտահանում իրենց ատաղորանքը:
2. 1997թ.-ից առ այսօր այդ կազմակերպությունները որքա՞ն արտադրանք (քար) են արտահանել:

3. 1997թ.-ից առ այսօր արտադրանքի այդ տեսակներն արտահանելուց ինչքա՞ն տուրք է վճարվել:

24.10.01թ-ին ստացվել է նույն կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Թադևոսյանի գրությունը, որում հղում կատարելով ՀՀ մաքսային օրենսգրքի 16 հոդվածին՝ հրաժարվել է պատասխանել առաջադրված հարցերին: ՀՀ Սահմանադրության 24 հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու իրավունք: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19 հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի տեղեկատվություն փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք:

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու իրավունք: «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 19-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի ցանկացած տեսակի տեղեկատվություն փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք: Եվ, վերջապես, «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն «Մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից, դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրությանը եւ սույն օրենքի 6 հոդվածի պահանջներին» իսկ 27-րդ հոդվածի համաձայն «Լրագրողն իրավունք ունի. 1. հավաքել եւ հրապարակել լուրեր եւ տեղեկություններ», «Արգելվում է խանգարել լրագրողին՝ իր մասնագիտական պարտականությունները կատարելիս»:

Յուրաքանչյուրի եւ հատկապես լրագրողի, տվյալ դեպքում՝ Է. Բաղդասարյանի տեղեկություններ ստանալու իրավունքը խախտված է այլոց, այդ թվում, եւ առաջին հերթին պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց՝ տեղեկություններ տրամադրելու պարտավորության վրա: Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ այն պետական կամ այլ գաղտնիք է պարունակում: Ա. Ավետիսյանը (Ս.Թադևոսյան) մերժելով տեղեկատվության տրամադրումը հղում է կատարում ՀՀ մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածին, որի համաձայն «Մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից չի կարող օգտագործվել այլ նպատակով»: Պահանջվող տեղեկատվությունը չի վերաբերում ոչ պետական, եւ ոչ էլ այլ գաղտնիքի: Ուստի դրա վերաբերյալ կիրառելի չէ ՀՀ մաքսային օրենսգրքի 16 հոդվածի պահանջները: Դիմողի ներկայացուցիչ Կ. Մեծլումյանը վերաքննիչ դատարանից խնդրեց դիմումը բավարարել՝ քանի որ իրենք գտնում են, որ պահանջվող տեղեկությունները առետրային գաղտնիք չեն պարունակում:



Պատասխանողի ներկայացուցիչ Գ. Ներսիսյանը վերաքննիչ դատարանում առարկեց դիմումի դեմ, պնդեց առաջին ատյանի դատարանում տված բացատրությունները եւ հայտնեց, որ դիմումում առաջադրված հարցերից ինքը կարող է պատասխանել միայն 3-րդ հարցին, իսկ ինչ վերաբերվում է առաջին երկու հարցերին ինքը չի կարող պատասխանել քանի որ այդ տեղեկություններին ինքը չի տիրապետում: Դիմող կողմը իր պահանջների հիմքում դրել է միայն միջազգային կոնվենցիաների եւ դաշնագրերի համապատասխան հոդվածների միայն իրեն վերաբերվող հարցերի մասերը, չներկայացնելով եւ չհիմնավորելով այդ հոդվածների այն պարբերությունները, որոնք արգելում են այս կամ այն տեղեկատվության տրամադրումը: Մասնավորապես «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների եւ պատասխանատվության: Ուստի այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք պետք է սահմանվեն միայն օրենքով եւ լինեն անհրաժեշտ այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու եւ պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության, կամ բարոյականության պաշտպանության համար: Նույնաբովանդակ կործ է պարունակվում նաեւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը:

Դիմումատուի կողմից պահանջվող տեղեկությունները պարունակում են առեւտրային գաղտնիք, որի հասկացությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում: Իսկ առանց տնտեսվարող սուբյեկտների համաձայնության նրանց տնտեսական գործունեությանը վերաբերող առեւտրային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելը կարող է առաջ բերել նշված օրենսգրքի 141-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սանկցիաների կիրառում: «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից, դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրությանը եւ սույն օրենքի 6 հոդվածի պահանջներին: Նշեց նաեւ, որ միջազգային կոնվենցիայի եւ դաշնագրի, ինչպես նաեւ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների» մասին վերը նշված հոդվածների հիման վրա ՀՀ Մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանել է, որ առեւտրական գաղտնիք կազմող տեղեկությունները մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից չեն կարող հրապարակվել, օգտագործվել անձնական նպատակների համար եւ տրամադրվել 3-րդ անձանց: Նկատի ունենալով վերը նշվածը եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում դեռեւս չի ընդունվել օրենք առեւտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների մասին, ապա պատասխանողը գրավոր մերժել է դիմողի պահանջները: Պատասխանողի ներկայացուցիչը հայտնեց նաեւ,

որ ՀՀ Մաքսային օրենսգրքի համաձայն ՀՀ-ից հանքային քար արտահանող անձինք ազատված են մաքսատուրքից: Մաքսային պետական կոմիտեն դիմողի պահանջած տեղեկություններին իրականում չի տիրապետում, քանի որ դրանց վերաբերյալ հաշվառում, ամփոփում եւ համակարգում չի իրականացվել: Պատասխանողի ներկայացուցիչ Գ. Ներսիսյանը վերաքննիչ դատարանից խնդրեց դիմումը մերժել:

Լսելով կողմերի բացատրությունները, ուսումնասիրելով եւ գնահատելով գործի փաստական հանգամանքները վերաքննիչ դատարանը գտավ, որ դիմումը ենթակա է բավարարման մասնակիորեն եւ պատասխանող կազմակերպությանը պետք է պարտավորեցնել պատասխանելու հայցվորի կողմից ներկայացված հարցերից երրորդ հարցին, իսկ մնացած մասով մերժել՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

դատաքննությամբ հետազոտված ապացույցներով դատարանը հաստատված համարեց հետեւյալ հանգամանքները.

09.10.01թ-ին «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ նախագահ Է. Բաղդասարյանը գրավոր դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Արմեն Ավետիսյանին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել հետեւյալ հարցերի վերաբերյալ.

1. Ոչմետաղական հանքավայրերը շահագործող ո՞ր կազմակերպություններ են արտահանում իրենց ատադրանքը:
2. 1997թ.-ից առ այսօր այդ կազմակերպությունները որքա՞ն արտահորանք (քար) են արտահանել:
3. 1997թ.-ից առ այսօր արտահորանքի այդ տեսակներն արտահանելուց ինչքա՞ն տուրք է վճարվել:

24.10.01թ-ին ստացվել է նույն կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Թադեւոսյանի գրությունը, որում հղում կատարելով ՀՀ մաքսային օրենսգրքի 16 հոդվածին՝ հրաժարվել է պատասխանել առաջադրված հարցերին:

Ներկայացված առաջին երկու հարցերի վերաբերյալ հրաժարվելով տալ պատասխան՝ պատասխանողը իրավաչափ կերպով ղեկավարվել է ՀՀ Մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածով եւ ՀՀ մաքսային կոմիտեի կանոնադրության 14 կետով: Դիմող կողմի պնդումներն այն մասին, որ այդ տեղեկությունները չեն կարող առելուրային, ծառայողական կամ պետական գաղտնիք հանդիսանալ անհիմն են եւ չեն բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի պահանջներից: Անհիմն է նաեւ դիմող կողմի պատճառաբանությունն այն մասին, որ որոշ պետական կառավարման մարմիններ տեղեկատվություն են տվել նշված հարցերի վերաբերյալ, քանի որ դիմումատուի կողմից դատարանին ներկայացված գրավոր բացատրության բովանդակությունից դատարանին հայտնի դարձավ, որ պատասխաններ են ստացվել ՀՀ պետական բյուջե մուտք եղած գումարները ընդհանրացված

ձեռով, որպիսի տեղեկատվություն տրամադրելուց չի հրաժարվում նաև պատասխանող կողմը:

Ինչ վերաբերում է դիմող կողմի ներկայացրած երրորդ հարցին՝ այն է 1997 թվականից առ այսօր արտադրանքի այդ տեսակներն արտահանելուց ինչ-քան տուրք է վճարվել, ապա այդ մասին տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, քանի որ չի բխում ՀՀ Մաքսային օրենսգրքի եւ ՀՀ մաքսային կոմիտեի կանոնադրության պահանջներից: Ինչ վերաբերում է պատասխանողի ներկայացուցչի հայտարարությանն այն մասին, որ այդ հարցի պատասխանն արդեն իսկ տրվել է առաջին ատյանի դատարանում՝ այն է սահմանված մաքսատուրքի գրոյական դրույքաչափ, դատարանը գտնում է, որ անհիմն է, քանի որ դատարանում տրված պատասխանը չի կարող դիտվել դիմողի հարցին տրված պաշտոնական պատասխան:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածով վերաքննիչ դատարանը

### ՎճՌԵՑ

Դիմումը բավարարել մասնակիորեն:

Պարտավորեցնել ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեին տեղեկություններ տրամադրել «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ 09.10.01թ. թիվ 08-հ5 դիմումի 3-րդ հարցի վերաբերյալ:

Դիմումը մնացած մասով՝ մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ 15 օրվա ընթացքում:

Նախագահությամբ՝  
ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Մ. ԴԻՄԵՅԱՆ, Ա. ՀՈՒՆԱՆՅԱՆ

**ԳՈՐԾ 13.****Հեռախոսային լրագրողների ընկերակցություն***ընդհան***ՀՀ բնապահպանության նախարարության**

## **Պործի համառոտ նկարագրությունը**

2001թ. «Յետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն դիմել էր Բնապահպանության նախարարություն՝ խնդրելով տեղեկացնել՝ արդյոք Վանաձորի քիմիական (Պրոմթեթ-քիմպրոմ) եւ Ալավերդու լեռնամետալուրգիական (Մանես-Վալեքս ԲԲԸ) գործարանները ենթարկվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Դրական պատասխանի դեպքում ընկերակցությունը խնդրել էր տրամադրել փորձաքննության արդյունքները: Բնապահպանության նախարարի տեղակալի անորոշ պատասխաններից չբավարարված՝ ընկերակցությունը 31.07.2002թ.-ին 4-րդ դիմումն է ուղարկում Բնապահպանության նախարարություն՝ խնդրելով դիմումին պատասխանել ըստ էության: ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Ս. Ամիրխանյանն այս անգամ արդեն հստակ պատասխանում է, որ նշված գործարանները չեն ենթարկվել փորձաքննության: Իսկ սա նշանակում է, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտականությունները չեն կատարել ոչ միայն այդ գործարանների սեփականատեր հանդիսացող ընկերությունը, այլև՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը:

2003թ. մարտի 14-ին «Յետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն դիմեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան ՀՀ բնապահպանության նախարարության անգործությունը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջով: Ընկերակցությունը դատարանից խնդրեց պարտավորեցնել նախարարությանը տրամադրել «Էյ-Փի-Սի» (նախկին Մանեքս-Վալեքս) ընկերությունում կատարված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությունը եւ տեղեկություններ իրականացված ստուգումների եւ ընկերության հետ կնքված պայմանագրի մասին:

Դատական քննության ընթացքում կողմերը եկան համաձայնության: Նախարարությունը պարտավորվեց «Էյ-Սի-Փի»-ից անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան 80 օրը, այս ընկերությունում ավարտել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը եւ դրա եզրակացության օրինակը տրամադրել նաեւ «Յետաքննող լրագրողների ընկերակցությանը»: 2003թ. մայիսի 16-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը (դատավոր Ս. Արամյան) որոշմամբ հաստատեց կողմերի համաձայնությունը:

## Գործի նյութերը

14.03.03թ.

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների  
առաջին ատյանի դատարանին

Դիմող՝ «Յետաքննող լրագրողների ընկերակցություն»  
ՀԿ Նախագահ՝ Էդիկ Բաղդասարյան

Ներկայացուցիչներ՝ **Շուշան Դոյոյան,**  
**Կարեն Մեժլումյան**  
Մաշտոցի 2, բն 40, հեռ. 523571, 563149

Ընդդեմ՝ **ՀՀ բնապահպանության նախարարության**  
Երեւան, Մոսկովյան 35

### Դ Ի Մ ՈՒ Ս

#### Պաշտոնատար անձի անգործությունը վիճարկելու մասին

«Յետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն հրապարակում է «Յետք» ինտերնետային թերթը, ինչպես նաեւ հետաքննություն է իրականացնում քիմիական, լեռնահանքային եւ մետալուրգիայի արդյունաբերության ոլորտում շրջակա միջավայրի ազդեցության պահանջների պահպանման վերաբերյալ:

1. Ընկերակցության նախագահ, լրագրող Էդ. Բաղդասարյանը 28.11.02թ. թիվ 28-հ3 գրությամբ, հղում կատարելով «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 4-րդ, 6-րդ, «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «ՉԼՍ-ի մասին» ՀՀ օրենք) 4-րդ եւ 27-րդ, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 6-րդ եւ 8-րդ, «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» Կոնվենցիայի (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ այլ հոդվածներին, դիմել է ՀՀ բնապահպանության նախարար Վ. Այվազյանին՝ «խնդրելով

1. տրամադրել «Էյ-Սի-Փի» (Մանեքս-Վալեքս) ՓԲԸ-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության արդյունքները, եթե այդպիսիք կան,
2. տեղեկացնել, թե օգոստոս ամսին ստուգումներ իրականացվե՞լ են, թե՞ ոչ: Ի՞նչ է պարզվել ստուգումներով, եւ ընկերությունը երբեւէ ենթարկվե՞լ է պատասխանատվության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջների խախտմամբ՝ առանց փորձաքննության փաստաթղթերի գործունեություն ծավալելու համար: Եթե այո, ապա ընկերությունն իր գործունեության ըն-

թացքում որքա՞ն տույժ-տուգանք է վճարել պետքյուշե առանց փորձաքննության փաստաթղթերի աշխատելու համար,

3. ըստ Օրենքի լիազորված մարմինը պատասխանատվության ենթարկվե՞լ է արդյոք օրենքի պահանջների, մասնավորապես նախատեսվող գործունեության նկատմամբ փորձաքննություն նշանակելու ժամկետների խախտման համար,

4. թույլ տալ ծանոթանալ նշված ընկերության հետ կնքված պայմանագրին,

5. թույլ տալ հարցազրույց անել բնապահպանության նախարարության Մթնոլորտի պահպանության վարչության մասնագետներից մեկի հետ»:

ՀՀ բնապահպանության նախարարության անգործության պատճառով եւ ի խախտումն «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդ-ի, Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի, «Էկոլոգիական տեղեկատվությունը... տրամադրվում է առավելագույն սեղմ ժամանակամիջոցում, սակայն ոչ ուշ, քան խնդրանքի ներկայացման օրվանից մեկ ամիս հետո...», պահանջի՝ ավելի քան երեք ամիս է չի ստացվել նշված գրության պատասխանը, որով խախտվել է նաեւ «ՉԼՄ-ի մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 27-րդ հոդվածներով ամրագրված՝ զանգվածային լրատվության միջոցի եւ լրագրողի՝ ցանկացած պետական մարմնից, դրանց ղեկավարներից տեղեկություններ ստանալու իրավունքը, այլեւ նախարարն իր անգործությամբ խանգարել է հետաքննող լրագրողին իր մասնագիտական պարտականությունները կատարել՝ պահպանվող «ՉԼՄ-ի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով, որի համաձայն. «Արգելվում է խանգարել լրագրողին՝ իր մասնագիտական պարտականությունները կատարելիս»:

Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդ-ի, Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի (Արդարադատության մատչելիությունը), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի պահանջները՝ վիճարկում ենք ՀՀ բնապահպանության նախարարի անգործությունը եւ խնդրում ենք պարտավորեցնել սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 10 օրում ըստ էության պատասխանել «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ի նախագահ Էդ. Բաղդասարյանի 28.11.02թ. թիվ 28-հ3 գրությանը՝ տրամադրելով պահանջվող տեղեկատվությունը:

2. Ի պատասխան «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ի նախագահ Էդ. Բաղդասարյանի հարցումների՝ ստացվել է ՀՀ բնապահպանության նախարարության 18.02.02թ., 26.07.02թ. եւ 15.08.02թ. գրությունները, որոնցից առաջինով նախարարի տեղակալ Ս. Ամիրխանյանը տեղեկացնում է, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն «Մանեքս-Վալեքս» ԲԲԸ-ն պետք է ենթարկվի փորձաքննության, շարունակելով, որ ««Մանեքս-Վալեքս» ԲԲԸ-ի գունավոր մետաղների արտադրության նախագծային փաստաթղթերը փորձաքննության են

ներկայացվել 30.07.01թ.: Սակայն փորձաքննական աշխատանքներին ընթացք տալու համար մեր կողմից պահանջվել են լրացուցիչ փաստաթղթեր»: 26.07.02թ. գրությամբ նախարարի տեղակալը հավաստիացնում է, որ բնապահական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ Լոռվա տեսչությունը պատրաստվում է պլանային ստուգումներ անցկացնել օգոստոս ամսին, որի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, կբացահայտվի նաև նրանց կողմից Էկոփորձաքննության վերաբերյալ պահանջված լրացուցիչ փաստաթղթերի ուշացման պատճառները: 15.08.02թ. գրությամբ նախարարի տեղակալը տեղեկացնում է, որ «Մանեքս-Վալեքս» ԲԲԸ-ի Ալավերդու լեռնամետալուրգիական գործարանի նախագծային փաստաթղթերը չեն ենթարկվել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Ընկերակցության 28.11.02թ. հարցմանը, ինչպես նշեցինք, պատասխան չի տրվել:

Եվ այսպես, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ բնապահականության նախարարությունն ընդունում է, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն «Մանեքս-Վալեքս» ԲԲԸ-ն պետք է ենթարկվի փորձաքննության, հայտնելով նաև, որ դեռևս 30.07.01թ-ին Ընկերությունը ներկայացրել է համապատասխան փաստաթղթեր, միեւնույն ժամանակ 30.07.01թ-ից ի վեր՝ ավելի քան 20 ամիս է ապօրինի անգործության է մատնվել եւ «Մանեքս-Վալեքս» ԲԲԸ-ի Ալավերդու լեռնամետալուրգիական գործարանի նախագծային փաստաթղթերը նախարարության կողմից չեն ենթարկվում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եւ վերջինս շարունակում է գործունեություն իրականացնել, այն դեպքում, երբ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածն ուղղակի սահմանում է, որ. «Արգելվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանը ենթակա նախատեսվող գործունեության իրականացում առանց դրական փորձաքննության եզրակացության», այլեւ ՀՀ բնապահականության նախարարությունը խախտել է օրենքի 8-ից 11-րդ հոդվածներում նախատեսված ժամկետները, որոնց համաձայն. «Փորձաքննական եզրակացությունը ձեռնարկողին է տրվում փաստաթղթերը ստանալուց առնվազն 120-օրյա ժամկետում» (տես հոդված 11-ի 2-րդ կետը), իսկ 9-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն լիազորված մարմինը կարող է նշված ժամկետը երկարացել, բայց ոչ ավել, քան 180 օր:

Ակնհայտ է, որ ՀՀ բնապահականության նախարարությունը խախտել է օրենքի պահանջները ինչպես ժամկետների, այնպես էլ 2-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի մասով, որի համար օրենքի 17-րդ հոդվածի համաձայն պատասխանատու է, որպես լիազորված մարմին:

Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածի (Ելք դեպի Էկոլոգիական տեղեկատվություն) եւ 9-րդ հոդվածի (Արդարադատության մատչելիությունը), ՀՀ քաղ. դատ.



օրենսգրքի 26-րդ գլխի պահանջները՝ վիճարկում ենք ՀՀ բնապահպանության նախարարի անգործությունը եւ խնդրում ենք պարտավորեցնել սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 20 օրում ավարտել օրենքով նախատեսված փորձաքննության գործընթացը եւ տասնօրյա ժամկետում մեզ տրամադրել փորձաքննական եզրակացությունը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված կարգով վիճարկում ենք ՀՀ բնապահպանության նախարարության անգործությունը եւ

### ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ՝

1. Պարտավորեցնել ՀՀ բնապահպանության նախարարությանը սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 10 օրում ըստ էության պատասխանել «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ի նախագահ Էդ. Բաղդասարյանի 28.11.02թ. թիվ 28-հ3 գրությանը՝ տրամադրելով պահանջվող տեղեկատվությունը:

2. Պարտավորեցնել ՀՀ բնապահպանության նախարարությանը սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 20 օրում ավարտել օրենքով նախատեսված փորձաքննության գործընթացը եւ տասնօրյա ժամկետում «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ին տրամադրել փորձաքննական եզրակացությունը:

Կից ներկայացնում ենք՝

1. «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ի նախագահ Էդ. Բաղդասարյանի գրություններն ուղղված ՀՀ բնապահպանության նախարարին,
2. ՀՀ բնապահպանության նախարարության պատասխանները,
3. Պետ. տուրքի անդորրագիր,
4. Լիազորագիր

Դիմող՝

«Հետաքննող լրագրողների ընկերակցություն»

ՀԿ նախագահ՝

Է. Բաղդասարյան

Ներկայացուցիչ՝

Կ.Մեժլումյան

## ՎՃԻՌ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների  
առաջին ատյանի դատարանը**

<p><b>Նախագահությամբ՝ դատավոր՝</b>  <b>Քարտուղարությամբ՝</b>  <b>Մասնակցությամբ՝</b>  <b>Դիմող՝</b>  <b>Դիմողի ներկայացուցիչ՝</b>  <b>Պատասխանողի ներկայացուցիչ՝</b></p>	<p><b>Ս. Արամյանի</b>  <b>Ս. Ավագյանի</b>    <b>Է. Բաղդասարյանի</b>  <b>Կ. Մեծլումյանի</b>  <b>Ա. Համբարձումյանի</b></p>
--	--

**2003թ. մայիսի 16-ին**

Դռնբաց դատական նիստում դատարանում քննեց քաղաքացիական գործն ըստ դիմումի «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ Բնապահպանության նախարարության՝ պաշտոնատար անձի անգործությունը վիճարկելու մասին: Դատաքննության ընթացքում կողմերը դատարանին ներկայացրին հաշտության համաձայնություն եւ խնդրեցին այն հաստատել:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 7-րդ կետով, 130-133 հոդվածներով՝ դատարանը

### ՎՃՈՒՑ

Հաստատել կողմերի միջեւ 16.05.2003թ կնքված հաշտության համաձայնությունը հետեւյալ տեքստով.

«Թիվ 2-2666 քաղ. գործով դիմող «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն, ի դեմս նախագահ Էդ. Բաղդասարյանի եւ պատասխանող ՀՀ Բնապահպանության նախարարությունն, ի դեմս ներկայացուցիչ Ա. Համբարձումյանի, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ, 109-րդ, 110-րդ եւ 133-րդ հոդվածներով եւ ի գիտություն ընդունելով պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձեր «Արմենիան Զափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Էյ-Սի-Փի» ՓԲԸ) գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի 7.05. 2003թ. թիվ Գա-052 գրությունը՝

- «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի ներկայացուցչի բացատրություն առ այն, որ փաստաթղթերի ամբողջական լինելու դեպքում պատրաստ են տալ փորձագիտական եզրակացություն,
- Երրորդ անձերի միջեւ 06.05.02թ.-ին կնքված թիվ 48 պայմանագիրը, կնքում ենք սույն հաշտության համաձայնությունը հետեւյալի մասին՝

ՀՀ Բնապահպանության նախարարությունը պարտավորվում է «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ի 07.05.03թ գրությունում նշված փաստաթղթերը ստանալուց հետո ութսուն օրյա ժամկետում ավարտել փորձաքննության գործընթացը եւ տալ համապատասխան եզրակացություն՝ դրա օրինակը տրամադրելով «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ին:

Հաշտության համաձայնության պայմանով «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն հրաժարվում է դիմումից (հայցից):

ԴԱՏԱԿՈՐ՝

Ս. ԱՐԱՄՅԱՆ

**ՊՈՐՑ 15.****Հետաքննող լրագրողների ընկերակցությունն***ընդդեմ***Երեւանի ֆալսափաստարանի**

## **Գործի համառոտ նկարագրությունը**

2003թ. հոկտեմբերի 2-ին «Յետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն դիմել էր Երեւանի քաղաքապետ Երվանդ Չախարյանին՝ խնդրելով թույլ տալ ծանոթանալ ՀՀ ազգային օպերայի եւ բալետի թատրոնի տարածքում նախկին քաղաքապետեր Վանո Սիրադեղյանի, Սուրեն Աբրահամյանի, Ալբերտ Բազեյանի եւ Ռոբերտ Նազարյանի՝ 1997-2003թ.թ. այդ տարածքում կատարված հողհատկացումներին վերաբերող որոշումներին: 2003թ. նոյեմբերի 12-ին (դիմումը ստանալուց 40 օր անց) Երեւանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Կոչեցյանի, պատճառաբանելով, որ «...անհրաժեշտ է ճշտել՝ ինչ կոնկրետ տեղեկություններ եք ակնկալում ստանալ Երեւանի քաղաքապետարանից», հնարավորություն չի ընձեռել ՀԿ-ին ծանոթանալու նախկին քաղաքապետերի ընդունած որոշումներին:

2004թ. ապրիլի 14-ին ընկերակցությունը դիմեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ գտնելով, որ Երեւանի քաղաքապետի անգործության պատճառով խախտվել է ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասը, Օրհուսի կոնվենցիայի մի շարք հոդվածներ, «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 27-րդ հոդվածներն, ինչպես նաեւ «Զաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի հոդվածների դրույթները: Ընկերակցությունը դատարանից խնդրեց պարտավորեցնել Երեւանի քաղաքապետարանին տրամադրել պահանջվող փաստաթղթերի պատճենները:

2004թ. մայիսի 17-ին քաղաքապետարանի աշխատակազմը դատարան ներկայացրեց պաշտոնական պատասխանը՝ ներկայացնելով տեղեկատվություն տալու նախապայման, այն է՝ կոնկրետացնել, թե որ սուբյեկտների համար է ակնկալվում տեղեկություն ստանալը:

2004թ. հունիսի 21-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը (դատավոր Գ. Կարախանյան) վճռեց մերժել «Յետաքննող լրագրողների ընկերակցության» հայցն ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի:

Ընկերակցությունը առաջին ատյանի դատարանի վճիռը բողոքարկեց Զաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան: Վերջինս եւս մերժեց լրագրողների հայցը, սակայն 29.10.2004թ.-ին Վճռաբեկ դատարանը բեկանեց Վերաքննիչ դատարանի որոշումը եւ այն ուղարկեց նոր կազմով քննության:

2004թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ Զաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը նոր կազմով՝ Վարդան Ավանեսյանի նախագահությամբ, քննեց կազմակերպության հայցն ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի: Նիստի ըն-

թացքում «Ջետաքսնոդ լրագրողները» պնդեցին քաղաքապետարանի անգործությունն անվավեր ճանաչելու եւ պահանջված տեղեկությունները տրամադրելու մասին հայցապահանջը: Վերաքննիչ դատարանը որոշեց հայցն ամբողջությամբ բավարարել:

Երեւանի քաղաքապետարանը վճարեկ բողոք ներկայացրեց ՀՀ վճարեկ դատարան: 2005թ. փետրվարի 10-ին վճարեկ դատարանը, մնալով իր կարծիքին, վերաքննիչ դատարանի վճիռը թողեց անփոփոխ: Այսպիսով, Երեւանի քաղաքապետարանը պարտավորվեց «Ջետաքսնոդ լրագրողներ»-ին տրամադրել նախկին քաղաքապետերի՝ 1997-2003թթ. բոլոր որոշումները, որոնք վերաբերում են Օպերայի հանրային այգու տարածքների հողահատկացումներին: Փաստաթղթերի պատճենները տրամադրվեցին 2006թ. փետրվարին:

## Գործի նյութերը

### Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանին

**Հայցվոր՝** «Յետաքննող լրագրողների ընկերակցություն»  
ՀԿ Նախագահ՝ Էդիկ Բաղդասարյան  
Մաշտոցի 2, բն 40, հեռ. 523571, 563149

**Պատասխանող՝** Երեւանի քաղաքապետարանի  
Երեւան 15, Գրիգոր Լուսավորիչ 13

### ԴԻՄՈՒՄ

#### Պաշտոնատար անձի անգործությունը վիճարկելու մասին

«Յետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ի լրագրողները լրագրողական հետաքննություն են իրականացնում Երեւանի քաղաքապետարանի կողմից Երեւանի կանաչ տարածքներում հողհատկացումների, դրանց իրական տերերի եւ այնտեղ կառուցվող ապօրինի շինությունների վերաբերյալ: Շարքի 7 հոդված տպագրվել է «Առավոտ» օրաթերթում՝ «Մենք գիտենք՝ ովքեր են տերերը» խորագրով:

Ընկերակցության նախագահ, լրագրող Էդ. Բաղդասարյանը 02.10.03թ. թիվ 38-հ4 գրությամբ, հաշվի ամենլով ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եւրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասը, «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «ՉԼՄ-ի մասին» ՀՀ օրենք) 4-րդ եւ 27-րդ, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 4-րդ, 6-րդ, «Շրջակա միջավայրի հարցերի ամենուրեքամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» Կոնվենցիայի (այսուհետ՝ Օրիուսի կոնվենցիա) 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ այլ հոդվածներին, դիմել է Երեւանի քաղաքապետ Երվանդ Չախարյանին հետեւյալ գրությամբ. «Յետաքննող լրագրողների ընկերակցությունը հոդվածաշար է պատրաստում ՀՀ ազգային օպերայի եւ բալետի թատրոնի տարածքում սրճարանների վերաբերյալ:

Խնդրում եմ թույլատրել տեղում ծանոթանալ նախկին քաղաքապետեր Վառնա Սիրադեղյանի, Սուրեն Աբրահամյանի, Ալբերտ Բազեյանի եւ Ռոբերտ Նազարյանի 1997-2003 թվականներին այդ տարածքին վերաբերող ընդունած որոշումներին: Երեւանի քաղաքապետի անգործության պատճառով խախտվել է ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եւրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաեւ «Մամու-

լի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 27-րդ հոդվածներով ամրագրված՝ զանգվածային լրատվության միջոցի եւ լրագրողի՝ ցանկացած պետական մարմնից, դրանց ղեկավարներից տեղեկություններ ստանալու իրավունքը, քաղաքապետն իր անգործությամբ խանգարել է հետաքննող լրագրողին իր մասնագիտական պարտականությունները կատարել՝ պահպանվող «Մամուլի եւ Չանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով, որի համաձայն. «Արգելվում է խանգարել լրագրողին՝ իր մասնագիտական պարտականությունները կատարելիս», խախտվել է նաեւ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի, 4-րդ, 5-րդ, 6-րդ հոդվածը, 40 օր չի ստացվել նշված գրության պատասխանը: Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, Օրիուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի պահանջները՝ վիճարկում ենք Երեւանի քաղաքապետի անգործությունը եւ խնդրում ենք պարտավորեցնել սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 5 օրում ըստ Էության պատասխանել «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ի նախագահ Էդ. Բաղդասարյանի 28.11.02թ. թիվ 28-հ3 գրությանը՝ տրամադրելով պահանջվող տեղեկատվությունը: Հայցը բխում է քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի պահանջներից:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված կարգով վիճարկում ենք Երեւանի քաղաքապետի անգործությունը եւ

### ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ՝

Պարտավորեցնել Երեւանի քաղաքապետին սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 5 օրում ըստ Էության պատասխանել «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ի նախագահ Էդ. Բաղդասարյանի 02.10.03թ. թիվ 38-հ4 գրությանը՝ տրամադրելով պահանջվող տեղեկատվությունը:

Կից ներկայացնում ենք՝

1. «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ի նախագահ Էդ. Բաղդասարյանի գրություններն ուղղված Երեւանի քաղաքապետին,
2. Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Կոչեցյանի 12.11.03թ. N 03/18-5676 պատասխանը,
3. Պետական տուրքի անդորրագիր:

ԴԻՍՈՂ՝

«Հետաքննող լրագրողների ընկերակցություն»  
ՀԿ նախագահ՝

Է. Բաղդասարյան  
8.01.04թ.



Գործ 04-3260

2004թ.

**Վ Ճ Ի Ռ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը հետեւյալ կազմով՝**

<b>Նախագահող դատավոր՝</b>	<b>Վ. Ավանեսյանի</b>
<b>Դատավորներ՝</b>	<b>Ա. Խառատյանի, Տ. Սահակյանի</b>
<b>քարտուղարությամբ՝</b>	<b>Գ. Վարդանյանի</b>
<b>Մասնակցությամբ՝</b>	
<b>Դիմումատու՝</b>	<b>Էդ. Բաղդասարյանի</b>
<b>Դիմումատուի ներկայացուցիչ՝</b>	<b>Ա. Չոիրաբյանի</b>

2004թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանում դռնբաց դատական նիստում վերստին քննելով քաղաքացիական գործն ըստ «հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության նախագահ Է. լրագրող Էդ. Բաղդասարյանի դիմումի՝ ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի՝ անգործությունը վիճարկելու պահանջի մասին

**Պ Ա Ր Չ Ե Ց**

Դիմումատուն, դիմելով դատարան, հայտնել է, որ Երեւանի քաղաքապետը չի տրամադրել ՀՀ ազգային օպերայի եւ բալետի թատրոնի մերձակա հողատարածքների հատկացումների վերաբերյալ 1997թ. մինչեւ 2003թ. ընդունված որոշումների մասին տեղեկություններ: Խնդրել է անվավեր ճանաչել Երեւանի քաղաքապետարանի անգործությունը եւ պարտավորեցնել տրամադրել նշված տեղեկությունները:

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 21.06.04թ. վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.09.04թ. վճռով դիմումը մերժվել է: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերի պալատի 29.10.04թ. որոշմամբ բեկանվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.09.04թ. վճիռը, եւ գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը պատշաճ կերպով ծանուցվել է դատական նիստի օրվա եւ ժամի մասին, սակայն չի ներկայացել դատական նիստին: Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, գործը քննեց պատասխանող Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցչի բացակայությամբ:

Լսելով դիմողին եւ նրա ներկայացուցչին, ծանոթանալով գործի նյութերին, ուսումնասիրելով, վերլուծելով եւ գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները՝ դատարանը գտավ, որ հայցը պետք է բավարարել հետեւյալ պատճառաբանությամբ:

Գործի նյութերով հիմնավորված է այն փաստը, որ ՀՀ ազգային օպերայի եւ բալետի թատրոնի մերձակա հողատարածքների հատկացումների վերաբերյալ 1997թ. մինչեւ 2003թ. ընդունված որոշումների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու մասին դիմողի 02.10.03թ., 09.06.04թ. գրություններին պատասխանողի կողմից տրվել են ոչ լիարժեք պատասխաններ: 22.12.2003թ. թիվ 03/7-7226 հ (գ/թ 7) պատասխանից երեւում է, «որ ընկերության կողմից մատնանշված «Մամուլի եւ գանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 27-րդ հոդվածները սահմանում են լրագրողի իրավունքները, բայց ոչ սահմանում պաշտոնատար անձի պարտականությունները: Պետք է նշել նաեւ, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը նույնպես պարտադիր պայմաններ տեղեկություններ տրամադրելու չի սահմանում: Միաժամանակ հայտնվել է, որ Երեւանի քաղաքապետարանը երբեւիցե չի առարկել լրատվության տրամադրումը, իսկ ընկերակցության կողմից բարձրացված հարցերի ոչ կոնկրետության պարագայում Երեւանի քաղաքապետարանը հնարավոր չի համարել տվյալների տրամադրումը», իսկ 01.07.04թ. գրությամբ պարզաբանվել է, որ «հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից վիճարկվող հարցն այժմ դատական քննության առարկա է, եւ ներկայումս գործի քննությունը գտնվում է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վարույթում, հարցին հնարավոր կլինի անդրադառնալ դատական քննության ավարտից հետո»(գ.թ. 8,10,17,18,74,76):

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում: Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժո-

դովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

1998թ. հունիսի 23-25-ին Դանիա, Օրիուսում ընդունված «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի 1-ին կետի համաձայն՝ կոնվենցիայի նպատակն է «ներկայիս եւ ապագա սերունդների յուրաքանչյուր մարդու իրավունքի՝ ապրել շրջակա միջավայրում, որը բարենպաստ է նրա առողջությանը եւ բարեկեցության համար, պաշտպանությանը աջակցելու համար, յուրաքանչյուր կողմը երաշխավորում է տեղեկատվության մատչելիության իրավունք, հասարակայնության՝ որոշումների ընդունման գործընթացի մասնակցության եւ արդարադատության մատչելիության իրավունք՝ շրջակա միջավայրի հետ կապված հարցերով, սույն կոնվենցիայի դրույթներին համապատասխան», իսկ 4-րդ կետի համաձայն՝ «յուրաքանչյուր կողմը ապահովում է, որ սույն հոդվածի ներքո բերված կետերին հետեւելու դեպքում, պետական մարմիններն ի պատասխան Էկոլոգիական տեղեկատվություն տրամադրելու խնդրանքի, տրամադրելին հասարակայնությանը, ազգային օրենսդրության շրջանակներում այդպիսի տեղեկատվություն»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը դա տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ այն տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացումն է, իսկ 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

«Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ զանգվածային լրատվությունը դա սահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածումն է, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից՝ փնտրելու, ստանալու եւ տարածելու տեղեկություններ ու գաղափարներ: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ արգելվում է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը:

«Երեւան քաղաքում պետական կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 06.05.97թ. թիվ ՆՀ-727 հրամանագրի 1.13 կետի «ե», 1.15 կետի «բ» եւ «գ» ենթակետերի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 75-րդ եւ 76-րդ հոդվածների համաձայն Երեւան քաղաքում հողի հետ կապված բոլոր խնդիրների լուծումը բացառապես վերապահված է Երեւանի քաղաքապետին, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվությունը ծառայողական, առետրային կամ բանկային գաղտնիք է, եթե նա երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առետրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցման համակարգը բաց է, իսկ գույքի եւ դրա նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններից կարող են օգտվել բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձինք:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Լինգեսս ընդդեմ Ավստրիայի գործով դատարանի 08.07.86թ. վճռով պարզաբանվել է, որ «չնայած մամուլը չպետք է անցնի inter alia «այլոց հեղինակության պաշտպանության» համար որոշված սահմանները, այնումենայնիվ, նրա վրա է դրված քաղաքական հարցերով, ինչպես նաեւ հասարակական հետաքրքրություններկայացնող այլ հիմնախնդիրներին առընչվող տեղեկատվության եւ գաղափարների տարածման խնդիրը, ապա հանրությունն իր հերթին ունի այդպիսիք ստանալու իրավունք (տես՝ mutatis mutandis «Սանդի թայմս»-ի գործով վերոհիշյալ վճիռը, կետ 65)» (Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.), Երեւան 2002թ., էջ 563):

Վերը նշված պատճառաբանությունները եւ հիմնավորումները դատարանի համար հիմք են հանդիսանում «Հետաքննող լրագրողների ընկերության» հասարակական կազմակերպության դիմումն ամբողջությամբ բավարարելու համար»:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածով՝ դատարանը

### Վ Ճ Ո Ե Ց

«Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության դիմումը բավարարել:

Անվավեր ճանաչել Երեւանի քաղաքապետարանի կողմից 1997-2003թ.թ. ընթացքում ՀՀ ազգային օպերայի եւ բալետի թատրոնի մերձակա տարածք-

ներից հողահատկացումների մասին որոշումների վերաբերյալ տեղեկություններ չտրամադրելու անգործությունը:

Պարտավորեցնել Երեւանի քաղաքապետարանին «Ջետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպությանը տրամադրել տեղեկություններ 1997-2003թ.թ. Երեւանի քաղաքապետարանի կողմից ընթացքում ՀՀ ազգային օպերայի եւ բալետի թատրոնի մերձակա տարածքներից հողահատկացումների մասին որոշումների վերաբերյալ:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության կողմից՝ պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանին 15 օրվա ընթացքում:

ՆԱԽԱԳԱՅՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ  
Ա. ԽԱՌԱՏՅԱՆ, Տ. ՍԱՅԱԿՅԱՆ

**ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան**  
**Քաղաքացիական գործ 04-3260, 2004թ.**

**Դատավորներ՝**  
**Վ. Ավանեսյան**  
**Ա. Խառատյան**  
**Տ. Սահակյան**

**ՀՀ վճռաբեկ դատարան**  
**Քաղաքացիական գործ 3-290 (ՎԴ), 2005թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն**

**Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի**  
**քաղաքացիական եւ տնտեսական գործերի պալատը**

**Նախագահությամբ՝**                    **Ա. Մկրտումյանի**

**Դատավորներ՝**  
**Ս. Սարգսյան**  
**Հ. Գեւորգյան**  
**Ս. Գյուրջյան**  
**Վ. Աբեյան**

2005թ. փետրվարի 10-ին

Դռնբաց դատական նիստում քննեց Երեւանի քաղաքապետի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 01.10.04թ. վճռի դեմ ըստ «Հետաքննող լրագրողների ընկերության» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) դիմումի՝ Երեւանի քաղաքապետարանի (այսուհետ՝ քաղաքապետարան) անգործությունը վիճարկելու պահանջի մասին:

Դիմելով դատարան՝ կազմակերպությունը հայտնել է, որ Երեւանի քաղաքապետը չի տրամադրել ՀՀ ազգային օպերայի եւ բալետի թատրոնի մերձակա հողատարածքների հատկացումների վերաբերյալ 1997թ. մինչեւ 2003թ. ընդունված որոշումների մասին տեղեկություններ: Խնդրել է անվավեր ճանաչել Երեւանի քաղաքապետարանի անգործությունը եւ պարտավորեցնել տրամադրելու նշված տեղեկությունները:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 01.12.04թ. վճռով դիմումը բավարարվել է: Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական իրավունքի խախտման հիմքով: Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիա-

կան օրենսգրքի 12-րդ եւ 163-րդ հոդվածների պահանջները: Բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 01.12.04թ. վճիռը եւ գործն ուղարկել նոր քննության:

Պալատը վերանայելով դատարանի վճիռը, վերլուծելով գործի նյութերը եւ բողոքի փաստարկները, գտավ, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 01.12.04թ. վճիռը պետք է թողնել անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

Գործի քննությամբ պարզվեց, որ վերաքննիչ դատարանը, պարզելով գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները եւ գնահատելով գործում առկա ապացույցները, վճիռ կայացնելիս պատճառաբանել է, որ «ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ նեռարյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք:

Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից», «այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով: 1998թ. հունիսի 23-25-ին Դանիա, Օրիոսում ընդունված «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի 1-ին կետի համաձայն՝ կոնվենցիայի նպատակն է «ներկայիս եւ ապագա սերունդների յուրաքանչյուր մարդու իրավունքի՝ ապրել շրջակա միջավայրում, որը բարենպաստ է նրա առողջությանը եւ բարեկեցության համար, պաշտպանությանը աջակցելու համար, յուրաքանչյուր կողմը երաշխավորում է տեղեկատվության մատչելիության իրավունք, հասարակայնության՝ որոշումների ընդունման գործընթացի մասնակցության եւ արդարադատության մատչելիության իրավունք՝ շրջակա միջավայրի հետ կապված հարցերով,

սույն կոնվենցիայի դրույթներին համապատասխան», իսկ 4-րդ կետի համաձայն՝ «յուրաքանչյուր կողմը ապահովում է, որ սույն հոդվածի ներքո բերված կետերին հետեւելու դեպքում, պետական մարմիններն ի պատասխան էկոլոգիական տեղեկատվություն տրամադրելու խնդրանքի, տրամադրել են հասարակայնությանը, ազգային օրենսդրության շրջանակներում այդպիսի տեղեկատվություն»: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը դա տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ այն տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացումն է, իսկ 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

«Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ զանգվածային լրատվությունը դա սահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածումն է, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից՝ փնտրելու, ստանալու եւ տարածելու տեղեկություններ ու գաղափարներ: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ արգելվում է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը: «Երեւան քաղաքում պետական կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 06.05.97թ. թիվ ՆՀ-727 հրամանագրի 1.13 կետի «ե», 1.15 կետի «բ» եւ «գ» ենթակետերի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 75-րդ եւ 76-րդ հոդվածների համաձայն՝ Երեւան քաղաքում հողի հետ կապված բոլոր խնդիրների լուծումը բացառապես վերապահված է Երեւանի քաղաքապետին, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվությունը ծառայողական, առետրային կամ բանկային գաղտնիք է, եթե նա երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առետրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցման համակարգը բաց է, իսկ գույքի եւ դրա նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններից կարող են օգտվել բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձինք:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Լինգենս ընդդեմ Ավստրիայի գործով դատարանի 08.07.86թ. վճռով պարզաբանվել է, որ «չնայած մամուլը չպետք է անցնի inter alia «այլոց հեղինակության պաշտպանության» համար որոշված սահմանները, այնուամենայնիվ, նրա վրա է դրված քաղաքական հարցերով, ինչպես նաեւ հասարակական հետաքրքրություն ներկայացնող այլ հիմնախնդիրներին առնչվող տեղեկատվության եւ գաղափար-



ների տարածման խնդիրը, ապա հանրությունն իր հերթին ունի այդպիսիք ստանալու իրավունք (տես՝ mutatis mutandis «Սանդի թայմս»-ի գործով վերոհիշյալ վճիռը, կետ 65)» (Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.), Երեւան 2002թ., էջ 563): Վերը նշված պատճառաբանությունները եւ հիմնավորումները դատարանի համար հիմք են հանդիսանում «Յետաքննող լրագրողների ընկերություն» ՀԿ դիմումն ամբողջությամբ բավարարելու համար»:

Նման պայմաններում հիմնավոր չեն նյութական իրավունքի խախտման մասին վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները, քանի որ դրանք մանրամասն հերքված են վերաքննիչ դատարանի վճռում նշված փաստարկներով: Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ եւ 218-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է գործում առկա բոլոր ապացույցները, վճռում նշված են դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները եւ այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետեւությունները, ինչպես նաեւ այն օրենքները, որոնցով ղեկավարվել է դատարանը վճիռ կայացնելիս (գ.թ. 105, 107) :

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239 հոդվածներով՝ պալատը

### Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 01.12.04թ. վճիռը թողնել անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ ենթակա է բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՅՈՂ՝  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա. ՄՄԿՐՏՈՒՄՅԱՆ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ  
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ  
Ս. ԳՅՈՒՐԶՅԱՆ  
Վ. ԱԲԵԼՅԱՆ

**ԳՈՐԾ 16.****Քաղաքացի Արսակ Խաչատրյանն***ընդդեմ***Վանաձորի «Խանդակ» համասիրության**

## Գործի համառոտ նկարագրությունը

2002թ-ի հունվարին Վանաձորի բնակիչ Արտակ Խաչատրյանի խնդրանքը՝ «Խանդակ» համատիրության կառավարչից տեղեկություն ստանալու մասին, մերժվեց կոմունալ վարձավճարի պարտք ունենալու պատճառով: Դրա հետևանքով 2001թ.-ի դեկտեմբերից քաղաքացու համար անհնար էր դարձել բնակարանի անվանափոխության գործընթացը: Արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վերջինս չկարողացավ կատարել բնակարանի անվանափոխությունը: Բնակության վայրի մասին համատիրությունից տեղեկանք չստանալու պատճառով քաղաքացին կրեց նյութական և բարոյական վնասներ:

Ծագած խնդրով Արտակ Խաչատրյանը երեք անգամ գրավոր դիմումով դիմել է «Խանդակ» համատիրություն, որոնց համատիրության կառավարիչ Վլոդյա Առուշանյանը պատասխանել է սահմանված կարգից ուշ՝ 130 օր անց՝ 27.11.2003-ին: Իսկ երրորդ դիմումին ընդհանրապես պատասխան չի տրվել:

2004թ. փետրվարի 2-ին Ա. Խաչատրյանը տեղեկատվության ազատության և մատչելիության իրավունքի խախտման մասին հայցով դիմեց Լոռու մարզի առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերականգնել տեղեկատվության ազատության իր իրավունքը, ընձեռել հնարավորություն օգտվելու տեղեկատվության մատչելիության իրավունքից, համատիրության կառավարչին պարտադրել տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իր գործունեությանն առնչվող տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները, դիմումներին պատասխանել սահմանված ժամկետներում և սահմանված կարգով և այլն:

12.07.05թ. դատարանը որոշեց քաղաքացու հայցային պահանջներից մասնակիորեն բավարարել վեցը, և Վանաձորի «Խանդակ» համատիրության կառավարիչ Վլադիմիր Առուշանյանին պարտավորեցնել.

1. Մշակել և համատիրության շենքի ներսում հրապարակել օրենսդրությամբ սահմանված կարգով իր կողմից տեղեկություն տալու կարգը, բոլորի համար տեսանելի վայրում փակցնելու նպատակով,
2. հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,
3. բյուջեն,
4. հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
5. քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը,
6. համատիրությունում ապահովել գրանցամատյանի առկայություն:

## Գործի նյութերը

### Լոռու մարզի առաջին ատյանի դատարան

Հայցվոր՝

Արտակ Խաչատրյան

ք. Վանաձոր, Չուխաջյան 11/15

Պատասխանող՝

Խանդակ» համատիրության  
կառավարիչ Վլադիմիր Առուշանյան

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

#### Տեղեկատվության ազատության եւ մատչելիության իրավունքի խախտման մասին

2002թ.-ի հունվար ամսից իմ խնդրանքը «Խանդակ» համատիրության կառավարիչ տեղեկություն ստանալու մասին մերժվել է կոմունալ վարձավճարի պարտք ունենալու պատճառով: Դրա պատճառով մեր բնակարանի անվանափոխության գործընթացը (2001թ-ի դեկտեմբեր՝ տատիկիս մահից հետո, ում անունով մեր բնակարանն էր) դարձել է անհնար: Արդյունքում օրենքով սահմանված ժամկետում չեմ կարողացել կատարել բնակարանի անվանափոխությունը: Տեղեկանքը «Հայջրմուղկոյուղի» չներկայացնելու պատճառով չեմ կարողացել մահացած տատիկիս համար ջրի վարձ չկուտակել: Այս բոլորը բերել են կյանքական եւ բարոյական վնասներ:

Մինչ օրս զրկված եմ իմ բնակության վայրի մասին համատիրությունից տեղեկանք ստանալու, համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Ծագած խնդրով երեք անգամ դիմել եմ գրավոր դիմումով «Խանդակ» համատիրություն, եւ իմ գրավոր դիմումներին (18.07.2003 եւ 8.08.2003) «Խանդակ» համատիրության կառավարիչ Վլոդյա Առուշանյանը պատասխանել է սահմանված կարգից ուշ՝ 130 օր անց՝ 27.11.2003-ին: Իմ մեկ այլ դիմումը՝ գրված 23.12.03-ին, մինչեւ 02.02.2004թ.-ը չի պատասխանվել:

Համատիրության կառավարիչը զրկել է ինձ օգտվելու .

- իմ հիմնարար իրավունքից, տեղեկատվական ազատությունից՝ չտրամադրելով համապատասխան տեղեկատվություն,
- սահմանված ժամկետում եւ սահմանված կարգով գրավոր դիմումի պատասխան ստանալու իրավունքից,
- տեղեկատվության մատչելիության ազատության իրավունքից:

Խախտվել է Զաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 19-րդը, Մարդու իրավունքների եւ հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածը, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի հոդված 4-7, 12 հոդվածները, «Քաղաքացիների դիմումների, բողոքների եւ առաջարկությունների քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 8-րդ հոդվածները, որոնց խախտման դեպքերում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 13-րդ եւ 14-րդ հոդվածները, «Քաղաքացիների դիմումների, բողոքների եւ առաջարկությունների քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը պատասխանատվության է կանչում օրինախախտին:

Խնդրում եմ վերականգնել իմ տեղեկատվության ազատության իրավունքը, ընձեռել հնարավորություն օգտվելու տեղեկատվական մատչելիության իրավունքից, սահմանված կարգով եւ սահմանված ժամկետում դիմումի պատասխան ստանալու հնարավորությունը, որը կնպաստի համատիրության կառավարման պրոցեսին իմ՝ որպես համատիրության անդամի մասնակցությունը: Նշվածները իրականություն դարձնելու համար պահանջում եմ համատիրության կառավարիչից ապահովել:

1. Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները,
  - տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանումը,
  - տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը,
  - տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը,
  - հրապարակայնությունը:
2. ՀՀ կառավարության սահմանած կարգով առաջնորդվելով՝ ապահովել համատիրության կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը:
3. Ցանկացած պահի ծանոթանալ համատիրության հետ կապված ինձ հետաքրքրող տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու համատիրության կառավարչին ստանալու այդ տեղեկությունը, բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերի:
4. Համատիրության կառավարչին պարտավորեցնել իր կողմից մշակել եւ հրապարակել օրենսդրությամբ սահմանված կարգով իր կողմից տեղեկություն տալու կարգը՝ այն համատիրության շենքի ներսում, բոլորի համար տեսանելի վայրում փակցնելու նպատակով:
5. Պարտադրել համատիրության կառավարչին իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրա-

վունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը, անհապաղ հրապարակել կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնել:

**6.** Համատիրության կառավարչին պարտադրել տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները,

- հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
- բյուջեն,
- գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
- հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
- աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
- շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
- հասարակական միջոցառումների ծրագրերը,
- քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
- աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման, կարգը, գները (սակագները),
- տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
- ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը:

**7.** Տրամադրել համատիրության կանոնադրությունը եւ ընդհանուր ժողովի արձանագրությունները ծանոթանալու նպատակով:

**8.** Տրամադրել քաղվածքներ համատիրության կանոնադրությունից եւ համատիրության ընդհանուր ժողովի արձանագրություններից:

**9.** Համատիրության 2003թ.-ի բյուջեն, մուտքերը եւ ծախսերը, իրականացված միջոցառումները:

**10.** Համատիրության 2004թ.-ի բյուջեի նախատեսվող մուտքերը եւ պլանավորվող միջոցառումները:

**11.** Համատիրությունում ապահովել գրանցամատյանի առկայություն:

**12.** Հարգել ՀՀ Սահմանադրությունը, Օրենսդրությունը, ՀՀ քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

**13.** Դիմումներին պատասխանել սահմանված ժամկետներում եւ սահման-

ված կարգով՝ 15 օրյա ժամկետում, մեկ այլ հիմնարկի հարցում անելու դեպքում մեկ ամսվա ընթացքում:

**14.** Դիմումին չպատասխանել զուտ պատասխան տալու համար, այսինքն պատասխանել դիմում ներկայացրած անձի բարձրացրած հարցերին, իրեն հետ չառնչվող հարցի դեպքում նշել հիմնարկը, ում կարող է դիմել քաղաքացին, իսկ նրա դիմումը մերժելու դեպքում նշել այն աղբյուրը, որով առաջնորդվել է. դա կարող է լինել համապատասխան օրենք, համատիրության կանոնադրություն:

**15.** Չկայացնել հակաօրենսդրական որոշումներ:

Կից ներկայացնում եմ.

1. «Խանդակ» համատիրության կառավարչին ուղղված իմ դիմումները (18.07.2003; 8.08.2003 եւ 23.12.2004),
2. «Խանդակ» համատիրության կառավարիչ Առուշանյանի գրավոր պատասխանների կրկնօրինակները՝ գրված 27.11.2003-ին եւ 02.02.2004-ին,
3. «Խանդակ» համատիրության հետ կապված Վանաձորի քաղաքապետին ուղղված 16.06.2003; 12.08.2003; 13.01.2004 դիմումների կրկնօրինակները,
4. Վանաձորի քաղաքապետարանի կողմից 05.05.2003; 10.07.2003; 15.08.2003; 22.01.2004; 26.01.2004-ին գրված դիմումների պատասխանների կրկնօրինակները,
5. Լոռու մարզի դատախազություն ուղղված 20.08.2003; 22.09.2003-ին գրավոր դիմումների կրկնօրինակները,
6. Լոռու մարզի դատախազության պատասխանները իմ դիմումներին՝ գրված 05.09.2003; 03.10.2003; 28.11.2003-ին,
7. ՀՀ դատախազություն ուղղված իմ դիմումների կրկնօրինակները՝ գրված 21.10.2003; 23.11.2003,
8. ՀՀ դատախազությունից 30.12.2003-ին ստացված դիմումիս պատասխանի կրկնօրինակը,
9. սահմանված կարգով եւ չափով պետական տուրքի վճարման անդորրագիր: Սահմանված կարգով եւ չափով պետական տուրքի վճարման փաստը ենթակա է վիճարկման:

Դիմող՝

Ա. Խաչատրյան

12.02.2004

ԳՈՐԾ ԹԻՎ 2/ 1330-2004թ.

**Վ Ճ Ի Ռ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Լռու մագի առաջին ատյանի դատարանը՝ հետեյալ կազմով.

Նախագահող դատավոր՝  
Քարտուղարությամբ՝  
Մասնակցությամբ՝  
Հայցվորներ՝

Վ. Հովհաննիսյանի  
Գ. Ասլամազյանի

Պատասխանող՝

Արտակ խաչատրյան,  
Ռուզաննա Սաքանյան  
«Խանդակ» համատիրության  
կառավարիչ Վլադիմիր Առուշանյանի

Դռնբաց դատական նիստում, Վանաձորում, 2004 թվականի հուլիսի 25-ին քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի Արտակ խաչատրյանի եւ Ռուզան Սաքանյանի ընդդեմ «Խանդակ» համատիրության կառավարիչ Վլադիմիր Առուշանյանի՝ տեղեկատվության ազատության եւ մատչելիության իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին:

Դատաքննությամբ եւ գործով ձեռք բերված ապացույցների հետազոտմամբ դատարանը

**Պ Ա Ր Զ Ե Ց**

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնել է. որ 2002թ. հունվար ամսից իր խնդրանքը «Խանդակ» համատիրության կառավարչից տեղեկություն ստանալու մասին մերժվել է՝ կոմունալ վարձավճարների պարտք ունենալու պատճառով: Դրա պատճառով իրենց բնակարանի անվանափոխության գործընթացը դարձել է անհնարին խնդիր: Արդյունքում ինքը օրենքով սահմանված կարգով չի կարողացել կատարել բնակարանի անվանափոխություն, իր տատիկի մահվան կապակցությամբ «Հայջրմուղկոյուղի» տեղեկանք չի կարողացել ներկայացնել, ինչի արդյունքում կուտակվել է ջրի վարձի պարտքեր: Այդ բոլորը իրեն բերել են նյութական եւ բարոյական վնասներ: Ինքը մինչ օրս զրկված է իր բնակության վայրի մասին համատիրությունից տեղեկանք ստանալու, համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորությունից: Վերոնշյալ ծագած խնդրով ինքը դիմել է «Խանդակ» համատիրություն, սակայն իր բոլոր գրավոր դիմումները պատասխանողի կողմից պատասխանվել է սահմանված կարգից ուշ ժամկետում՝ 130 օր անց, իսկ մեկ այլ դիմումը ընդհանրապես պատասխան չի ստացել:

Ելնելով վերոգրյալից՝ դատարանից պահանջում է պարտադրել համատիրության կառավարչին ապահովել:



1. տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները.
  - տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանումը,
  - տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը,
  - տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը, հրապարակայնությունը:
2. ՀՀ կառավարության սահմանված կարգով առաջնորդվելով ապահովել համատիրության կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը:
3. Ցանկացած պահի ծանոթանալ համատիրության հետ կապված իրեն հետաքրքրող տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու համատիրության կառավարիչին ստանալու այդ տեղեկությունը, բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերի:
4. Համատիրության կառավարիչին պարտավորեցնել իր կողմից մշակել եւ հրապարակել օրենսդրությամբ սահմանված կարգով իր կողմից տեղեկություն տալու կարգը, այն համատիրության շենքի ներսում, բոլորի համար տեսանելի վայրում փակցնելու նպատակով:
5. Պարտադրել համատիրության կառավարիչից իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը, անհապաղ հրապարակել կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնել:
6. Համատիրության կառավարիչին պարտադրել տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.
  - հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
  - բյուջեն,
  - գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
  - հաստիքացուցակները, ինչպես նաեւ՝ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
  - աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
  - շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
  - հասարակական միջոցառումների ծրագրերը,

քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,  
- աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման  
կարգը, գները (սակագները),  
- տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,  
- ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվ-  
յալները, այդ թվում՝ մերժման հիմքերը:

**7.** Տրամադրել համատիրության կանոնադրությունը եւ ընդհանուր ժողովի արձանագրությունները ծանոթանալու նպատակով:

**8.** Տրամադրել քաղվածքներ համատիրության կանոնադրությունից եւ համատիրության ընդհանուր ժողովի արձանագրություններից,

**9.** Համատիրության 2003թ.-ի բյուջեն, մուտքերը եւ ծախսերը, իրականացված միջոցառումները:

**10.** Համատիրության 2004թ.-ի բյուջեի նախատեսվող մուտքերը եւ պլանավորվող միջոցառումները:

**11.** Համատիրությունում ապահովել գրանցամատյանի առկայություն:

**12.** Հարգել ՀՀ Սահմանադրությունը, Օրենսդրությունը, ՀՀ քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

**13.** Դիմումներին պատասխանել սահմանված ժամկետներում եւ սահմանված կարգով՝ 15 օրյա ժամկետում, մեկ այլ հիմնարկի հարցում անելու դեպքում մեկ ամսվա ընթացքում:

**14.** Դիմումին չպատասխանել զուտ պատասխան տալու համար, այսինքն պատասխանել դիմում ներկայացրած անձի բարձրացրած հարցերին, իրեն հետ չառնչվող հարցի դեպքում նշել հիմնարկը, ում կարող է դիմել քաղաքացին, իսկ նրա դիմումը մերժելու դեպքում նշել այն աղբյուրը, որով առաջնորդվել է դա կարող է լինել համապատասխան օրենք, համատիրության կանոնադրություն:

**15.** Չկայացնել հակաօրենսդրական որոշումներ:

Դատաքննության ընթացքում հայցվորը պնդեց իր պահանջը՝ հավելելով նաեւ, որ Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոցի թիվ 11-15 հասցեի բնակարանը պատկանել է իր հանգուցյալ տատիկին, այնտեղ բնակվում է իր քրոջ եւ մոր հետ: Իր տատիկի մահից հետո իրենք դիմել են Վանաձորի նոտարական գրասենյակ, սակայն, այս պահի դրությամբ իրենք տան սեփականատեր չեն հանդիսանում: Ինքը համատիրությունից պահանջել է տեղեկություններ, սակայն, դրանք չեն տրամադվել: Բացի այդ, ինքը համատիրության անդամ է:

Գործի դատական քննության ընթացքում պատշաճ պատասխանող ճանաչվեց նաեւ Վանաձոր քաղաքի Չուխաշյան փողոցի թիվ 11-15 հասցեի բնակարանի բնակիչ Ռուզաննա Սաքանյանը:

Գործով մյուս հայցվորը՝ Ռուզաննա Սաքանյանը եւս պնդեց պահանջը:

Պատասխանողը չընդունեց հայցը, բացատրություն տալով այն մասին, որ առաջին հերթին հայցվորը համատիրության անդամ չէ, քանի որ տան սեփականատերը եղել է նրա տատիկը: Բացի այդ իրենք ժամանակին փակցրել են համատիրության կանոնակարգը, սակայն, այն պատից պոկել են: Իրենք 26.12.2003թ.-ին տարվա բյուջեին ծանոթանալու կապակցությամբ տեղյակ են պահել հայցվորին, սակայն նա չի ներկայացել: Խաչատրյանը մի անգամ եկել է իրենց մոտ, որպեսզի ծանոթանա բյուջեին, եւ քանի որ իրենք տարին փակում էին, ու շատ զբաղված էր հաշվապահը, իրենք ասել են, որ մի քանի օրից գա, սակայն նա չի ներկայացել: Բացի դա, իրենք հայցվորից պահանջել են իր տատիկի մահվան վկայականը, սակայն նա կրկին չի ներկայացել: Իրենք հայցվորին են տվել ջրմուղ ներկայացվելիք տեղեկանքը, իսկ յուրաքանչյուր ժողովին շենքի ներկայացուցիչը մասնակցում է:

Վերլուծելով կողմերի ներկայացրած փաստարկները եւ համադրության մեջ գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դատարանը հանգեց այն եզրակացության, որ հայցվորի պահանջը ենթակա է բավարարման մասնակիորեն՝ ներկայացված 15 հայցապահանջներից 6-ի մասով՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

- Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ մասի «ա» կետի եւ 18-րդ հոդվածի 1-ին մասի՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը կարող է իրագործվել նաեւ համատիրության միջոցով:

- Համաձայն նույն օրենքի 22-րդ հոդվածի՝ շենքի կառավարման մարմնի պարտավորությունն է շինության սեփականատերերին ներկայացնել ամսական, տարեկան եւ այլ հաշվետվություններ ու ծանուցումներ, տալ տեղեկանքներ, վարել գրանցամատյան, կազմել եւ քննարկման ներկայացնել ընդհանուր գույքի կառավարման պարտադիր նորմերի կատարումն ապահովող աշխատանքների նախահաշիվներ:

- Համաձայն նույն օրենքի 24-րդ հոդվածի՝ համատիրության անդամները պարտավոր են՝ ա) օրենքով եւ համատիրության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարներ եւ այլ վճարումներ, բ) չիրապարակել համատիրության գործունեության վերաբերյալ առեւտրային գաղտնիք ներկայացնող տեղեկություններ, բացի օրենքով սահմանված դեպքերից, գ) բարեխղճորեն կատարել իրենց վրա դրված պարտականությունները: Համատիրության անդամները

կրում են նաեւ սույն օրենքով եւ համատիրության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

- Համաձայն սույն օրենքի 23-րդ հոդվածի՝ համատիրության անդամներն իրավունք ունեն. ա) սույն օրենքով եւ համատիրության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել համատիրության կառավարմանը, բ) սույն օրենքով եւ համատիրության կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ համատիրության գործունեության վերաբերյալ, գ) ցանկացած ժամանակ դուրս գալ համատիրությունից:

Համատիրության անդամներն ունեն նաեւ սույն օրենքով եւ համատիրության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

Հայցվորի ներկայացրած հայցապահանջներից միայն 6 պահանջ է (1. Համատիրության կառավարչին պարտավորեցնել իր կողմից մշակել եւ հրապարակել օրենսդրությամբ սահմանված կարգով իր կողմից տեղեկություն տալու կարգը, այն համատիրության շենքի ներսում, բոլորի համար տեսանելի վայրում փակցնելու նպատակով, 2. հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները, 3. բյուջեն, 4. հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, 5. քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը, 6. Համատիրությունում ապահովել գրանցամատյանի առկայություն), որ ունեն առարկայացված բնույթ եւ ուղղակիորեն բխում են վերոթվարկյալ նորմերի էությունից, իսկ մյուս հայցապահանջները կամ ներառվում են նշված թվով 6-ի մեջ, կամ՝ վերացական ընդհանուր են, կամ անառարկա (մասնավորապես «չկայացնել անօրինական որոշումներ», «հարգել ՀՀ օրենքները, սահմանադրությունը, քաղաքացու հիմնարար ազատությունները», «դիմումներին չպատասխանել զուտ պատասխան տալու համար...» եւ այլն): Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ դատարանը քաղաքացու իրավունքների պաշտպանությունը կարող է իրագործել պարտապահին պարտավորությունը կատարելուն հարկադրելու միջոցով:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով՝ դատարանը

#### Վ Ճ Ռ Ե Ց

Բավարարել հայցը մասնակիորեն.

Վանաձորի «Խանդակ» համատիրության կառավարիչ Վլադիմիր Առուշանյանին պարտավորեցնել.

1. Մշակել եւ հրապարակել օրենսդրությամբ սահմանված կարգով իր կողմից տեղեկություն տալու կարգը, այն համատիրության շենքի ներսում, բոլորի համար տեսանելի վայրում փակցնելու նպատակով:
2. Հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները:
3. Բյուջեն:
4. Հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները:
5. Քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը:
6. Համատիրությունում ապահովել գրանցամատյանի առկայություն:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել քաղաքացիական գործերով ՀՀ վերաքննիչ դատարանում՝ 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Վ. ՅՈՎԱՆՆԻՍՅԱՆ

**ԳՈՐԾ 17.**

**Հելսինկյան ֆաղափացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակն**

*ընդդեմ*

**Վանաձորի ֆաղափադեսարանի**

## Գործի համառոտ նկարագրությունը

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակը 2003թ. վերջին դիմել էր Վանաձորի քաղաքապետարան՝ խնդրելով տրամադրել 2002-2003թթ. քաղաքապետի եւ ավագանու ընդունած որոշումների պատճենները, սակայն, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը մերժել էր կազմակերպության հարցումը՝ պատճառաբանելով, թե դրանց մեջ կան անհատական եւ ներքին իրավական ակտեր, որոնք, ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն, ուղարկվում են միայն դրանց հասցեատերերին: Քաղաքապետի ու ավագանու մյուս որոշումներին (տեղական տուրքերի ու վճարների տեսակներն ու դրույքաչափերը, բյուջեում վերաբաշխում անելու մասին որոշումներ) ծանոթանալու համար Սամվել Դարբինյանը խորհուրդ էր տվել սայել «Համայնքի իրավական ակտերի տեղեկագիրը», որը ՀՔԱ գրասենյակի աշխատակիցներն այդպես էլ չկարողացան ձեռք բերել անգամ քաղաքապետարանից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, գտնելով, որ քաղաքապետի մերժումն անհիմն է, այն բողոքարկեց Լոռու մարզի առաջին ատյանի դատարան: Առաջին դատական նիստի ժամանակ քաղաքապետարանը չառարկեց հայցի դեմ եւ խոստացավ տրամադրել պահանջված փաստաթղթերը: Դատավորը, քաղաքապետարանի եւ կազմակերպության ներկայացուցիչները պայմանավորվեցին ընդմիջել դատավարությունը մինչեւ քաղաքապետարանի կողմից փաստաթղթերի տրամադրումը: ՀՔԱ գրասենյակը գրավոր կրկնեց քաղաքապետին ուղղված իր խնդրանքը: Սակայն Վանաձորի քաղաքապետարանը դրժեց խոստումը՝ այս անգամ վկայակոչելով Վանաձորի ավագանու 2003թ. տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը սահմանող «Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ ընթացիկ տարվա համար» որոշումը եւ մեկ որոշման տրամադրման համար պահանջեց 1000 դրամ:

Քաղաքապետարանը կազմակերպությանն ուղղված պատասխան-գրությունում նշել էր, որ «պահանջվող տեղեկատվության տրամադրումը ենթադրում է քաղաքապետարանի աշխատակիցների լրացուցիչ աշխատանքներ եւ ծախսեր: Ձեր կազմակերպությունը պետք է վճարի այդ ծախսերը»: Նշված ժամանակահատվածում ավագանին ընդունել էր 2614 որոշում, հետեւաբար հասարակական կազմակերպությունը անհրաժեշտ որոշումները ձեռք բերելու համար, ըստ քաղաքապետարանի, պետք է վճարեր երկու միլիոն վեց հարյուր հազար դրամ: Քաղաքապետարանի այս պահանջը հակասում էր «ՏԱ մասին» ՀՀ օրենքի դրույթներին: Այն, ճիշտ է, նախատեսում է որոշակի վճար տեղեկության տրամադրման դիմաց:

Բայց միաժամանակ նշում է, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության տրամադրման համար գանձվող վճարը պետք է ներա-

ռի միայն այդ տեղեկության տրամադրման տեխնիկական ծախսերը (պատճենահանում, դիսկետի գին եւ այլն):

ՀԶԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարը Լոռու մարզի առաջին ատյանի դատարանին խնդրեց շարունակել իրենց հայցի քննությունն ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի: Երկրորդ դատական նիստի ժամանակ գրասենյակի ներկայացուցիչ Կարեն Թումանյանը հայտարարեց, որ քաղաքապետարանի ներկայացրած գումարի պահանջն անհիմն է ու անտրամաբանական, «քանի որ տեղեկատվությունը ստանալու համար քաղաքապետարանի՝ իբրեւ տեղական տուրք պահանջած 1000 դրամը միանգամյա դիմելու համար է եւ ոչ թե առանձին որոշումների հատկացման»:

Այս անգամ տեղեկատվության տրամադրման մերժումն արդարացնելու համար քաղաքապետարանի ներկայացուցիչ Գագիկ Սիմոնյանը լրացուցիչ «հիմնավորում» առաջադրեց: Ըստ նրա՝ պահանջվող որոշումների մի մասը հրապարակման ոչ ենթակա գաղտնիք է պարունակում. «Բացառված չէ, որ անհատ քաղաքացիներ եւ կազմակերպություններ, որոնց վերաբերում են այդ որոշումները, դեմ լինեն դրանց տարածմանը»:

Անշուշտ, օրենսդրությամբ պահպանվող գաղտնիքները եւ դրանք պարունակող փաստաթղթերը հրապարակման չեն: Բայց եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Քաղաքապետարանի ներկայացուցիչ Գագիկ Սիմոնյանի կարծիքով, հասարակական կազմակերպության պահանջը հնարավոր չէր բավարարել նաեւ այն պատճառով, որ ընդհանրացված բնույթ էր կրում: «Այլ հարց է, եթե գրասենյակը ներկայացներ կոնկրետ որոշումներ ստանալու պահանջ», -ասաց նա դատարանում: Սակայն ՀԶԱ Վանաձորի գրասենյակը չէր կարող իմանալ մեկ տարվա ընթացքում համայնքի ղեկավարի եւ ավագանու ընդունած բոլոր որոշումների անվանումները եւ դրանք անվանապես նշել, եւ քաղաքապետարանին ուղղված հարցման նպատակը հենց դա էր՝ ծանոթանալ այդ որոշումներին:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը բավարարեց ՀԶԱ Վանաձորի գրասենյակի հայցն ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի: Դատարանը Վանաձորի քաղաքապետարանին պարտավորեցրեց տրամադրել 2002-2003 թվականների համայնքի ղեկավարի եւ ավագանու որոշումների պատճենները, բացառությամբ այն որոշումների, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն հրապարակման ենթակա չեն: Եվ քաղաքապետարանի պահանջած երկու միլիոն վեց հարյուր հազար դրամի փոխարեն Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին պարտավորեցրեց վճարել ընդամենը 1000 դրամ՝ որպես տեղական տուրք:



## Պորժի նյութերը

**ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանին**

**Հայցվոր՝ «ՀԶԱ Վանաձորի գրասենյակ»  
հասարակական կազմակերպություն**  
հասցե՝ Տիգրան Մեծի 59, հեռ. 4-22-68

**Պատասխանող՝ Վանաձորի քաղաքապետարան**

### **Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ**

**2002-2003թթ. Վանաձորի ավագանու եւ քաղաքապետի կողմից  
ընդունված որոշումներն ստանալու պահանջի մասին**

Մեր կազմակերպությունը գործունեություն է իրականացնում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում եւ միաժամանակ քաղաքացիներին տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն: Իրավաբանական օգնություն իրականացնելու ընթացքում մեր կազմակերպությունը խնդիրներ է ունենում Վանաձոր քաղաքի ավագանու եւ համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումների բացակայության պատճառով: Դրանց բացակայությունն էապես խոչընդոտում է քաղաքացիներին լիարժեք իրաբանական օգնություն ցույց տալուն:

Հիմք ընդունելով.

1. ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածը («Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը՝ տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական ասիաներից»),
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետը, որում սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության եւ թափանցիկության սկզբունքները,
3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը:

27.10.2003թ. դիմել ենք Վանաձորի քաղաքապետին՝ ստանալու 2002-2003թթ. Վանաձորի քաղաքապետի եւ ավագանու ընդունված որոշումների պատճենները: Միաժամանակ, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կանոնների, նշել ենք փաստաթղթերի պատճենների տրամադրման համար անհրաժեշտ ծախսերը կազմակերպության կողմից փոխհատուցման մասին:

Սույն թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 079/7737 գրությամբ Վանաձորի քաղաքապետը, մերժելով նշված տեղեկատվության տրամադրումը, պատաս-

խանել է, որ համայնքի ղեկավարն իրավասություն չունի տրամադրել նշված որոշումները՝ հիմք ընդունելով ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 61-րդ հոդվածը: Քաղաքապետարանը, մերժելով, հիմք է ընդունել նաեւ նույն օրենքի 63-րդ հոդվածը, որը վերաբերում է համայնքի ղեկավարի եւ համայնքի ավագանու ընդունած իրավական ակտերի հրապարակայնությանը, համաձայն որի ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը պետք է հրապարակվեն «Համայնքի իրավական ակտերի տեղեկագրում»: /Մեր փորձերը՝ գնելու կամ ձեռք բերելու նշված տեղեկագրերը, անցան ապարդյուն, որովհետեւ դրանք վաճառքում չկան, նաեւ քաղաքապետարանի շենքի ներսում տեղակայված վաճառակետում/: Հարկ է նշել, որ տեղեկատվություն ստանալու իրավունքը պայմանավորված չէ տվյալ տեղեկատվության տպագրված լինելու փաստով:

Հարկ է նշել նաեւ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվության տրամադրման սահմանափակման միայն մեկ հանգամանք՝ եթե դրանք պարունակում են պետական կամ ծառայողական գաղտնիք: «Պետական կամ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով, մեր կողմից պահանջվող տեղեկատվությունը պետական կամ ծառայողական գաղտնիք գաղտնիք չի հանդիսանում:

Այսինքն, Վանաձորի քաղաքապետը հրաժարվել է տեղեկատվություն տրամադրել, որով խախտել է ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ կետը, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների 4-րդ, 6-րդ, 9-րդ եւ 10-րդ հոդվածները:

#### Ելնելով վերոգրյալից՝ դատարանին **խնդրում եմ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական հայցն ընդունել վարույթ եւ կատարել դատաքննություն եւ պատասխանող կողմին պարտադրել տրամադրելու 2002-2003թթ. Վանաձորի քաղաքապետի եւ ավագանու ընդունած բոլոր որոշումների պատճենները, որի համար մեր կազմակերպությունը պատրաստ է վճարել տպագրման եւ պատճենահանման ծախսերը:

Միեւնույն ժամանակ դատարանից խնդրում եմ պատասխանող կողմից բռնագանձել մեր կողմից մուծված պետական տուրքի գումարը՝ 4000 դրամ:

Կից ներկայացնում եմ՝

1. Հայցադիմումի պատճեն,
2. «ՀԶԱ Վանաձորի գրասենյակ» ՀԿ 27.10.03թ-ի Վանաձորի քաղաքապետին ուղղված գրության պատճեն,
3. Վանաձորի քաղաքապետի 30.10.2003թ-ի թիվ 079/7737 «ՀԶԱ Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությանն ուղղված գրություն-պատասխանի պատճեն,
4. Պետական տուրքի անդորագիրը:

Կազմակերպության նախագահ՝

Ա. Սաքունց

10.12.2003թ.

## Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը հետեւյալ կազմով՝**

<p><b>Նախագահող դատավոր՝</b>  <b>Քարտուղար՝</b>  <b>Հայցվորի ներկայացուցիչ՝</b>  <b>Պատասխանողի ներկայացուցիչներ՝</b></p>	<p><b>Մ. Հարությունյան</b>  <b>Ռ. Թամարյան</b>  <b>Կ. Թումանյան</b>  <b>Գ. Սիմոնյան</b>  <b>Վ. Հովնանյան</b></p>
---	--

2004թ. ապրիլի 30-ին Վանաձորում դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ հայցի «ՀԶԱ Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի՝ 2002-2003թթ. Վանաձորի ավագանու եւ քաղաքապետի կողմից ընդունված որոշումները ստանալու պահանջի մասին:

Դիմելով դատարան~ հայցվոր կազմակերպությունը հայտնել է, որ գործունեություն է իրականացնում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում եւ միաժամանակ քաղաքացիներին տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն, որոնց իրականացման ժամանակ խնդիրներ են ծագում՝ Վանաձորի ավագանու եւ քաղաքապետի կողմից ընդունված որոշումների բացակայության պատճառով: Դրանց բացակայությունը էապես խոչընդոտում է քաղաքացիներին լիարժեք իրավաբանական օգնություն ցույց տալուն:

27.10.2003թ. դիմել են պատասխանողին՝ ստանալու 2002-2003թթ. Վանաձորի ավագանու եւ քաղաքապետի կողմից ընդունված որոշումների պատճենները: Միաժամանակ, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ հայտնել են փաստաթղթերի պատճենների տրամադրման համար անհրաժեշտ ծախսերը կազմակերպության կողմից փոխհատուցման մասին: 30.10.2003թ. թիվ 079/7737 գրությամբ Վանաձորի քաղաքապետը, մերժելով նշված տեղեկատվության տրամադրումը, պատասխանել է, որ համայնքի ղեկավարը իրավասություն չունի տրամադրել նշված որոշումները՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածը: Պատասխանողը մերժելով՝ հիմք է ընդունել նաեւ նույն օրենքի 63-րդ հոդվածը, որը վերաբերվում է համայնքի ղեկավարի եւ համայնքի ավագանու ընդունած իրավական ակտերի հրապարակայնությանը, համաձայն որի՝ ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը պետք է հրապարակվեն «Համայնքի իրավական ակտերի տեղեկագրում»: Իրենց փորձերը՝ գնելու կամ ձեռք բերելու նշված տեղեկագրերն անցել են ապարդյուն, քանի որ դրանք վաճառքում չկան: Բացի այդ, տեղեկատվություն ստանալու իրավունքը պայմանավորված չէ տվյալ տեղեկատվության տպագրված լինելու փաստով: «Տեղեկատվության

ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվության տրամադրման սահմանափակման միայն մեկ հանգամանք՝ եթե դրանք պարունակում են պետական կամ ծառայողական գաղտնիք: «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով՝ իրենց կողմից պահանջվող տեղեկատվությունը նման գաղտնիք չի հանդիսանում:

Վանաձորի քաղաքապետը հրաժարվել է տեղեկատվություն տրամադրել, որով խախտել է ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետը, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 6-րդ, 9-րդ եւ 10-րդ հոդվածները:

Հայցվորի ներկայացուցիչ Կարեն Թումանյանը պնդեց հայցը, հայտնելով, որ չնայած այն հանգամանքին, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով պատասխանողը պարտավոր է տրամադրել վերոհիշյալ որոշումները, սակայն իրեն սկզբում մերժել են, իսկ հետագայում համաձայնվել՝ պահանջելով 2.600.000 դրամ, որը օրենսդրությամբ նախատեսված չէ: «ՏՀ մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ մինչեւ 10 տպագիր էջը տրամադրվում է առանց գանձումների, իսկ Վանաձորի ավագանու որոշմամբ՝ յուրաքանչյուր էջի համար գանձվում է 1000 դրամ, որպես տեղական տուրք: «Տեղական վճարների մասին» ՀՀ օրենքով տեղեկատվություն ստանալու համար վճար չի սահմանվում, այլ ընդամենը սահմանվում է տուրք: Փաստորեն, պատասխանողն իր պատասխաններում իրենց պահանջը չի մերժում, այլ պահանջում է չհիմնավորված գումար: Պահանջում է, որպեսզի պատասխանողը տրամադրի իրենց պահանջած որոշումները, բացառությամբ այն որոշումների, որոնք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ոչ ենթակա տեղեկություն են պարունակում:

Պատասխանողի ներկայացուցիչ, Վանաձորի քաղաքապետարանի քարտուղար Գագիկ Սիմոնյանը հայտնեց, որ հայցվորի ներկայացուցիչը գրավոր դիմել է իրենց՝ պահանջելով 2002-2003թթ. Վանաձորի քաղաքապետի եւ ավագանու որոշումները: Համաձայն Վանաձորի ավագանու 21.10.2003թ. թիվ 176Ն որոշման 9-րդ կետի՝ տրամադրվող որոշումների համար սահմանվել է տեղական վճար, ըստ որի հայցվորի կողմից պահանջվող որոշումները տրամադրելու համար նրանք պետք է վճարեն 2.600.000 դրամ: Այդ որոշումներում կան նաեւ գաղտնիք պարունակող որոշումներ, որոնց հրապարակայնությունն արգելված է օրենքով: Դեմ չեն, որպեսզի հայցվորին տրամադրվի պահանջվող որոշումները, բացառությամբ այն որոշումների, որոնք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն են պարունակում:

Պատասխանողի ներկայացուցիչ, Վանաձորի քաղաքապետարանի իրավաբան Վարդուհի Հովնանյանը հայտնեց, որ համամիտ է Գ. Սիմոնյանի բա-

ցատրության հետ եւ ավելացրեց, որ ներկայումս ՀՀ-ում չկա ընդունված որեւէ օրենսդրական ակտ, որտեղ նախատեսված լինի մարդու ընտանեկան, կյանքի գաղտնիությունը: ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական եւ ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից պաշտպանելու իրավունք: Սա նշանակում է, որ ոչ ոք իրավունք չունի առանց այդ անձի համաձայնության որեւիցէ մեկից պահանջել կամ տրամադրել նրա անձնական, ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ: Քաղաքապետարանը նման ինֆորմացիա կարող է տրամադրել քաղաքացու գիտությամբ: Չի առարկում, որպեսզի հայցվորին տրամադրվի պահանջվող որոշումները, բացառությամբ այն որոշումների, որոնք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն են պարունակում:

Գնահատության եւ վերլուծության ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները, դատարանը գտավ, որ հայցը ենթակա է բավարարման մասնակիորեն հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցվում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ/կամ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվությունը տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրավական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական եւ ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, իր պատիվը եւ բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք: Արգելվում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը եւ տարածելը: Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ:

Վերոգրյալի հիման վրա ու ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 138 հոդվածներով՝ դատարանը

### ՎՃՌԵՑ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կամակերպության հայցն ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի բավարարել: Պատասխանողին պարտավորեցնել տրամադրել հայցվորին 2002-2003թթ. Վանաձորի քաղաքապետի եւ ավագանու որոշումները, բացառությամբ այն որոշումների, որոնք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն են պարունակում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն (ԻԱԿ) հիմնադրվել է 2001թ.-ի հունիսի 1-ին, Երեւանում:

ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը եւ այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:



Հասցե՝ ք. Երեւան, Չարենցի 1բ  
Հեռ.՝ (37410) 578356  
Էլ. փոստ՝ [foi@foi.am](mailto:foi@foi.am)  
Էլ. հասցե՝ [www.foi.am](http://www.foi.am)

«Ասողիկ» տպագրատուն, տպաքանակ՝ 500: